

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 1 - 2  
JANV. - FEVRIER  
1931  
PARIS (France)

«ՀՈՅ ԵՆՂՈՓՈԽԻՈՎՈՆ ԳՈՂԵՆՈՎՑՈՒԹԵՆ» ՕՐԳԱՆ

## ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄԵԱԿ

Դեկտեմբեր երկուսին անցաւ տասը տարի Հայաստանի խորհրդայնացման օրից: Փետրուար 18-ին կը լրանայ Հայաստանի փետրուարեան յեղաշրջման տասնամեակը: Երկու տարեդարձեր՝ կապուած իրար հետ պատճառական սերտ կապերով, մէկը՝ հետեւանք միւսի: Երկու խորհրդաւոր վայրկեաններ հայոց նորագոյն պատմութեան մէջ:

Դեկտեմբեր երկուսը խորհրդանիշ է պարտութեան եւ անկման: Արտաքին պարտութեան: Ներքին հակասութիւնների, երկրի կենսական ուժերի սպառման կամ հայ ժողովրդի ազատութեան եւ անկախութեան կամքի պակասի հետեւանք չէր Հայաստանի խորհրդայնացումը: Հայ բոլշեւիկները Հայաստան մտան օտար սիւնների վրա յենւած, ուստի զրբրէջանեան եւ քեմալական թիւրք բանակների օժանդակութեամբ: Մայիսեան շարժումները, Ազրբէջանի յարձակումները Ղարաբաղ-Ղազախի շրջաններում, կարմիր բանակի ըսպանայիքներն ու դրոհները Հայաստանի սահմանների վրա, էնվեր ու Սալի փաշաների համաձայնութիւնը Բագրի Արեւելեան Ժողովուրդների Համագումարում Զինովիւի ու Ռադեկի հետ, բոլշեւիկ ու քեմալական զորահրամանատարութեանց ներդաշնակ գործունէութիւնը հայկական ճակատում, Հայաստանի վրա արշաւող Բեզգիմ Կարաբեքիբի բանակի ռազմաւորումն ու պարենաւորումը բոլշեւիկների կողմից, ուսական զէնքերով ու հագուստներով, հայ, վրացի ու ազրբէջանցի կոմունիստների միացեալ դաւերը մեր երկրի անկախութեան դէմ — ահա Հայաստանի խորհրդայնացման բուն ազդեւորները: Հայաստանի Հանրապետութիւնն ընկաւ, հայ ժողովուրդը տեղի աւել, որովհետեւ, որքան եւ բռուն լինէր վճռականութիւնն ու ազատութեան կամքը, ազգային ուժերը բաւական չէին դիմադրելու Բագրից եւ Անգորայից արշաւող բոլշեւիկ-քեմալական միացեալ զորսին:

Դեկտեմբեր երկուսը հայ ժողովրդի համար սգի օր էր: Այդ օրը խորտակեց նրա ամենաներակաւ տնչեքից մէկը. ա՛յն դադափարը, որի համար սերունդներ էին դոհել հերոսական պայքարի դաշտում: Թիւրքն ու բոլշեւիկը եկան նստեցին հայ ժողովրդի կրծքին, — եւ ազատութիւնը նահանջեց բռնութեան առջեւ: Անկախ Հայաստանը դարձաւ խորհրդային Հայաստան — խորտակւած յոյսերի ու ջախջախած երազների Հայաստան: Քաղաքական պարտութեան եւ անկման խորհրդանշան...

Ի՞նչ էին բերում իրենց հետ Ազրբէջանից ուսական թիւղանօթների պաշտպանութեան տակ Հայաստան խուժող հայ բոլշեւիկները, ի՞նչ էին խոստանում հայ ժողովրդին: Եւ ի՞նչ դուրս եկաւ նրանց խոստումներից:

Թիւրքը հասել էր Արաքսին ու Ախուրեանին: Հայ ժողովուրդը հաւատացած էր, որ բոլշեւիկ ուսուր կը գայ ու թիւրքին ճանապարհ կը դնէ դէպի յետ, կը հեռացնէ Կարսից եւ, թերեւ, ո՞վ գիտէ՝ նաև Էրզրումից: Սակայն, Յեղկոմը մտաւ Երեւան, շարաթներ ու ամիսներ անցան, բոլշեւիկների յաղթական հանդէսներն ու խրախճանքները չէին վերջանում, իսկ թիւրքը չէր էլ մտածում հեռանալու մասին. ամուր նստել էր Սուրբաբում ու Ալեքսանդրապոլում, խորհրդային իշխանութեան աչքի առջեւ թախնում ու կոտորում էր Շիրակի հայ գիւղացիութիւնը եւ արհամարհոս ու թշնամական լեզու էր բանեցնում հայ բոլշեւիկների հասցեին: Ժողովուրդը տեսաւ ու հասկացաւ, որ գուր էին իր յոյսերը. թիւրքը ուսից այլևս չէր վախնում: Ընդհակառակը, բոլշեւիկ ուսան էր քծնում նրա առջեւ, վախենում էր նրանից:

Սակայն դեպքան Լրգրանի եւ Հայաստանի կառավարութեան կողմից ստորագրւած դաշնագիրը ասում էր, որ Հայաստանը լինելու է անկախ խորհրդային հանրապետութիւն.

բոլշևիկները խոստացել էին յարգել հայ ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, ճանաչել էին Հայաստանի անկախութիւնը: Բայց չանցաւ մի քանի շաբաթ, եւ երեւաց, որ Հայաստանի Յեղկոմը, Կասեանի գլխաւորութեամբ, իրաւազուրկ ու ողորմելի իրաճեղ է ստեղ, եւ Հայաստանի իսկաւան իշխանութիւնը Երեւան — Բազու ուղիղ հեռագրաթերն է, որով հրահանգներ ու հրամաններ էր ուղարկում Արքանակի հրամանատարութիւնը՝ Կովկասի փոխարքայ Օրջնիկիձէի գլխաւորութեամբ: Հայաստանը դարձել էր նաեւեւ երկիր, ուսական մի աննչան գաւառ: Հայ ժողովուրդը տեսաւ ու ըմբռնեց, որ բոլշևիկները անկախութեան խոստումը խաբէութիւն էր լիկ:

Բոլշևիկները խոստացել էին խաղաղութիւն բերել Հայաստանին, ներքին անդորրութիւն եւ ախատելու հնարաւորութիւն. հայ ժողովուրդը վազուց տենչում էր խաղաղութեան: Բայց առաջին իսկ օրից Յեղկոմն ու Չեկան Հայաստանը վերածեցին քաղաքացիական պատերազմի դժոխքի. ծայր տեց անզուպ «Պատերազմային պայքար»: Հայաստանի բանտերը լեցեցին անմեղ բազմութիւններով: Գիւղը դարձաւ թայֆայական կռիւների ասպարէզ: Սկսեցին աքոռներ ու զնդակահարութիւններ: Ատուութեան ու թշնամանքի կրակ էր ժայթքում բոլշևիկ ղեկավարների ճատերից, գրութիւններից ու հրատարակած դեկրետներից: Ժողովուրդը տեսաւ ու համոզեց, որ այս խելագարներից խաղաղութիւն սպասելը անստուծիւն է:

Բոլշևիկները հանդիսաւորապէս յանձն էին առել նախկին համոզումների ու գործունէութեան համար չհետապնդել հայոց բանակի հրամանատարութեան եւ քաղաքական կուսակցութիւնների անդամներին: Եւ, սակայն, Չեկան կատաղի սրշաւանք բացեց կուսակցականների ու զինւորականների դէմ: Հայ մտաւորականութեան ընտրանին լեցեց բանտերը՝ կացնահարելու սպառնալիքով: Հազարաւոր հայ սպաներ խաբէութեամբ քշեցին աքոռ դէպի Ազրբէջան ու Ռուսաստանի խորքերը: Սուղն ու չիւանը բոյն դրեց հայ երդիկի տակ: Ժողովուրդը տեսաւ, որ բոլշևիկների նպատակն է հայութեան գլխատումը, ինչպէս վարեցին արքայ խալիֆաները Հայաստանը գրաւելուց յետոյ:

Հայց ու հազուստ խոստացան «սովահար» Հայաստանին: Գատուկ զննացներ, տոււմ էին, պատրաստ օպատում են, որ Հայաստան փոխադրեն առատ ալիւր, մանուֆակտուրա, շաքար, վառելիք եւ ամէն տեսակ բարիքներ: Բայց Յեղկոմը Երեւան մտաւ թէ չէ, Հայաստանում ծայր տեց համատարած թլալան ու կողպուտ: Դրսից ոչինչ չեկաւ, եւ չկար, որ գար: Ընդհակառակը, Հայաստանի պետական

պահեստների ալիւրը, հազուստեղէնը, շաքարը, ապակին, փոխադրութեան միջոցները, ազմամթերքը, կաշին, գինին ու կոնեակը, որբանոցների կակածն ու խոտցւած կաթը, ինչ որ գտա՞մ լեցին բեռնակիր ինքնաշարժներն ու զիւղացիներից գրաււած սայլերը եւ «հարւածային կարողով» տարին Ազրբէջան ու Մոսկա՝ «նէր ընկեր Լեհինին», «նէր Արքանակին»: Որբանոցներն ու գաղձակայանները մնացին մերկ եւ անօթի: Նոյնիսկ հայ զօրամասերի հազուստն ու ձիերը խլեցին եւ տըւին Ռուսաստանից եկած սովալլուկ ուս զինւորներին: Սկսեցին «թալաքախոններ» — զիւղերի ու քաղաքների ազգաբնակչութիւնի խլում էին պարէնը, ցորենը, իւղն ու պանիրը, հաւն ու հակիթը, կովն ու ոչխարը: Գիմադրողներին լոցեցում էին գնդացիքով ու թընդանօթով: Նմանը չտեսնւած աւազակութիւնն ու բռնութիւն էր տիրում Հայաստանի բոլոր կողմերում: Հայաստանը բաժանեց երկու թշնամի բանակի. բանացող, հարստահարող, թալանող, կուշտ իշխանութիւնը յանձին բոլշևիկների, եւ արհամարհւած, ճնշւած, իրաւազուրկ, հալածական, կողոպտւած ու սոված ժողովուրդը:

Եւ այս համատարած թշւառութեան ու խեղճութեան միջից ժողովրդի աչքին աւելի եւ աւելի պայծառ դոյներով ներկայանում էր ժօտիկ անցեալը, Հանրապետութեան օրերը, երբ իշխանութիւնն ու ժողովուրդը մէկ միաձոյլ զանգւած էր, երբ տիրում էր խօսքի ու խղճի ազատութիւն, աշխատանքի ու ստացւածքի ապահովութիւն, երբ յարգանք կար դէպի օրէնքն ու քաղաքացիական իրաւունքները, երբ անհատն ու ընտանիքը անձեռնմխելի էին: Մոտացում էին ստեղաւոր կողմերը, երէկւոյս ցաւերն ու դժգոհութիւնները: Ներկայի յուսանաւանական, անտանելի կացութեան համեմատութեամբ երէկւայ թերութիւնները անմեղ բաներ էին թոււմ: Կուտակուում ու լեռնանում էր ցատում տիրող կարգերի դէմ, ազատութեան ծարաւը, նորից հայրենիքը անկախ տեսնելու տենչը:

Իսկ բռնութիւններն ու հայածանքները սաստկանում էին յարածուն: Բազբից ամէն օր հասնում էին խելացնոր հրահանգներ՝ ձերբակալել, բանտարկել, աքոռել, բռնադատել. Յեղկոմն ու Չեկան բուխ ու կամակառայ թուլամորթութեամբ եւ վաշրաք դաժանութեամբ անձուռնչ գործադրում էին Օրջնիկիձէների ու Հուսէյինովների վայրենի հրամանները: Համբերութեան բաժանել լեցեց մինչեւ յետին ծայրը, երբ փոտար Ծի գէջերը Երեւանում բանտարկեցին մի քանի հարիւր դեռ ազատ մտացած առաջնակարգ մտաւորականներ, եւ յայտնի դարձաւ, որ բոլոր բանտարկեալները պիտի աքսուրեն Ազրբէջան ու Ռուսաստան:

Մի շարաթ յետոյ, Փետրւար 18-ին, ժողովրդի միահամուռ ու վճռական կամբով, խորհրդային իշխանութիւնն այլեւս չկար Հայաստանում հայ ժողովուրդը պաշտուէց քաներորդ դարու հոնքերի ճիրաններէց: Հայ աշխատաւորի կրօնակի շմեկնող հարւածով Յեղհովը իր քաջամարտիկ չեկիտաների հետ փախաւ և ապաւինեց շարուրցի թուրքերի ասպրնշականութեան: Սկսեց յամառ ու հերոսական պայքարի մի փառաւոր շրջան, երբ ամբողջ ժողովուրդը մէկ մարդու պէս, հասարակական բոլոր իսւներն ու հոսանքները, բոլոր կուսակցութիւններն անխտիր՝ զինուած ու պատրաստակամ՝ պաշտպանում էին նորանւած ազատութիւնը: Դաշնակցական, էսէր, էսդէկ, ժողովրդական, ռամկավար, հնչակեան, անկուսակցական, բացառիկ համերաշխութեամբ ու ուղեւորութեամբ, ամիսներ շարունակ գործնեցին թիկունքում, կուսեցին ռազմաճակատներում, մինչեւ որ տեղի տալով Ռուսաստանից հասած դերբազանց ուժերի ճնշման՝ ստիպեցին հեռանալ օտարութիւն՝ տանելով իրենց հետ Հայաստանի սնկխախտութեան եւ պայքարի դրօշը: Ապրիլ 2-ին նոր սուգ համակեց հայոց աշխարհին: Հայաստանը մէկ անգամ էլ ընկաւ բռնաւորների լծի տակ:

Կարճ տեւեց փետրւարեան շարժումը, ընդամենը մի քանի ամիս միայն, բայց իր համաժողովրդական ընդյոթով, ուժերի գերազոյն լարումով, տւած սնմիական հետեւանքներով, քաղաքական ազդեցութեամբ եւ հայ ժողովրդի մտքի վրայ թողած անշնչելի տպաւորութիւններով՝ դարձաւ մեր պատմութեան ամենացայտուն գէպերից մէկը, որ դեռ երկար ուղեւորութեան աղբիւր պիտի ծառայէ նոր սերունդներին: Ամենադիւտաւոր այն չէ, որ փետրւարեան ցնցող դասից յետոյ բոլշեակները ստիպւած եղան մեղմացնել իրենց քաղաքականութիւնը Հայաստանում, եւ յանցաւորները պատասխանատուութեան կանչեցին. էականք մտքի ու զգացմունքի այն յեզաւրլուծում է, որին ենթարկւեց Հայ ժողովուրդը փետրւարեան հրաշունչ օրերին: Ազգային ազատութեան ու պետական անկախութեան պահանջը, որ Հանրապետութեան շրջանին բուսականաջափ համակած չէր դեռ հանրային բոլոր իտեւրը, փետրւարից յետոյ դարձաւ հայ ժողովրդի քաղաքական մտքի մզիչ ոյժը, եւ ահա տասը տարի է ժողովրդական Հայաստանը ապրում ու շնչում է անկախութեան զաղափարով: Այն, ինչ որ սերունդների անզուլ քարոզով չշարժուեց անել, արւս փետրւարեան համաժողովրդական տարերային պոթիկումը: Փետրւար 18ը դարձաւ Հայաստանի անկախութեան ու ժողովրդապետութեան խորհրդանշան, եւ ուղեւորութեան անշնչել հնոց ազատութեան մարտիկների համար:

Փետրւարեան տասնամեակը բարոյական

ու զաղափարական յաղթանակի տասնամեակ է: Նոյնը կարելի չէ, սակայն, ճակ դեկտեմբերեան տասնամեակի մասին: Սաք տարի է ահա Հայաստանը գեղեցոր է բոլշեակ բանապետութեան ճիրաններում, եւ ի՞նչ արդիւնք է աւած խորհրդային տիրապետութիւնը. երկիրը ազատւած է մեկուսացումից ու զրկանքից, արտաքին վտանգը չեզոքացւած է, սահմանների վէճը փակւած է, թիւրքահայ վերաւոր խնդիրը լուծւած է, գաղթականութեանը տեղաւորւած է, տնտեսական վերաշինութեան հնարաւորութիւններն երաշխաւորւած են, ժողովուրդը հաշտւած է եկտր իշխանութեան հետ:

Ո՛չ եւ ո՛չ: Ազգային տեսակէտից, ապրիլ 2ը անշնչ շարունակութիւնն է դեկտեմբեր 2ի. այլազան շողջողուն անուների տակ Հայաստանը դարձել է Ռուսաստանի արտաբնակ մի գաւառ, խորհրդային իշխանութիւնը, այսօր էլ, ինչպէս երէկ, օտար ոյժ է հայ ժողովրդի համար, երկիրը կառավարում է ռուսական սելինների աջակցութեամբ: Ախալքալակ, Ղարաբաղ, Նախիջևեան շարունակում են խլած մնալ Հայաստանից: Թիւրքը ամուր նստած է Ախուրեանի եւ Արաքսի եզերքներին: Երկրի ներքւ ճորտատիրական կարգեր, տընտեսական քաջայում, սակաւահողութիւն, աւեր, աղբատուութիւն, սով, սանձարձակ հորրատահարութիւն եւ անվերջ դժգոհութիւններ ու խմորումներ: Երկրից դուրս՝ գաղութահայութեան ուժացում ու կազմալուծում, հայրկական զանգւածների փոշիացում: Հայաստանի բարոյական հմայքի անկում, ազգային ուժերի անխնայ վատնում ու դիտաւորեալ ջլատում: Թո՛ղ փորած հատ ու կենտ առունքը, չինւած մի քանի գործարաններն ու երկտրաւարականները, ցանուղ բամբակն ու հանուղ տափը չմոլորեցնեն մարդկանց տեսողութիւնը. Հայաստանի արդիւնաբերութեան ու երկրագործութեան «վերլըր» կատարում է գաղութային պայմաններում: Սուղանում էլ «վերլըր» կայ, իմպերիալիստական տիրապետութեան տակ: Հայաստանի բամբակը, պղինձը, տուֆը, երկրի տնտեսութեան հիմնական տարրերը ծառայում են նախ եւ առաջ Առաջադասանի արդիւնաբերութեան շահէրին: Հայ գիւղացին աշխատում է ռուսական ճարտարապետի զարգացման համար, ինչպէս սուղանացին՝ Մանչեստերի գործարանատիրոջ օգտին:

Եթէ ազգային քաղաքականութեան եւ ազգային տնտեսութեան տեսակէտից խորհրդային իշխանութիւնը բարիք չեղաւ հայ ժողովրդի համար, գուցէ բոլշեակի բուն նպատակի՝ «սոցիալիզմի կառուցման» ասպարէզով շօշափելի նւսճումներ ունեցաւ: Սոցիալիզմի ի՞նչ կառուցում հնարւած է Հայաստանի պէս ծառայած, յետամնաց, իրաւազուրկ, հարստահարւած մի երկրում: Պետական տըն-

տեսութեան այն խեղճ փորձերը, որոնց մասին ա՛հա 10 տարի է թժարուկ են դարձնում հայ կոմունիստները, սոցիալիզմի ծաղիկազարն են միայն, պետական դրամատիրութեան ազդատուսն ու թշուառ մէկ ձեւը: Խորհրդային շինարարութեան միակ դերը Հայաստանում եղել է այն, որ բոլշեւիկները տասը տարի անընդհատ քար են դրել ժողովրդական տնտեսութեան անկներբի տակ, քանդել են ա՛յն, ինչ որ ժողովուրդը աշխատել է շինել: Միայն մէկ տարւայ ընթացքում, կոլխոզական յիմարապատում փորձերի հետեւանքով, 50,000 խոշոր անասուն է կոտորել հայկական գիւղերում, եւ անասնաբուծութիւնը Հայաստանում տակաւին յետ է մնում նախապատերազմեան որակական վիճակից:

Շինարարութի՛ւն... Կարելի՞ է երեւակայել, թէ ինչ կը լինէր Հայաստանի տնտեսա-

կան ու մշակութային վիճակը, այս տասը տարւայ ընթացքում, եթէ հայ ժողովուրդը նախաձեռնելու եւ ստեղծագործելու ազատութիւն ունենար...

Ինչ տեսակէտից եւ մօտենալու լինենք, խորհրդային տասնամեակը Հայաստանի համար եղաւ պարտութեան, նահանջի եւ անկման աղէտաւոր շրջան: Միակ հաւել ասնելիք պարզան արտաքին խաղաղութիւնն է. թիւրքը չէ շարժել Ախտրեանից եւ Արաքսից այս կողմ: Բայց չպէ՛տք է մոռանալ. թիւրքին էլ Հայաստան բերողը բոլշեւիկներն էին: Ու մինչեւ այսօր եւլ Հայաստանի սահմանի վրա թիւրքը կեցած է բոլշեւիկներ կամքով: Թիւրքի սպառնալիքով ապահոված, ոռւսական սերնը մէջքին՝ հայ բոլշեւիկը կառավարում է Հայաստանը — Տասը տարի է կործանում է Հայաստանը:

## ՓԵՏՐԻԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայ բոլշեւիկ Բ. Բորեանը իր երկամտոր ուսումնասիրութեան մէջ\*) մի գլուխ էլ ներկել է 1921թ. փետրւար 18-ի ապստամբութեան, Հայաստանում:

Հայ հասարակութիւնն, ընդհանուր առմամբ, արդէն ծանօթ է փետրւարեան ապստամբութեան հանգամանքներին — թէ՛ նրան ծնունդ տուող պատճառներին եւ թէ՛ ընթացքին ու հետեւանքներին: Ձկան այլևս չնախապաշարած մարդիկ, որոնք այդ ապստամբութեան համար միակ պատասխանատու չնկատէին բոլշեւիկներին, ինչպէս եւ չկայ մէկը, որ շքնուկէր ապստամբութեան խոշոր նշանակութիւնը խորհրդային իշխանութեան բարձր ու կարգերի մեղմամաս տեսակէտից: Փետրւարեան ապստամբութիւնից յետոյ հաստատուած դրութիւնը եղաւ անհամեմատ աւելի՛ տանելի, քան նախափետրւարեան ըստիմը: Այս փոփոխութիւնը փետրւարեան համաժողովրդական պոռթկումի գլխաւոր նշանակութիւններից մէկն էր:

Երբ, սակայն, ուղարկելի շրջաններում փետրւարեան շարժումը, ընդհանրապէս, գնահատում է որպէս դրական երևոյթ, կամ ըստ Հ. Յ. Գալստայրութեան 10րդ Ընդհանուր ժողովի բանաձեկ. «Իր ծագումով եւ բնոյթով իրաւունք պիտի ունենայ զբաւելու մեր յեղափոխական պատմութեան ամենափառաւոր էջերից մէկը», հայ կոմունիստների շարքերում տարակարծութիւնը նրա հոլթեան մասին խիտ մեծ է: Արդէն մի շարք յօդւածներ, կարճ ու երկար ուսումնասիրութիւններ են լոյս տեսել խորհրդային մամուլի մէջ, նոյնիսկ առանձին գրքեր, որոնք փորձում են փետրւարեան ապստամբութիւնը գնահատութեան ենթարկել այլ եւ այլ անկրկներից, բայց ըմբռնումների միատեսակութիւն դեռ չկայ: Պաշտօնական բանաձեկերով խնդիրը,

ի հարկէ, միանգամայն պարզ է. բոլշեւիկներն իրենք աղանձի պէս մաքուր են եւ քնաւոյնացած չունեն. փետրւարեան «Նահալեղափոխութիւնը» առաջ են բերել «բաշակները», ինչպէս Ձիշերինն է պնդում, Փրանսական ծովակալ Դիմենիլի անալիզութեամբ: Բայց պատահում են եւ այսպիսիներ, որոնք վախճելով թոթոքում են նոյնպէս եւ իրենց՝ բոլշեւիկների պատասխանատուութեան մասին: Բորեանը այս կարգի բոլշեւիկներից է. հայ իրականութեան վերաբերող հարցերին նա, սոհասարակ, աշխատում է մօտենալ անկաշիւնդ մտքով եւ երբեմն յաջողում էլ է անկախ ուղտողութիւններ ասել: Այս յատկութիւնը ինքնին արդէն բաւական է, որպէսզի յարձակումների ու հայճոյանքների տեղատարափ թափի նրա հասցէին ուղղափառների կողմից: Բայց, միւս կողմից, այդ յատկութիւնը մի արժանիք է, որ նրա տեսակէտին տալիս է որոշ հասարակական արժէք: Այս իսկ պատճառով հետաքրքրական է տեսնել, թէ միայն կենտրոնի հերթական բանաձեւով չղեկավարող բոլշեւիկ պատմաբանը ինչպէ՛ս է ներկայացնում Հայաստանի փետրւարեան ապստամբութեան պատճառները:

1920թ. դեկտեմբեր 2-ին Հայաստանում յայտարարեց խորհրդային իշխանութիւն: «Ժողովրդական զանգաճները, գրում է Բորեանը, խանդավառութեամբ ողջունեցին խորհրդային իշխանութեան հաստատումը եւ ուրախ էին «Ռուսաստանի վերագործի» համար, իբրև մի չեզոք ուժի, որը կապահովէ խաղաղութիւն անշատ ազգերի միջև եւ «հաց ու մանուֆախտուրա կը բերէ», իսկ գլխաւոր ուրախութեան պատճառը այն էր, որ Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը յենարան էր լինի երկրի բանւոր-գիւղացիական զանգաճների համար եւ ցոյց կը տայ հնարաւոր ավազութիւն նրա տնտեսական շինարարութեան:

Այսպիսի պայմաններում եւ նման դրութեան մէջ 1920թ. դեկտեմբերին Խորհրդ. Հայաստանի Յեղկոմը

\*) Բ. Ա. Боряня. «Армения, Международная Дипломатия и СССР», Государственное Издательство, Москва, 1928, Часть II, стр. 115-140.

անցնում է իր պարտականութիւնների կատարման: Այն ինչ, 1921թ. փետր. 18-ին Հայաստանում ծագում է խորհրդային իշխանութեան դէմ ուղղւած հակայեղափոխական պայտամարութիւն, որ ճնշւած է միայն կարմիր բանակի օգնութեամբ, ամիսուկէս անցած, նոյն տարւայ ապրիլ 2-ին: Ի՞նչ պատճառներ առաջ բերին այդ պայտամարութիւնը:

Եւ Բորեանը սկսում է թեւյ ապտամբութեան պատճառները:

«Յեզկովը, ասում է նա, բռնեց անխնայ և վճռական դրամուներին ու բռնագրաւումների ուղին, անխտր և առանց դասակարգային սկզբունքի, առանց Հաւելի աննելու գիւղացիութեան ընդհանուր տնտեսական վիճակը և նրա հոգեբանական դրութիւնը: Բռնագրաւումները կատարւում էին անկարգակերպ, չունէին համաչափ, յեղափոխական-դասակարգային բնոյթ և կիրառւում էին աւելորդ բռնութիւններ: Առանց կարգակերպւած ու կարգապահ մեքենայի, առանց ճախթօք մտերբը պատրաստելու և երկրի իչարայատուկ պայմանները հաշի առնելու Յեզկովը կարգախօս է հրապարակ մտաւ, թէ՛ պէտք է բռնագրաւել ու գրաւել քաղաքների մտանաւոր տնձանց պարէնն ու գիւղացիութեան հացի պաշարը: Անկարգ բռնագրաւում, գրաւում վճռականակապէս ամէն բանի — գինւորական հագուստ, բրինձ մաքրելու մասնաւոր և ամէն տեսակ գործիքներ, գիւղացիներին պատկանող մեղուի փեթակներ, սպիտակեղէն, գէտտեղէն, առանց դասակարգային խրտութեան բոլոր քաղաքացիներին տնային գոյքերը և այլն — այս ամենը, ի հարկէ, բոլորովին դասակարգային բնոյթ կրող քայլեր չէին և արդիւնք էին խորհրդային քաղաքականութեան ու կոմունիստական դասակարգային գաղափարախօսութեան անձնութեան և անգիտակցութեան:

Բնական է, որ այս բռնութեամբ գործադրուող քայլերը հիմնական պատճառներն էին երկրի ապտամբութեան»:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Բորեանը մատնանշում է ճիշտ այն փաստերը, որոնցով, ի մէջ այլոց, բացատրում է փետրւարեան շարժումը և՛ ոչ-բուլճիկեան ազատ միտքը. ապտամբութեան «հիմնական պատճառները» բխում էին Կասան-Ախի-Աթարբզեան Յեզկովի քաղաքականութիւնից:

Բորեանը հարցնում է. «Գրաւական ի՞նչ կանոններ դրուեթիւն ունէին Յեզկովի համար, ինչով էր ղեկավարւում նա և ի՞նչ իրաւակարգ էր հաստատւած երկրում»: Եւ մանրամասն փաստերով ու խորհրդային օրէնսդրութեան տեսանկերով ցոյց է տալիս, որ Յեզկովի վարմունքը ապօրինի էր. գրաւման ու բռնագրաւման քաղաքականութեան մէջ նա ոտի տակ էր տալիս խորհրդային իշխանութեան հրատարակած օրէնքներն ու ասումանոմ կարգերը: Այսպէս, օրէնքով կարելի էր պետականացնել միայն այն արդիւնաբերական ձեռնարկները, որոնք հինգ բանւոր ունէին, եթէ շարժում էին մեքենայով, կամ տաս՝ առանց մեքենայական շարժիչ ուժի», այն ինչ Յեզկովը գրաւեց Հայաստանի բոլոր ձեռնարկները: Կամ թէ՛ չէ, օրէնքը կարգադրում էր, որ գրաւման դէպքում՝ տիրող և նրա ընտանիքի անդամներին պէտք էր թողնել «տան և արհեստի կա-

րիքներին վերաբերող առարկաները», մինչդեռ Յեզկովը անում էր ամէն ինչ, որքէ տակ տալով օրէնքի սկզբունքները:

«Թէև, ասում է Բորեանը, Յեզկովն ու «իշխանութիւնները» այս սկզբունքները համարում էին իրենց համար պարտաւորացուցիչ, որովհետև Խորհրդ. Խուսառանքի ղեկիտները գորութիւնը Յեզկովի ղեկիտով տարածւած էր և Հայաստանի սահմաններում, բայց կեանքում՝ «իշխանութիւնները» կիրառում էին սեփական «յեղափոխական» և անդր օրէնքներ: Նոյնը տեղի է ունենում և պարենաւորման մթերքների բռնագրաւման խնդրում, որ կատարւում էր առանց ընտանիքի կարիքները հաշի առնելու և առանց ի նկատի ունենալու ցանքի պահանջները: Իշխանութիւնները մեկնում էին 1918թ. մայիս 9-ի ղեկիտի առաջին մասից, որ ասում էր՝ «ո՛չ մի փութ ցորեն չպիտի մնայ տէրերի ձեռքին», և աչքբեռող էին անում շարունակութիւնը, թէ՛ «ի բաց առեալ այն քանակը, որ անհրաժեշտ է նրանց արտերը ցանելու և ընտանիքները կերակրելու համար մինչև նոր բերք»:

«Այս «մարտ» բանիք, իբրև անկարևոր խնդիրներ բանւոր-գիւղացիական իշխանութեան յօդուտ սոցիալիստական շինարարութեան կատարած յեղափոխական ստեղծագործութեան մէջ, իշխանութիւնները համարում էին զիչ արժէք ներկայացնող և ուշագրութիւն չէին դարձնում նրանց վրա:

«Մի երկրում, ուր բանւորութիւնը, որպէս կազմակերպւած ու կարգապահ ոյթ, ոչ միայն փոքրաթիւ էր, այլ և թոյլ, իսկ գիւղացիութիւնը կազմում էր բնակչութեան ահապին մեծամասնութիւնը, ուր դրամատիրութիւնը բացակայում էր և հասարակական կարծիք ստեղծողը քաղցինիութիւնն էր և մանր-բուրժուական մտաւորականութիւնը, իշխանութիւնները և իշխանութեան մարմինները պարտաւոր էին հաշի առնել երկրի բոլոր առանձնայատկութիւնները, նրա քայքայւած վիճակը, գիւղացիութեան կոտորակւած լինելը և այս վերջինների բոլոր ձգտումները»:

Այսինքն, Բորեանը գրեթէ բառացի կրկնում է այն, ինչ որ փետրւարեան ապտամբութեան նախօրեակին ու յետոյ ասում-պնդում է ինչ դաշնակցական գործիչները. գիւղացիական երկրում կարելի չէ բանւորական յեղափոխութիւն առաջ բերել, այլան-թալանով ու բռնութեամբ պետութիւն չի կառավարի ու սոցիալիզմ չի կառուցել:

Իր տարբերակ, չափելու համար նախնական, բայց խորհրդային աշխարհում հերձուած նկատուող այս միտքը կոմունիստ ընկերներին հասկանալի ու հանդուրժելի դարձնելու համար Բորեանը ստիպւած է մի քանի էջ լեցնել մէջերումենքով ու խորհրդածութիւններով Մարքսից, էնգելսից ու Լենինից և առաջ բերել քաղաքա-գիւղացիական ուժերի փոխազդեցութեան հիմնական սկզբունքները — սկզբունքներ, որոնք Հայաստանի «իշխանութեան մարմինների» համար, ըստ Լեւոյթին, դատարկ և հասարակական նշանակութիւն չունեցող հարցեր էին: Ու շարունակում է.

«Մենք այստեղ գործ ունենք ոչ դրամատէրերի, ոչ էլ կալւածատէրերի, այլ Հայաստանի գիւղացիութեան, բանւորութեան և որք ու աղքատ գաղթական

դանդաճմանը հետ... Հայաստանում բացակայում էին խոշոր առևտրա-արդիւնաբերական բուրժուազիան և կալուածատէրերը, որպէս ընկերային խմբակցութիւն ու հասարակական ոյժ: Թէև անտեղ կային խոշոր կալուածատէրեր, բայց ցրւած էին, ո՛չ մի կազմակերպւած ոյժ չէին ներկայացնում և հասարակական կեանքում ոչ մի դեր չէին խաղում:

«Այսպիսի պայմաններում, Հայաստանի խորհրդայնացումից երկու ու կէս ամիս անցած, մենք ունենք հակայեղափոխական մի շարժում ու յեղաշրջում, որ յանդէպ Հայաստանի մայրաքաղաքի և ուրիշ կենտրոնների գրաւման ապստամբների կողմից:

«Ընչի՞ք առաջ եկաւ հակայեղափոխութիւնը և որոնք են նրա պատճառները: Իշխանութիւնը չկարողացաւ կազմակերպել հանրային-պետական մեքենան տեղերում և կենտրոնում և ամուր հիմքերի վրա դնել կազմակերպական-դաստիարակչական աշխատանքը աշխատուորական լայն գնահատման մէջ: Նա բաւարար ուշադրութիւն չդարձրեց դիւզացիութեան և դաշմակական գանդաճմանը վրա: Բարձրագոյն մանր բուրժուազիան աճարեկաւ էր: Ձեռք ընկածը զբաւեւում և բռնազրաւելու ձևերն ու միջոցները կրում էին տարբերային քնոյթ, կատարում էին անկազմակերպ ու կամայական կերպով: Գաւառական յեղուճների հրահանգով ազգաբնակչութեան կարգադրում էր անյապաղ իրոյց տրամադրութեան տակ դնել փոխադրական միջոցները: «Այդ հրամանը» չկատարողները պիտի «պատժեն յեղափոխական ժամանակի օրէնքով», ասում էր ռազմական ժողովուրդը 1920թ. դեկտ. 14 հրամանը: Այս պարտաւորութիւնները իրենց բովանդակ ծանրութեամբ ընկնում էին դիւզացիութեան վրա, և գոյութիւն ունեցող պայմաններում նրանց իրազրոծումը դիւզացիութեան համար նշանակուած էր զրկել լծկան անասուններից, այսինքն՝ գոյութեան միակ միջոցից:

«Յեղուկում 1920թ. 18 հրամանով առաջարկում է (ո՞ւմ — յայտնի չէ) արագ և անյապաղ միջոցներ կիրառել, որ ինքնապաշտպանութեան պետական միանւագ հարկը և պետութեան հասանելիք միւս տուրքերը հաւաքեն ու համապատասխան գանձարան մտցնեն: Այս անորոշ, հասցէ չունեցող հրամանը, հաւանարար, իրաւունք ու առիթ աւելց հարկ ու տուրք հաւաքել բոլոր նրանց, ովքեր չէին ծուլանում հարկահաւաք լինելու: Բնական է, որ հարկահաւաքման նման ձևը յղի էր կառավարութեան համար ոչ-բարեկամներ և հետևանքներով և չէր բացասում հարկահաւաքների կողմից ի շարք գործադրելու հնարաւորութիւնը... Կասկած չկայ, որ դժգոհութիւնը խիստ մեծ էր, և Յեղուկում ստիպւած եղաւ դեկտ. 30-ին վերացնել յիշեալ հրամանը և արդէն հաւաքած տուրքերը փոխանցել պետութեան գանձարանը: Այսպիսով, տուրք չվճարողները չաճաւոր դուրս եկան...»

«Շնորհիւ պետական մեքենայի թուլութեան, կազմակերպական միջոցների ու կարգապահութեան բացակայութեան՝ մայրաքաղաք Երևանի մէջ և դաւաճներում կարմիր բանակայինները ինքնակամ ու կամայական կերպով բնակիչներից բռնազրաւում էին պարենաւորման մթերքներ, ինչպէս յայտարարում էր ռազմական գործերի ժողովուրդը 1920թ. դեկտ. 28 հրամանը: Նման

դրութիւնը չէր կարող բացասական հետևանքներ չունենալ և առաջ էր բերում անբարեացակամ վերաբերում ազգաբնակչութեան մէջ Յեղուկի գործուճեղութեան հանդէպ:

«Հանրային կրթութեան ժողովուրդ հրամանով հաշի էին առնում բոլոր երաժշտական գործիչները՝ ազգաբարութեամբ, որ եթէ պէտք լինի, բոլոր այդ գործիչները կարող են բռնազրաւել (1920թ. դեկտ. 31 հրաման):

«Ձեռնարկութիւնների պետականացումը կատարում էր քմահաճօրէն, առանց որոշ սկզբունքի, և ձեռնարկութիւնների բնոյթը (նրանց մեծութիւնը) դեր չէին կատարում: Յեղուկի 1921թ. յունւ. 6 հրամանը կարգադրում է մասնաւոր անձանք՝ պետութեան յանձնել զրեյու թողլովը, եթէ մասնաւոր մարդկանց ունեցածը 48 թէրթից աւելի է: Հիմնարկութիւններին և մասնաւոր անձանց հրամայում է երեք օրւայ ընթացքում իրենց մօտ գտնւած նոյնիսկ գործածւած մոժլաթը յանձնել պետական մարմիններին: Եթէ հրամանը չկատարուի, ազգաբարութեան է Յեղուկի հրամանը, յանցաւորները պատասխանատուութեան կենթարկւեն յեղափոխական ժամանակի օրէնքների բովանդակ խտութեամբ...»

«Հաշի են առնում մասնաւոր մարդկանց զրադարանները, փայտը և այլ կարգի վառելանիւթերը, անգամ դիւզացիութեան պաշարը, յայտարարում է, որ դրանք կարող են գործածուել պետական կարիքների վրա, պետականացում են բոլոր ջրերը, մինչև իսկ «աղբիւրները» և այլ ևս այլ...»

«Փաստերի այս բաւական դժգոյն թուումը, որ արտացոլւել է իշխանութիւնների ղեկիւններին և հրամանների մէջ, բացատրում է Հայաստանի ժողովրդական ապստամբութեան պատճառները: Խորհրդային իշխանութեան դէմ եղած ապստամբութեան ներքին պատճառներից գառ պէտք է արձանագրել և ապստամբութեան հիմնական արտաքին պատճառները, որոնք խաղացին կարևոր դեր:

«Թիւրքերը գրաւած հայկական քաղաքներում (Ալեքսանդրապոլ, Կարս, Սարղամիշ և այլն) և դաւաճներում ժողովրդի վերաբերմամբ գործադրում էին քառի բուն նշանակութեամբ բաշխողութային վարչական միջոցներ, որ վերին աստիճանի բացասական կերպով էր աղղում հայ ազգաբնակչութեան վրա: Թիւրքերը չէին հեռանում գրաւած քաղաքներից ու դաւաճներից...»

«Նորիդրային իշխանութիւնը՝ ո՛չ մի որպէս միջոց չէր գործածում թիւրքերիմ Հայաստանից հեռացնելու համար, մինչդեռ ազգաբնակչութիւնը հաւատացած էր, որ հորիդր. Թուսաստանի եկտ քարի հարկաւանակաւ յարաբերութիւններ հաստատելուց յետոյ թիւրքերիմ այլևս Հայաստանում անելիք չունեն, և Թուսաստանը թոյլ չի տայ թիւրքերիմ գրաւել Հայաստանի հողերը, որոնց չէր «համոզւած» էր, որ Թիւրքերը եկել էին Խորհրդ. Թուսաստանի շարտութեան և օքնութեամբ, որպէսզի տապալեն Հայաստանի դաշնակցական կառավարութիւնը և Խորհրդ. Հայաստանի վրայով կապ հաստատեն Թուսաստանի հետ: Իսկ դուրս եկաւ, որ թիւրքերը եկել են որպէս մւանդներ, և երկրի վիճակը աւելի ևս

վատացաւ, մի բան, որ ժողովուրդը չէր կարող սպասել խորհրդային իշխանութեան Հայաստան դադուց:

Այսպէսեւեւ Բորեանը խօսում է թիւրքերի հակահայ քաղաքականութեան, վրաց մենչեկինների ոտնձգութիւնների, Հայաստանի տնտեսական մեկուսացման մասին և եզրակացնում է.

«Այսպիսով ստեղծեցին այն արտաքին պայմանները, որոնց հետեւանով խորհրդային մի երկիր — Հայաստանը — մտնուեց պաշարած բերդի վիճակի: Վրաստանը, Թիւրքիան և անանցանկէի իռնները Սորհրդային Ազգային կողմից, իբրև թշնամի ուժեր, առաջ բերին իշխանութեան համար ծանր կացութիւն, իսկ ժողովրդի համար՝ ճշմարտամային վիճակ:

«Հողային խնդիրները, զաղթական զանգաճները, շրջափակումը, ցուրտը, սովը և այլն, իբրև արտաքին գործոններ, առարկայօրէն անբարեկամատ դրութիւն ստեղծեցին իշխանութեան համար: Եւ ահա այսպիսի ծանր պայմաններում Հայաստանի Յեղկոմը դիմեց պետականացման ու բնագաւուման, հին հարկերի հաւաքում՝ քանտրուում Քոնզուլով այնպիսի մարդկանց, որոնք պէտք է որ ապտուած լինէին. չէր աշխատում կայմակերպել պետական մեքենան և այլն: Բոլոր այս ֆանդամանքներն ահա միասին առած հանդիսանում էին այն պատճառները, որոնք առաջ բերին Հայաստանի հակալեզափոխական շարժումը և 1921թ. փետրուարի յեղաշրջումը»:

Ինչպէս տեսնում ենք, հայ բոլշեիկ Բորեանը միանգամայն ճիշտ է ըմբռնել Հայաստանի փետրուարեան ապստամբութեան նախորդող պայմանները: Բայց, իբրև բոլշեիկ, նա, ի հարկէ, չի նկատել կամ չնկատել է ձևացնում և մի շարք ուրիշ՝ իրիսա ծանրակշիւ հանգամանքներ, և ամենից առաջ՝ խնդրի ազգային կողմը: «Հայց և մտաւթակտուրայից» զատ Հայաստանի ժողովրդի և մանուրականութեան որչա մասը խորհրդային իշխանութիւնից սպասում էին և հայկական հարցի լուծում. դաշնակցականները չկարողացան Կարսն ու Սաբրըղամիշը պահել, բոլշեիկները յետ կտանէն և հնար կը գտնեն Թիւրքիայի և Հայաստանի սահմանային վէճը խաղաղ միջոցներով կարգադրելու և հայ ու թիւրք ժողովուրդները միջև բարձր հարեանական յարաբերութիւններ ապահովելու: Այս ակնկալութիւնն էլ ի դերն եկաւ. Թիւրքերը ոչ միայն Կարսը յետ չառին, այլ Ալեքսանդրապոլիսը իլ չհեռացան: Խորհրդային իշխանութիւնը նոյնիսկ դաշնակցականների կնքած դաշնագիրը չկարողացաւ գործադրել տալ: Անգորան խորհրդային Երևանի հետ խօսում էր իբրև թշնամի: Իսկ թիւրքերը կողմից գրաւած շրջաններում անարգել շարունակուած էին Հարստահարութիւնները, Քայանի ու կոտորածը խաղաղ հայ պղծաբանութեան վերաբերմամբ: Ժողովուրդը տեսաւ, որ Մոսկուայի աշակցութեամբ Հայաստան եկած թիւրքը շարունակում է իր նկատմամբ միայն թիւրք, և բոլշեիկները անգոր են թիւրքի առջև: Եւ, քնակաւաբար, տիրեց ծանր հեռախփութիւն ամենքի մէջ:

Այս կապակցութեամբ պէտք է յիշել և հայ բոլշեիկների կատարած միջազգային-քաղաքական անորոշ

կամ հակասական քայլերը հայկական հարցի ու թիւրքահայաստանի վերաբերմամբ: Նրանց ելույթներն այս ասպարէզում մանկական թոթոյանքներ էին կամ ջղաւոր հայհոյանքներ և «դիւստիչ իմպերիալիստների» հասցէին: Իսկ իբրև Հայաստանի կառավարութիւն, ինչ էլին մտածում, ինչ էլին ուզում անել Եւրոպայում կատարած քաղաքական ձեռնարկների արդիւնքները օգտագործելու գրասեւած դիրքերը պահելու համար — ոչինչ յայտնի չէր: Այնպիսի տպաւորութիւն էր ստացուում, որ անսպասելի յաղորդութիւնից արեցած՝ Հայաստանի նոր վարչիւնը, ժամանակ ու տրամադրութիւն չունէին նման դատարկ խնդիրներով զբաղելու: Արդար պէտք է լինել առեղծ համար, որ նրանք նման հարցերի պիտակցութիւնն ու պատրաստութիւնն էլ չունէին, մարդիկ այդ հարցերի համար ամբողջ կեանքում պայքարել էին Դաշնակցութեան դէմ, հիմա կարող էին հետաքրքրել ինչ որ «ազգային-բուրժուական» ու «հակալեզափոխական» դործերով: Զէ՞ որ հայկական հարցը «տեղական գանձակատան» հարց էր, իսկ նրանց առջև բացած էին համաշխարհային հորիզոններ: . .

Մանրակշիւ հանգամանք էր նաև անկախութեան հարցը: Խորհրդային իշխանութեան անտրուումը ճանաչման պատճառներից մէկն էլ այն էր, որ իշխանութիւնը փոխանցում էր օրինական եղանակով. հին իշխանութիւնը յօժար կամ թով տեղի էր տալիս նորի առջև այն հիմնական պայմանով, որ նոր իշխանութիւնը յանձն էր առել յարգելու Հայաստանի անկախութեան ըսկզբունքը. կառավարութեան և խորհրդային իշխանութեան ներկայացուցչէ կեդրանի միջև ստորագրուած համաձայնութեան առաջին կէտը հէնց այդ սկզբունքն էր. Հայաստանը պէտք է լինէր խորհրդային անկախ հանրապետութիւն: Եւ, սակայն, հէնց առաջին օրից այս յանձնառութիւնը չյարգուեց: Հայաստանը փաստօրէն տրեւց ուսական 11րդ բանակի հրամանատարութեան տակ և կառավարում էր Բազըի: Բացի ներքին լայն-թալանի ու բանտարկութեան քաղաքականութիւնից Հայաստանին վերաբերող միւս բոլոր հարցերը լուծում էին Բազում և ուղիղ հեռագրաթիւրով հարգուում Երևան՝ Յեղկոմին՝ ի դործադրութիւն: Այդ դրութիւնն ևս ուժեղ տպաւորութիւն թողեց Հայաստանի հանրային կարծիքի վրա և հիասթափութեան ու դժգոհանքի պատճառ դարձաւ:

Բորեանը չի յիշում և Հայաստանի մտաւթակաճութեան զանգաճային բանտարկութիւնները, և հայկական բանակն ամբողջ սպայութեան մեքանակալութիւնն ու արտոր դէպի Ազգային ու Ռուսաստանի ներքերը, և Ձեկայի միւս շահատակութիւնները, և մի շարք ուրիշ փաստեր, բայց ինչ որ յիշում է՝ արդէն իսկ բաւական է արդարացնելու համար փետրուարեան ապստամբութեան պատմական անհրաժեշտութիւնը: Ինչպէս յայտնի է, Բորեանի տեսակէտին նման կարծիք էր յայտնել և՛ Մտալինի աջ բազուկը՝ Օրլոնիկիճէն, որը Հայաստանի հակաբոլշեիկ շարժման զլխաւոր պատասխանատուն համարում էր այն ժամանակաւ Հայաստանի Յեղկոմն ու ղեկավար կոմունիստներին: Միայն բոլշեիկների արտասահմանեան խնկարկունքն են, որ սակաւին այսօր էլ շարունակում են կրկնել,

թէ՛ փետրուարեան ապստամբութիւնը կուտակցական նպատակներով առաջ բերած արկածային դրութիւն էր: Այսպէս մտածել նշանակում է բնա՛զ դաղազար չունենալ 1920-ի վերջերին և 1921-ի առաջին ամիսներին Հայաստանում տիրող պայմանների և զարգացող ղէպքերի մասին:

Այսօր, փետրուարեան շարժումից տասր տարի յե-

տոյ, ո՛չ միայն Հայաստանցիների, այլ և դուրսը ապրողների համար էլ այլ ևս պարզ է, որ այդ շարժումը բոլորովին համաժողովրդական ազգային շարժում էր, որ մինչև հողու խորքը ցնցեց հայ ժողովուրդը, և որի յիշատակը այսօր էլ կենդանի է ժողովրդական ցանդաձոնների մէջ: Ապագայ՝ նոյնիսկ Բորեանները հասել են այդ գիտակցութեան:

## ԵԼՄՅԱԿԱՆ ՄԻՉԱԶԳԻԱՅԻՆ ՏԱԳԵԱՊՐ

1929 թւականի աշնան Նիւ-Եօրկի մէջ տեղի ունեցած սակարանական ահաբեկ խուճապներէն սկսելով՝ ներկայ անտեսական տազնապն հետզհետէ ծաւալեցաւ և այսօր, երբ մէկ ու կէս տարի յետոյ, կարելի է ըսել թէ ամբողջ աշխարհի առեւտրական հրապարակներն աւելի՛ կա մնաւո՞ղ ուժգնութեամբ ևնթարկած են անոր միջական թէ անմիջական հետևանքներուն:

Նախ քան ելմտական տազնապներու էութիւնն ու պատճառներն ուսումնասիրելը անհրաժեշտ է որոշ գաղափար մը կազմել այժմեան տազնապի յառաջացուցած աղէտալի կացութեան վրա: Իրբ շօշափելի օրինակ՝ կարելի է աչքի առաջ ունենալ Ամերիկայի Միացեալ Նահանգներն, որ աշխարհի ամենաբազմամարդ երկիրներէն մէկն է և անվիճելիօրէն ամենահարուստը յետպատերազմեան դարաշրջանին:

Ըստ ամերիկեան պաշտօնական վիճակագրութեան, 1930 տարւոյն մէջ անանկացած են 742 դրամական հաստատութիւններ, որոնցմէ 124-ը միայն նոյեմբեր ամսոյ մէջ իսկ 51-ը միայն մէկ օրւան մէջ: Այդ անանկացած դրամատանց մէջ է Banque des Etat-Unis կոչւածն իր վաթսու մասնաձեւերով, որոնց մօտ միայն ի պահ դրամ և այսօր ցնդած գումարներու քանակը կը հասնի 150 միլիոն դոլարի, կամ մօտ չորս միլիառ Փրանքի:

Մանկացած կամ թշուառացած անհատ առեւտրականներու և ընկերութեանց թիւն ապահովարար հարիւրապատիկ աւելի մեծ է, և ըստ ամերիկեան թերթերու՝ Հանրապետութեան հաստատումէն ի վեր տեսնւած չէ նմանօրինակ անտեսական աղէտ: Անգործներու թիւն 8 միլիոնի աճուելի գումարին հասած է արդէն, առանց հաշուելու անոնց ընտանիքները և պետական արձանագրութիւնների դուրս մնացածները: 1930 դեկտեմբերին Նիւ-Եօրկի սակարանի մէջ նշանակած արժեթղթերու ընդհանուր արժէքը բաղդատմամբ 1928-ի դիներուն՝ ցոյց կուտար չորս միլիառ դոլարի նւազոյթ մը, որ հաստար է 100 միլիառ Փրանքի վնասի...

Չափազանցութիւններ չեն թերթերու մէջ հրատարակւած թշուառութեան տեսարաններու նկարագրութիւններն՝ ամերիկեան մեծ քաղաքներու և նուաճանգրիտներու աղքատ թաղերուն մէջ:

Աւելի փայլուն չէ Անգլիոյ վիճակը, ուր կառավարութեան նպատակ տաացող անգործներու պաշտօնական թիւն էր յունւար 5-ին 2.400.000. անցեալ տարիի համապատասխան շարժումն միայն մէկ միլիոն էր անոնց

թիւր: 1930 տարիի ներածութիւնները 176 միլիոն ստերլին և արտածութիւնները 161 միլիոն ստերլին աւելի պակաս եղած են քան 1929-ին: Լանկաշայրի նահանգն իր հիււսածեղէնի հսկայ գործարաններով մինչև 1900 թւականը գրեթէ առանձին կը մատակարարէր ամբողջ աշխարհի բամպակեայ զերձանները, կտաններն ու տպանոնները: Այսօր այդ արտածութիւն իր մէկ երրորդին իջած է և այլևս յոյս չկայ թէ երբ և իցէ Անգլիա կրնայ վերադարձել իր նախկին առանձնաշնորհեալ դիրքը: Արևելքի շուկաներն հետացած են ներքին խլրտուածներու, զնման անկարողութեան, ազգայնական պրօպագանդի կայուն ազդեցութիւններով: զաղթապետութիւններէն շատերն արդէն ի վիճակի են տեղական միջոցներով գոհանալու և նամանաւանդ նոր մրցակիցներ կան այժմ, որ յալոցութեամբ կը պայքարեն Անգլիոյ դէմ, ինչպէս Ֆրանսա, Իտալիա, Գերմանիա, Ճապոն և այլն: Վերջացած է «իսխէ Բրտանիա»ի դարաշրջանը:

Աշխարհի երրորդ հարստադոյն երկիրն է Ֆրանսան, ուր տազնապն ամենաուշ զգալի եղաւ, շնորհիւ անոր արդիւնաբերութեան և հողագործութեան մէջ զբոսնած հասարակչի վիճակին: Ըստ ազգային տնտեսութեան նախարար Լուչէռոնի՝ սակայն, արդէն հինգ միլիառ Փրանքի նւազոյթ մը կայ 1929 և 1930 թւերուն արտածւած արհեստագործական ապրանքներուն մէջ և պետական շրջանայինն սկսած են լրջօրէն մտահոգելի երկրի յառաջիկայ տնտեսական կացութեան հեռապատկերովը: Մրադրած է պետական հաշուեցոյցի յաւելոյթը կազմող հինգ միլիառ Փրանքի գումարն յատկացնել հանրօգուտ շինութեանց՝ ժողովուրդին դործ հայթայթելու համար, և խիստ միջոցներ ձեռք տանելով օտար գործաւորներու հանդէպ:

Ֆրանսական արժեթղթերու դիները 30-էն 75% կորսնցուցած են իրենց 1928-ի գիներէն: այսպէս օրինակ՝ բանկ դը Ֆրանսի բաժնեթուղթն իսկ 25.000 Փրանկէն ինչպէս է 16,700-ի:

Աշխարհի այս երեք ամենահարուստ երկիրներու տնտեսական կացութեան կարելի է դիւրաւ կուսել մնացած երկիրներու վիճակը և որոշ գաղափար մը կազմել ներկայ տազնապնի վրա, որ հետզհետէ աւելի կը նոյնացնի թէ՛ որակով, թէ՛ քանակով:

Քննենք այժմ տազնապներու էությունն ու պատճառները:

Ըստ ելմտական գիտութեան տւեայներու և յենւած փորձառական գիտողութեանց վրա, կը հասկնալ թէ



դրամատիրական ներկայ կարգերու մէջ կրճատական բարբառուած և տազնապալի շրջաններն իրարու կը յաշնորդեն որոշ կանոնադրութեամբ և որոշ տեղութեամբ, նման այլեղներու վէտվտուովին: Բարբառուած շրջաններն անշուշտ, աւելի կը տեւեն քան տազնապալիները և վերջին հաշուով աշխարհի բարբառութիւնը կը յառաջդիմէ անընդհատ և կենսեքի պայմանները հետզհետէ աւելի դիւրագեցիկ կը դառնան ժողովուրդի աւելի լայն խաւերուն համար, քան անցեալին մէջ:

Մշտական տազնապալիները կրնան սահմանափակել որոշ երկրի մը կամ որոշ շրջանի մը մէջ և կամ ստանալ միջնագոյնի բնոյթ, ինչպէս է ներկայ տազնապալ: Միջնագոյնի տազնապալներն աւելի ալէտուալ և աւելի երկարատեւ կը լինեն, քանկանարար, քան մասնակիները և որոշ ժամանակի մը համար կը կասեցնեն ընդհանուր վերելքը:

Տնտեսական բարգաւառ շրջանի բնորոշ նշանն է արտադրութեան և սպառման մէջ իշխող օ հաւասարակշռութիւնը: Արդիւնաբերող տարրերն անոնց դժարութեան և օրինաւոր շահով մը կրնան ծախել իրենց ապրանքները և գործ հայթայթել որոշ թւով գործատոններու և պայանանախերու: Ասոնք, իրենց կարգին, ի վիճակի կը լինեն գոհացում տալու իրենց այլևայլ պահանջներուն և սպառելի բաւականաչափ, զարգացնելով ընդհանուր բարօրութիւնը:

Տազնապալ կը սկսի, երբ կը խախտի այս հաւասարակշռութիւնը, այսինքն երբ արդիւնաբերողը չի կըրնար ծախել իր արտադրութիւնը: Ապրանքները կը դիպուին մթերանոցին մէջ և գործարանատէրը կամ հողագործը կը ստիպուին կամ գաղտնիքով իրենց աշխատանքը և կամ մթերել ապրանքներն այնչափ ժամանակ, որչափ որ կը ներքին իրենց գրամական միջոցները: Առաջին պարագային հետեւեալն է բանտարական անդորձութիւնը, իսկ երկրորդին սնանկութիւնն ու իրարատութիւնը, եթէ տազնապալ երկարատեւ է և, վերջ ի վերջոյ, կը խորոսկէ արդիւնաբերողի տնտեսական միջոցները:

Երկրորդ տազնապալ կը սկսի ուրեմն ապրանքներու դժարածախութեամբ: Ինչո՞ւ կուզայ ժամանակ մը երբ ապրանքն այլևս չի ծախուիր միեւնոյն գինով և միեւնոյն՝ պայմաններով, ինչպէս ստալը: պարզապէս անոր համար, որ ոեւէ պատճառաւ պակասած է սպառողի գնման կարողութիւնը: սպառողն այլևս կը գոհացնու միայն իր առօրեայ անմիջական պէտքերը և կը խուսափի երկրորդական կարեւորութիւն ունեցող պահանջներուն գոհացում տալէ. ան կը գոհանայ, օրինակ, իր քիչ մը հինցած գրեւատովը և լուսազոյն օրերու կը սպասէ նոր գլխատ մը ապուրելու համար: Այս պատճառաւ այլ անտնտեսական տազնապալներ առաջին գոհները պերճանքի արտաքին ծախողներն են, ինչպէս զորք, թանկագին քարեր, հնութիւններ և այլն, որոնց վրա մարդ կը խորհի միայն երբ տրամադրելի առատ միջոցներ ունի:

Ապրանքներու և հում նիւթերու մթերում կրնայ յառաջանալ նաև դիւրարտադրութեամբ, երբ այլ և այլ գործարաններ կարողաբերն աւելի քան սովորական պահանջը, բայց առհասարակ գերախաղողութիւն կոչուած

վիճակը ստորապատման արդիւնք է: Գերարտադրութիւն կրնայ գոյութիւն ունենալ որոշ ապրանքներու համար, որոշ երկիրներու մէջ, բայց վնասողները այդ դիւրարտադրող գործարանատէրերը այլ լինեն և քիչ անչափ կրնան ընդհանուր տաղանգ յառաջացնել: Ստորապատմումն է դժարածախութեան և, հետեւաբար, ապրանքներու մթերման պատճառը:

Որո՞նք են ժողովուրդին ստորապատման մղող պատճառները:

Այդ պատճառները բարձրապիտի են և բարձրապիտական աւժամանայ և տեւական բնոյթ ունեցողներ: Կան ընդհանուր և մասնակի բնոյթ ունեցողներ. և, վերջապէս, կան ընդհանուր, զգացական և այլ մասնաւոր բարձրապիտ պարագաներ:

Այդ պատճառները կրնան յատմանալ դրամական յոռի դրութեան, քաղաքական անտախտ կացութեան, յեղափոխական խլիւղախաղի, սուլի անհաւասար բաշխումով, ընկերական անկայատ պայմաններէ և այլն՝ յիշելով միայն զխաւորները:

Նշողատանի, Պարսկաստանի, Եթովպիոյ և մի քանի ուրիշ երկիրներու ժողովուրդները կը տալային թշուարութեան մէջ իրենց դրամի անկայունութեան պատճառաւ: անոնց դրամի խաբխիսն է արծաթը, որուն գինը կիսայն հետզհետէ:

Գիտնէք թէ պատճառեան նախնական շրջաններում առուտուրը տեղի կունենար պարզ փոխանակութեամբ: Յորենի պէտք ունեցող զուգացին իր զարին կը փոխէր ցորենն ունեցողի մը հետ, որ զարիի պէտք ունէր, և այլն: Աւելի վերջին երբ մարդկային ընկերութեանց պահանջները բարձրացան, պէտք տեսնու ապրանքի մը, որ կարելի ըլլար փոխել ամէն տեսակ ապրանքներու հետ: զիւրիկ շէր ամէն անգամ ունեցածն և կը ապրանքին համար յաճախորդ դառնել և փոխանակութիւնը կատարել:

Այդ պահանջին ծագում առաւ դրամին գործածութիւնը և մէջտեղ եկան մետաղները — առկին և արծաթը թանկարէն ապրանքներու համար և պրիները շահան ապրանքներու համար: Նիքելի գործածութիւնը շատ նոր է բաղդատմամբ ոսկիին և արծաթին, որոնք կը գործածուին իբր 2500 տարեկներէ հետ: Հազարակազմութեանց գժարութեան պատճառաւ այդ մետաղներու գնման կարողութիւնը կը տարբերէր երկրէ երկիր, մինչև իսկ միեւնոյն երկրի այլևայլ մասերուն մէջ և երկաթուղիի գիւտէն ի վեր է, որ ոսկիին և արծաթին որոշ արժէքներ տալ կարելի էր և զաւաքակրթիւնը երկիրներու մէջ:

Վաճառականութեան աւելի ընդլայնմամբը մէջտեղ եկաւ դրամատուրը, իբր փոխարժէք որոշ պետական հակազուրի տակ գտնուած հաստատութեանց ծօտ ի պահ դրամ մետաղի: Երկիրներ կան, ինչպէս էր Ռուսիան, ուր պետական գանձը միայն իրաւունք ունի գրամատուր հրապարակ: Հանելու: ուրիշ երկիրներու մէջ, ինչպէս Ֆրանսայում, պետութիւնն այդ իրաւունքը ծախած է քանի դր Ֆրանսիան, սրտը պայմաններով:

Մտաւորապէս մինչև 1900 թւականը ոսկին և արծաթը հաստատաբար կը նկատուին իբր դրամական

դրութեան խարխիս — երկմտազեան դրութիւն — մէկ կիլոգրամ ոսկին համարժէք նկատուելով 15<sup>3</sup>/<sub>4</sub> կելը արծաթի: Այս համեմատական արժէքն ի գորու մնաց բուական ժամանակ, բայց արծաթի հանքերու արտադրութեանց բազմացմամբ հետզհետէ նւազեցաւ արծաթի գինը և մեծ պատուութիւններն ընդունեցին ոսկիի միամտազեան դրութիւնը: Արծաթը, սակայն, կը շարունակէ մնալ արեւելեան երկիրներու մէջ իբր զբաժական միութիւն, երբ այսօր ոսկիի և արծաթի սովորական համեմատութիւնը բարձրացած է մօտ հինգ անգամ, այսինքն՝ մէկ կիլոգրամ ոսկին կարժէ 70 կելո արծաթ, փոխանակ 15 ու կէս կիլոի: Հնդկի, պարսիկ եւայլն այժմ ստահուով կը տեսնեն թէ իրենց դեղած արծաթներու զինան կարողութիւնը կեցած տեղը հինգ անգամ պակաս է. եւրոպական ապրանք մը որ քանի մը տարի առաջ մէկ թումանով կամ մէկ ռուբլով կը գնէր, այսօր չորս թուման կամ չորս ռուբլի կարժէ: Ահաւասիկ զինան կարողութեան նւազում մը, որ սպառողի կամքէն կախած է:

Գաղաքական անստորջ կայութեան մէջ է Սպանիան, որու դրամն — Տակուսիկ որ երկիրը շմասնակցաւ մեծ պատերազմով — իր արժէքի մէկ եւրոյը կորսնցուցած է. քանի մը տարիներէ հետէ այնտեղ իշխող դիկտատուրան անցօր է գոհացնելու երկրի իրական պահանջները և ժողովրդական խժոճումները կը խթարեն հանրային վարկը:

Հարաւային Ամերիկայի երկիրներն ալ թատերափայր են օկտական հարածներու, ժողովրդական ապստամբութեանց և անկարելի է այդ պայմաններու մէջ բարօրութիւն և բարգաւաճում որոնել այդ առևտրական հրապարակներուն վրա:

Գերմանիան կը հեծէ Երնդի ծրագրի խիստ պայմաններու տակ և հողէրեան անխոհեմ ցոյցեր ու ճառերը կը մթազննել Եւրոպայի քաղաքական հարկոյնը: Անգործներու թիւը չորս միլիոնի կը հասնի:

Հնդկաստան և Չինաստան քանի տարիներէ հետէ ներքին յեղափոխութիւններով տկարացած՝ այլևս ի վիճակի չեն արեւմտեան շուկաներէ դժուամբ ընելու: Ասիոյ ժողովուրդները Ռուսաստանի հետ կը կազմեն 1 միլիոնի բազմութիւն մը — աշխարհի ընդհանուր բնակչութեան կէսը — որ բոլորէ վերջնականապէս դադարած է եւրոպական հրապարակներու հարկատու ըլլալէ:

Տագնապի իբր պատճառ յիշենք նաև ոսկիի անհատաբար բաշխումն, որուն վրա շատ մեղան սպառած են անտեսազէտները, և որու մասին, սակայն, համաձայն չեն անեաքը:

Ֆրանսական նոր Փրանկի կայունացման ժամանակ օրէնց մը քահարկեցաւ, որուն համեմատ բանկի դը Ֆրանսն արտօնած է գնել ներկայացւած տէ՛ք քանակութեան մագուր ոսկի — 995 ատոմանակ — փոխարէնը համարժէք գրամատոմ հրապարակ հանելով: Այս հիման վրա Ֆրանսայի գրամատունն, որ 1928-ին ունէր միայն 27 միլիոնի ոսկի 58 միլիոն Փր. գրամատոմ փոխարէն, այսօր ունի 53 միլիոն ոսկի, 75 միլիոն գրամատոմ սերու փոխարէն. ոսկիի և գրամատոմ սեր

համեմատութիւնը, որ 1928-ին մօտ 50% էր, իջած է այժմ 30%ի, այսինքն թէ իւրաքանչիւր 100 Փրանկնոյ գրամատոմին փոխարէնը 70 Փրանկի զուտ ոսկի կը գտնուի գրամատան նկուղներուն մէջ:

Սահման որդւած չէ Ֆրանսայի գրամատան ոսկիի զինան իրաւունքին, որով 1930 տարւոյն մէջ ան կառողացած է գնել մօտ 90 միլիոն ստերլինի, այսինքն շարաթը 2% միլիոն ստերլինի ոսկի, որ զվաւորաբար արտածւած է Անգլիայէն ու Ամերիկայէն:

Ոմանք կը խորհին թէ 75 միլիոնի հասակին քանակութեամբ գրամատոմ սերու՝ շրջաբերութեան մէջ զտնւիրը պատճառ է կեանքի սղութեան: Եթէ Բանկի դը Ֆրանսը նոր զինած իւրաքանչիւր 100 Փր. ոսկիի փոխարէն 200 Փր. գրամատոմ հրապարակ հաներ, կարելի էր անշուշտ այդպէս խորհիլ, բայց տեսնաք թէ 27 միլիոնի ոսկիին վրա 16 միլիոնի ոսկի աւելցնելով, շրջաբերութեան մէջ զտնւած 58 միլիոն գրամատոմ սերը միայն 17 միլիոնով աւելցուած է և ոչ թէ 34 միլիոնով: այս կը նշանակէ թէ արտասահմանեան ոսկիներու փոխարէնը կազմող գրամատոմ սերն ամբողջովն երաշխաւորւած են և անմիջապէս, որ պահանջներն, կրնան վերադարձիլ ոսկիով. կեանքի սղութեան պատճառ եղաւ. 1920-1925 թվերուն թղթադրամներու առատութիւնն — inflation — այլևայլ հրապարակներու վրա, երբ անոնց փոխարէնը ունէ համարժէք մետաղ դոյութիւն չունէր և ազատ առապարկ բացած էր գրամատոմ սղող մեքենաներուն Գերմանիոյ, Ռուսիոյ, Ռումանիոյ եւայլ երկիրներուն մէջ:

Ֆրանսայի ճայժեան պարագան բոլորովին տարբեր է, և այդ արտասահմանեան գրամարներէն մեծ չափ մը չկալ Ֆրանսայի համար: Այլապէս Բանկի դը Ֆրանսը զիւրա չպիտի ընդունէր գեղջի սակը 2%-ի իջնցնելով կասեցնել օտար գրամադրի մուտքը Ֆրանսա: Անգլիոյ գրամատան առաջարկին վրա Բանկի դը Ֆրանսը յօժարեցաւ մինչև անգամ 0.995 ատոմանակի պակաս մաքրութեան ոսկի ընդունել, կիլոին 20-էն 40 Փր. գրամահատման տուրք պահանջելով, որպէսզի անգլիացի գրամատները չտախպիւն անպատճառ Բանկի օլ ինգլիանէն ոսկի պահանջելու:

Ոսկիի կարևոր մթերք մը անշուշտ մեծ գորութիւն է երկրի մը անտեսական կացութեան համար, բայց այդ նախանձելի վիճակը կարելի չէ հրովարակներով կամ պետական օրէնքներով ստանալ. պէտք է մտաւորութիւն ներշնչել գրամապիլին, որպէսզի դայ: Սիլ-ազգային վարկ պէտք է վայելիլ գրամատներ հրապարակելու համար. դրամը զոյն չունի և գրամատներն ալ հայրենիք. ուր որ մէկ սանտիմ աւելի շահ և սպահնութիւն կայ, այնտեղ է գրամի հայրենիքը:

Երկրի մը ոսկին կաւելնալ երբ իր արտածութիւններն աւելի են քան ներածութիւնները, երբ օտար գրամաշրջիկներ դրամ կը ծախսեն իր երկրին մէջ, երբ օտար երկիրներէ կարևոր պահանջներ ունենալով ոսկեզրամ առկաններ կը գանձէ կայն կայն: Ամէն երկիր ալ կը փափազի այդ վիճակին հասնել, բայց դիւրին չէ և ըստ իս սխալ է ոսկիի մթերքին ստուար

ցումն ամբաստանել իբր տաքնապի կամ կեանքի սղու-  
թեան պատասխանատու:

Ըստ ամենապիտան Կամաձայնութեան, որպէսզի  
Բանկ դը Ֆրանսի ընդունի Անգլիայէն ներածած ունե-  
րակի, պէտք է պահանջէ Բանկ օվ ինգլիանի գրաւոր  
արտօնութիւնը, և եմտական շրջանակները շատ զոհ-  
են եւրոպական երկու մեծ հրապարակներու մէջ գրո-  
նած Կամբըայնութենէն և Կամազործակցութեան Կա-  
մար կայացած Կամաձայնութենէն:

Վերջացնելու Կամար տնտեսական այս ընդհանուր  
տեսութիւնը, ինչնք նաև ներկայ տագնապի պատճառ-  
ներուն գերազոյցը — մեծ պատերազմը:

Տագնապներ միշտ ալ յառաջացած են ամէն տե-  
ղեր, բայց երբեք այսչափ ընդհանուր բնոյթ ունեցած  
չեն և ոչ ալ այսչափ երկար տևած: Մեծ պատերազմի  
առաջը հետքերն ու յետպատերազմեան նոր դարա-  
շրջանի նոր մտայնութիւնը անտարակուսելիօրէն մեծ  
զեբ ունին անոր մէջ: Անպատիժ կերպով կարելի չէր  
հինգ տարի շարունակ վայրենարար և անխնայ սպա-  
ռել ու վատնել ինչ որ պատրաստ կը գտնէր ամենու-  
րեք կարելի չէր՝ առանց խոր հետքեր թողնելու՝ քա-  
ղաքակիրթ մարդկութեան մտաւարարպէս կէսը ուղղա-  
կի թէ անուղղակի կերպով մասնակից ընել այդ ահուե-  
լի սպանդին ու անհաշիւ մահումին:

Զինադազարին յաջորդող գինովութեան տաաջին  
տարիներու մէջ աւագի վրա կառուցած հսկայ շէնքե-  
րը, անաշխատ ու անհաշիւ կերպով դիզած ահաբէն  
հարստութիւնները չէին կրնար դիմադրական մեծ ոյժ  
ունենալ և կը խարխիւն ամէն հոռանք:

Շատ մը երկիրներ իրենց կարողութենէն շատ աւե-  
լի մեծցան, ուրիշներ բռնազօրսիկ սահմաններու մէջ  
արելափակեցան, և ուրիշներ ալ կըքցան անգործա-  
դրելի պարտազրուութեան բեռան տակ: Կարելի չէր ժո-  
ղովուրդներու ճակատադրին հետ խաղալ այսպէս ան-  
պատիժ կերպով:

Արթնցած են ժողովուրդները մինչև իսկ Ասիոյ ու  
Ափրիկէի ամենախաւարակուր խորշերուն մէջ. ազգա-

յին գիտակցութեան կայծերը կը պլպլան ամենայն-  
ենալ ազգերու աչքերուն մէջ և տիրող պատասխանա-  
տու վարչաձևերուն դէմ կը կուտակին ժողովուրդնե-  
րու սխն ու ատելութիւնը:

Կարմիր բունապետութիւնը ամբողջովին զինուոր-  
կանացուցած է անսահման Ռուսիան, ուր միլիոնաւոր  
մարդիկ ստրուկներու նման կը աքելն ու կը մեռնին  
բոլշևիկեան բլրներուն տակ, ինչպէս երբեմն ցարական  
կնուտին տակ. տասներկու ժամանայ պարտադիր աշխա-  
տանք, ճղճիմ թռչակ, անբաւարար սնունդ և գերար-  
տաղրութիւն ամենատար դիներով, առանց ծախքի և  
ողորում եւրոպական հրապարակները — dantons —  
անմրցելի զիներով և իբր արեան վաստակ տտանեակ  
միլիոններով ժողովուրդի մը, որ զրկւած է դիմադրա-  
կան կարողութենէ:

Այս բոլորի հիմնական դարմանը՝ տիրող կարգերու  
արժատական փոփոխութիւնն է, բայց իբր անցողական  
չըջան պէտք է, որ իշխող տարրերու մտայնութիւննե-  
րը փոխին, պէտք է նախապատերազմեան քաղցրեմիու-  
թիւնն իր միջոցները՝ յարմարցնէ նոր կարգուսարքին:  
Պէտք է կործանել ժողովուրդներն իրարմէ անջատող  
մաքապաշտպան ապօրէն պատնէշները, պէտք է ջնջել  
աղգայնամոլ և օտարատեսաց զգացումները ժողովուրդ-  
ներու ղեկավար տարրերու մէջէն, եթէ կուզի սփոփել  
Եւրոպայի 10 միլիոն անդործները և բարօրութիւն ու  
խաղաղութիւն տալ անոր մօտ 100 միլիոն քնակիչնե-  
րուն:

Ամերիկան պէտք է բոլորովին որբէ Երեզի ծրա-  
քով պարտադրած իր անաղար պահանջները և Եւրո-  
պայի իշխողներն ալ աշխատեն յառաջանալ դէպի Կա-  
մարայեան դաշնակցութիւնը, ճնշւած ազգերու ազ-  
տազրուամով և հաւասարէ հաւասար անկեղծ ու ինքնա-  
կամ դաշնադրութիւններով:

Այս է որ կը սպանն աշխարհի բոլոր ծաւառած  
ժողովուրդներուն ու անիրաււած ազգերը: Ապա թէ ոչ  
անտեք պատասխանատու չեն կրնար նկատուիլ զալիք  
աղէաներուն...  
Մ. ՏԵՐՊԷՏԵՐԻԱՆ

# ՔՐԴԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄԸ

(Ներկայ կացութիւնը)

Արարատի ապստամբութեան մանրամասնութիւն-  
ներն ամէն ամիս արձանագրուեցան «Բորչալի»-ի մէջ:  
Հոկտեմբեր ամիսը բունկած ծանր կուրիներու փակման  
շրջանը եղաւ, վրա հասնող ձմրան շնորհու: Այդ ամ-  
սուն հրատարակւած բոլոր լուրերը, ինչպէս նաև տե-  
սութիւնները հակասական էին և կը կարօտին ստուգ-  
ման: Որովհետև թրքական կառավարութիւնը Սեպտ-  
15-էն սկսեալ աշխարհի չորս կողմ տարածեց իր  
յազթանակի լուրերը, և պնդեց, թէ Արարատի բոլոր  
ուժերը ճգմած և քնաջնջւած էին: Թրքական հաղոր-  
դազրութիւններէն յայտնի էր նաև, որ Արարատը չորս

կողմէ շրջապատւած էր, որ Փոքր Մասիսի որոշ մա-  
սերը գրաււած էին թրքական զօրքերու կողմէ, որ  
պարսկական կառավարութիւնը, վերջ ի վերջոյ, տե-  
ղի տարով թրքական պնդումներուն՝ կը գործակցէր  
թրքական ուժերուն, Մակուի շրջանին մէջ: Ու հետե-  
ւաբար, երբ թիւրքերը կը յայտարարէին թէ Արարա-  
տը ընկճւած է, ու ապաստանները ոչնչացւած են, թէ  
Թիւրքիոյ ներքը և թէ արտասահմանի մէջ կուզէին  
այն ապաստանութիւնը թողուլ, որ, իբր թէ, ոչ միայն  
զրտական ապստամբութիւնները զսպւած են, այլ կըր-  
ուող ուժերն ալ սրբւած են, որեւէ ելք չգտնելով:

«Երօրակ»-ը իր հոկտեմբերի տետութիւնը կը փակէր՝ պնդելով, որ Արարատը վերջնականապէս ընկճած չէ, և թէ կուող ուժերը գեղտնւած չեն: Սակայն, մանրամասնութիւններ կը պակտէին վերջնականապէս բտելու համար, թէ՛ ջրտական ապստամբութիւնը լո՛ւն վիճակի մէջ կը գտնուէր:

Այժմ արդէն, 3-4 ամիս անցած է այդ անորոշ օրերէն, ու հասած ստոյգ տեղեկութիւնները քաւարար են ջրտական շարժման ներկայ իրական կացութիւնը ներկայացնելու համար:

Արդ, տեղի ունեցած դէպքերու մանրամասնութիւններն եկան ապացոյցանելու, որ Սեպտ. 15-ի թրքական յարարարութիւնը այն մասին, թէ Արարատի բոլոր ուժերը ոնչուցուած են և ապստամբութիւնը խելզուած է, իրականութեան չէին համապատասխաներ: Կոիւնքին Արարատի վրա շարունակեցան մինչև Սեպտեմբերի վերջը: Ապստամբութեան ղեկավարներուն հետ կը գտնուէր ժողովրդական գանձուած մը, որու կերակրին արգէն անհարին դարձած էր: Միւս կողմէ ապստամբները կը նեղէին ռազմավթերէջ պակասէն: Նրկար խորհրդակցութիւններէն յետոյ, կուող ուժերը կը համաձայնին երկու թեւերու բաժնուիլ: Մէկ մասը Իհասն Նուրի փաշայի ղեկավարութեամբ ժողովուրդն առնելով կանցին պարսկական սահմանը և պարսիկ կառավարութեան հետ թիւրիմացութիւն մը շտեղծելու համար ղեկավարի կըլլայ, իսկ միւս խոշոր մասը կանցին շրջախայ լեռնաւանսերը և կուի կը բունի թրքական զորամասերուն հետ: Թրքական զօրքերը միայն սկզբները կը յաճողին բարձրանալ Արարատի քանի մը ամուր դիրքերը: Սակայն, ձիւնին և բուբին չլիմանալով՝ կը վերադառնան Բայազիդ, պահակախումբեր թողնելով գանազան դիրքերուն մէջ: Արարատի այն կուողները, որ կը գտնուէին Ձէլալի աշիրթապետ յայտնի Իբրահիմ շըսէթ թէլլի փաշայի հրամանին տակ, հոկտեմբերի վերջերը կը վերադառնան Արարատ և կը դրաւեն նախկին ամուր դիրքերը: Թրքական պահակներէն ոմանք կը կոտորուին, ոմանք ալ իրենց տեղերը լքելով՝ կապատանեն Բայազիտ: Այսպիսով, Արարատի բնիկ կուողները, այս անգամ առանց ընտանեկան կաշկանդումներու, ապստամբութեան հին հնոցին տէր կը դառնային, 2-3 շաբաթ կուիները ուրիշ վայր փոխադրելէ յետոյ:

Ապստամբ Ջալալցիները իրենց նախկին դիրքերը վերադարձուէն յետոյ, պարտիզանական կուիներու ձեռնարկեցին՝ յարձակելով Բայազիտի շրջակայքի զօրամասերու վրա, և քանիցս փորձեցին կտրել Դիսիլի-Բայազիտ ճանապարհը, մէկ կողմէ հարածելու համար թրքական ուժերը, միւս կողմէ ապահովելու պարէն և ռազմավթերը:

Այս թւականէն սկսած թրքական հաղորդադրութիւնները դադրեցան: Անշուշտ, ձմեռուան դժուարութիւններն ընդարձակ գործողութիւններուն արդեւք կը հանդիսանան: Սակայն, բացայայտ է, որ թրքական խոշոր զօրամասեր մնացին Բայազիտի, Վանի և Բիթլիսի շրջաններուն մէջ: Թրքական կեդրոնական սպայակոյտի պէն Տէվլիթ փաշան մեկնեց Բայազիտ, անիջ Վան, ուր տեղի ունեցաւ զինուորական կարևոր խոր-

հրդակցութիւն մը, անշուշտ, ջրտական սպանալիքին դէմ:

Գրտական այս մեծ ապստամբութեան ամբողջ տեսողութեան թիւրքերը կրցան լուրջ հարած հասցնել միայն Արճէշ և Ձիլալի շրջանի զերտ ժողովուրդին: Այս շրջանի կուողներու մեծ մասը անմնաս ապատեցաւ և կրցաւ ապաստան գտնել գանազան լեռնամասերու մէջ: Մնացած վայրերու կուողները վճռական հարած շտացան: Վանի հարաւը, Շատախը և Հեքեկանի կուղեցան և կրցան պահպանել իրենց ուժերը: Արճէշի և Արարատի բուն կուիներէն յետոյ, Բուլանըլի շրջանը սպանական դիրք բունց: Թրքական կցկոտոր տեղեկութիւններէն կերբի, որ հոկտեմբերի սկզբն սկսած Ախլաթի, Բիթլիսի և Մշոյ շրջաններուն մէջ ընդհարումներ տեղի ունեցած են, որ Բուլանըլի շրջանէն զինեալ զերտները ճանապարհը կարած և զինուորական ինքնաշարժները դրուած են: Թէև թրքական հաղորդադրութիւնը տեղի ունեցած դէպքերը «աւազակներ»-ու կը վերագրէ, բայց իրողութիւնն այն է, որ Հասանայի աշիրթը դիմած է զենքի, որպէսզի Հայտարանցիներու (Արճէշ-Բաթնոս) ճնշումէն յետոյ, թիւրք զօրքերը իրենց ալ նոյն բախտին չենթարկեն:

Արևելեան Նահանգներու այս լարածութեան հետ ուրիշ մտահոգութիւններ ևս կ'ան բարդացուցին թիւրք կառավարութեան կացութիւնը: Տարրուէն հարաւ աղբոր զերտներն թէև մեծ բռնկումներ չունեցան, բայց իրատաւ Շէյխ Սալիտի ապստամբութեանէն յետոյ գործադրուած թրքական դաւադրութիւններէն և դաժանութիւններէն, ապստամբելու պատրաստ վիճակի մը մէջ կը գտնուին: Թիւրքերը ստիպուած, զօրքեր կեդրոնացուցին հարաւային նահանգներուն մէջ, թէ վտանգը դիմադրաւելու և թէ պատեհ առիթը ներկայանալուն պէս՝ ընկճելու քանի մը շրջաններ, որոնք կարող են մէկ օրէն միւս նոր Արարատ մը դառնալ:

Այս բոլորին վրա պէտք է աւելցնել թրքական ներքին կեանքի պառակտումը, Տէթիբի բէյի կուսակցութեան կազմութիւնն ու լուծումը և այն դժգոհութիւնները, որոնք յանձնեցան Մէնձմէնի խոնովութեան և շարիւրատը ձեռքաւորութիւններու: Այս իրողութիւնները ցոյց կուտան թէ քեմալական վարչութիւնը, Եկող զարնան, երբ ջրտական ապստամբական շարժումը խելզելու ձեռնարկէ, իր կոնակը վտանգուած պիտի պայ:

Հոկտեմբերէն սկսած, այս պայմաններուն մէջ անաղմուկ տեղի ունեցան թիւրք-պարսկական բանակցութիւնները կարգապարելու համար սահմանային վիճելի խնդիրները:

Իհասն Նուրի անձնատուր ըլլալէն վերջ, Ատրպատականէն փոխադրեցաւ Թեհրան և ամուսնեցաւ պարսկական կառավարութեան հսկողութեան տակ: Թիւրքերը կը պահանջէին. — 1) Թիւրքիոյ թողուլ Փոքր Արարատը. 2) իրենց յանձնել Իհասն Նուրին: Պարսիկները մերժեցին Իհասն Նուրին յանձնելու պահանջը, որպէս քաղաքական յանցաւորի, ինչպէս նաև Փոքր Արարատի զիջումը, թէև վերջին հարցի լուրջ բանակցութիւնները ղեռ կը շարունակուին:

Թիւրքերը Սեպտեմբերի սկզբին կրցան իրենց

սպառնալիքներով ստիպել, որ Պարսկաստանը որոշ չափով նպաստէ թիւրքերի Արարատի ապստամբութիւնը ճնշելու:

Պարսկաստանը, այդպիսով, բռնեց այնպիսի ճանապարհ մը, որ թիւրք-պարսկական պատերազմի մը սպառնալիքը կը չեղբացուէր: Թիւրքերը կարելի ապստուծեամբ գործեցին Արարատի դէմ և պարսկական սահմանին վրա, Մակուի շրջանին մէջ: Թիւրքերը բաշխեանք մարտական զինուժին, հետզհետէ առաջ տարին իրենց դիւանագիտական քայլերը՝ Փոքր Արարատը ստանալու համար: Եթէ բանակցութիւնները անցնելի մէջ չդրուեցան և այժմ ալ տակաւին կը շարունակուին, ստիպալ պէտք է վերադառնալ պարսկական ճիւղն քաղաքակրթութեան:

Ըստ երևոյթիւնի, թիւրք-պարսկական բանակցութեան մէջ, իւրաքանչիւր կողմ իր ուզած ձևով կը բացատրէ ձեռք բերած արդիւնքը: Այս իրողութեամբ միայն կարելի է մեկնել թրքական այն յայտարարութիւնը (որուն արձագանքն եղաւ եւրոպական մամուլը), ըստ որում Փոքր Արարատը արւած էր թիւրքերի և անոր փոխարէն Հարաւային սահմաններուն վրա փոխարինութիւն մը պիտի ըլլար Պարսկաստանին: Անոնք որ պարսկական զորաբանակներէն անտեղեակ են, հարցը փակած նկատեցին: Մակայն, քանի մը շաբաթ յետոյ, նոր լուրեր եկան ցոյց տալու, որ Արևելքի մէջ խնդիրներն այդպէս շուտ չեն կարգադրուի: Փարիզի պարսկական դեսպանատունը գեկոց մը Հրատարակեց յայտնելով որ՝ պաշտօնակառ Աղբիւրմիջէր առած տեղիկոյթեան համաձայն Պարսկաստանը Արարատը չպիտի լքէ, մինչև որ իր շաները կապահովեն:

Դեկտ. 20-էն սկսած արարական կարգ մը թերթեր, որոնք հնկիւրիէն և Թեհրանէն ամփոփական թղթակցութիւններ կը ստանան, արձագանք եղան կարգ մը զգայաբանց լուրերու: «Էլ Պայրա՛՛տ»-ի տեղեկութեան համաձայն (Դեկտ. 24), Պարսկաստանը կտրականապէս մերժած է թրքական պահանջները Արարատի մասին՝ շանելով, որ Արարատը գինւորական մեծ կարևորութիւն ունի Պարսկաստանի սահմաններու պաշտպանութեան համար: Միւս կողմէ, ոչ միայն Իհսան Նուրիին չէ յանձնած, այլ հակողութիւնը այնքան թոյլ եղած է, որ ան կրցած է փախչել Քիւրտիստան և անցնել նոր ապստամբութեան մը զլուխը: Նիւ Եոթթ Թալազը իր կարգին հեռագրալուր մը հրատարակեց, ըստ որում Իհսան Նուրիին կրցած է փախչել Բաթմոս և նոր կուրի մը ձեռնարկել թիւրքերի դէմ:

Ամենաստույգ տեղեկութիւններէն յայտնի է, որ Իհսան Նուրիին տակաւին Պարսկաստան կը գտնուի: Մակայն, ինչ որ ճշտարիտ է և կը կապի Արարատի հերոս անան, այդ այն է, որ Մանազկերտի շրջանի մէջ նոր կուրներ սկսած են և Բաթմոսը շարժման կեդրոնը կը հանդիսանայ: Բաթմոսը Քէտա Հիւսէյն փաշայի գիւղն է և կեդրոնը նկատուած է Հայաստան աշիւրթիւն, որ Արճէշի և Զիլանի կուրներու տարաւ: Ըստ երևոյթիւնի, ցրած փայտականները հաւաքուած և զինեալ ոյժ մը հրապարակ բերած են:

Թէ թրքական և թէ արատաստանի մամուլը Դեկտեմբերի առաջին կիսուն արձանագրեց քանի մը զէպ-

քեր, որոնք թէև ապստամբութեան կերպարանքը չունին և, սակայն, յատկանշական են:

Թրքական թերթերը յայտնեցին թէ Շէյխ Զաֆէրը Թուշ Պայի մօտերը շրջապատած է և կուր բռնած: Զաֆէրը Արարատի կուրղներէն է և ապաստանած է Վանի հիւսիսային մասերը:

Դեկտ. 6-ին Թեհրանի թրքական դեսպանը մեկնած է հնկիւրի իր կատարարութեան հետ խորհրդակցելու նոր կացութեան մասին: Նոյն թուականին, սահմանային յանձնարարքի անդամներն ալ ցրուած են: Ու ահա դէպքերու նոր շարան մը կը սկսի: Համաձայն օրաթերթերու տեղեկութիւններուն Դեկտ. 9-ին ցեղախումբերը հաւաքուած են թրքական սահմանին վրա և հաղորդակցութիւնները կտրած են: Դեկտ. 12-ին 350 շիւրտ չէթաներ անցած են սահմանը և բուն կուր բռնած թրքական զօրքերուն հետ՝ երկուստեք մեծ քանակներ տալով: Նոյն օրերուն նոր կուր մը տեղի ունեցած է Քարա Ալի և Քիզար բերդին մօտերը: շիւրտերը 37 զոհ տուած են: Ապստամբ ուրիշ խումբ մը Միւրիկէն Տիարբէշքի տանող ճամբուն վրա յարձակած և ինքնաշարժերը դրանու է: Այս դէպքերը ցոյց կուտան, որ մասնակի կուրները Արարատէն մինչև Բաթմոս, Վանի սահմանէն մինչև Հէքեարի և աւելի հարաւ բուն թափով տեղի կունենան, սակայն, ստույգ լուրերը օրը օրին չեն հասներ և արձանագրուի:

Իսկ ինչ որ կը մնայ այն լուրերուն, որ, իբր թէ, Հրոսախումբերը սահմանէն անցած են թիւրքերու և կուր բռնած թրքական զօրքի հետ, ճիշտ չէ: Թիւրքերը դիտմամբ այսպիսի լուրեր կը տարածեն ցոյց տալու համար, թէ Պարսկաստանի զբւրեւերն են, որ կը խռովեն թիւրքերի հանդիսար: Մինչդեռ, այդ բոլոր խումբերն ալ թիւրքերի Հայաստանի դէմ ապստամբած զբւրեւերէն կազմուած են, որոնք օր մը Արարատի վրա, օր մը Արճէշ, ուրիշ օր մը սահմանի մօտիկ վայրի մը մէջ կուր կը բռնեն թիւրքերուն հետ:

Ինչպէս ըսինք, զրոսական ապստամբութեան զինական ոյժը չընկճեցաւ, այլ ցրեցաւ ուրիշ լեռնամասեր՝ կուր շարունակելու համար: Արարատի կուրղներէն կարեւոր զօրամաս մը դարձաւ և տիրացաւ մեծ Արարատին: Բնական է, որ Հայաստանցիներն ալ օգտուէին ձեռնաջ դիւրութիւններէն և դառնային Միսիանի և Ալատաղի ստորոտները (Բաթմոս), ինչպէս նաև ուրիշ խումբերն ապաստան փոխեցին մէկ տեղէն միւսը: Այս բոլորը նոյն ուժերն են, որոնք Արարատի և Արճէշի ապստամբութեան ձեռնարկեցին և հիմա նոյն կուրն է, որ կը շարունակուի, այս անգամ խմբական ձևին տակ: Թիւրքերը, սակայն, հաշիւներ ունին կարգադրելիք Պարսկաստանի հետ, ու ամէն մէկ շարժում կուրգեն վերադրել պարսկական սահման անցած զբրտական չէթէի մը: Եւ արդէն թրքական մամուլը ըսկած է իր լեզուն նորէն փոխել: Բացայայտ է, որ Փոքր Արարատի խնդիրը չէ լուծուած ի նպատակ թիւրքերի: Թրքական դեսպանի մեկնումը այս իրողութեան ապացոյցն է: Իսկ յաճախող զարձած կուրները, այս կապակցութեամբ, աւելի մտահոգիչ կը թւին: Թիւրք թերթերը գրեցին թէ Պարսկաստանը իր դիրքը փոխած է և զրոսական խրտուսները կը բաշխուի:

Այս կարճ լուրերուն ի տես թիւրք-պարսկական

գրեանդպրտական բարդ պարը կը տեսնուի: Ասոնք (Թեւթրիս և Պարսկաստան) իրենց հաշիւն կը հետեւին: Երբ անդին, քերտերը թրքական աճուրդի սրածուրթեան զէմ Գիւրտիստանի ապստաղրութեան ճակատագրական գոյամարտ կը մղեն:

Արարատի և Արճէշէ շունգլից կուիւնեղն յետոյ, մտա չորս ամիս և ինչ թիւրքերը ճիղեր կը թափին համոզելու նախ թիւրք ժողովուրդը, ապա գրեանդպրտական աշխարհը, թէ քերտերը ընկճած են և թէ թիւրքիս նոր դժուարութիւններու առջև չի գտնուիր արեւելեան նահանգներուն մէջ: Միևնոյն ժամանակ, թրքական գիւնդապետութիւնը, բոլորիկիկան գրեանդպրտութեան օժանդակութեամբ՝ ուղեց իր ծրագրերնէրը իրականացնելու Պարսկական Ատրաքսականի մէջ, պարսկական կառավարութեան զինուոր մղելով: Սակայն, այս երկու ճակատներուն վրա ալ թիւրքիս մտաց կէս ճանապարհին: Որովհետև, մինչև այսօր, թիւրք-պարսկական համաձայնութիւն մը չգոյաջաւ, որ բաւարարութիւն տար թրքական բաղձանքներուն: Երեսօթիւնըն դատերը, հաւանական ալ չէ, որ Պարսկաստանն ընդամենը թրքական ծրագրին, որ քերտերն ընկճելէ աւելի, Պարսկաստանի դիրքը կը խախտէ Արեւելքի մէջ և թաթարական տարրի շարժումը կը զորացնէ:

Իսկ քրտական ուժի ջլատման մասին խօսիլը շատ կանխահազ է: Արարատեան ապստամբութիւնը Շէյխ Սալիտի ապստամբութեան դժբախտութեան շարժա-

նացաւ: Շէյխ Սալիտի ապստամբութեան ղեկավարներէն 200 հոգի կախաղան բարձրացան, հարիւրաւոր ղեկավարներ զնդակահարուեցան անյայտ վայրերու մէջ, և կուռղ ուժերէն հաղաբաւորներ սպաննեցան կուիւնեթուն մէջ, կամ անձնատուր բլլալէ յետոյ: Մինչդեռ 1930-ի ապստամբական շարժման ղեկավարներն ու կուռղները մնացին գրեթէ անձեռնմխելի և այսօր անոնք են, որ կանգնած կը մնան քրտական շարժման գլուխը: Միւս կողմէ, այսօր քրտական կազմակերպութեան ցանց մը գոյութիւն ունի ամէն կողմ, ու քերտ ժողովուրդը անցած հինգ տարւան փորձառութիւնն ունի՝ նախ չհաւատարու թրքական ներուժներուն և դաւադրութիւններուն, և երկրորդ իր փրկութիւնը կը գտնէ կուիւ և զինւած դիմադրութեան մէջ, քնաջինջ չըլլալու համար:

Ու քերտ ժողովուրդը պիտի կուի: Այդ ցոյց կուտան այս օրերու մասնակի կուիւններ, որոնք, զարնան, կարող են ընդհանուր բռնկումի մը կերպարանքը ստանալ, եթէ թիւրքերը յամառին իրենց իրական տիրապետութիւնը տարածելու քրտական բոլոր լեռնամասերուն վրա:

Արարատի ապստամբութեան յետոյ, թիւրք-քրտական հակամարտութիւնը մտած է իր ամենէն վրտանգաւոր և ճակատագրական փուլին մէջ:

Սպասե՛ք պստամբութեան անակնկալներուն:  
Կ. ՍԱՍՈՒՆԻ

## ԲՈՒՇՆԻԻԿԱՆ ԱՐՄՈՐԱՎԱՅՐՈՒՄ

Ստորև առաջ ենք բերում Սպիտակ Ծովի արգելարանից փախած մի ախարականի տեղեկագիրը: Հեղինակը մեզ ծանօթ է — Հայաստանցի մի գիւղացի: Անպաշտօն յոստիքով նա գրի է առել այն գաբիտարանները, որ տեսել է շուրջը ու կրել իր անձի վրա: Նա տալիս է բազմաթիւ փաստեր ու անուկներ, բայց մենք ստիպուած ենք շատ բան կրճատել՝ չվտանգելու համար Ձեկայնի ճանկերում տառապոյդներին: Ուղղել ենք նաև քերականական սխալները, ուստիսին բառերը փոխել հայերէնի, իսկ ռեճ ու բովանդակութիւնը թողել ենք անփոփոխ: Տեղեկագիրը ինքնին այնպիսի պերճախօս մարդկային վառերագիր է, որ մեր կողմից ո՛չ մի մեկնաբան պէտք չունի:

1928թ- փետրուար 18-ին սուսն խուզարկեցին և երկու շնկարներէն հետ ուղարկեցին Երևանի Գլխունչ, ուր սկսեցին ճննութիւնները կատարել: Այնտեղ ինձ պահեցին տասներեք ամիս: Այդ ժամանակամիջոցում բազմաթիւ ծանօթ ու անձանթ մարդիկ կեանքս անցան իմ աչքի առջևով: Ոմանց զնդակահարեցին: Շատերին ազդրեցին Հիւսիսային Ռուսաստան կամ Սիբիր: Իմ գործը ճննում էր անզեղակոթից Վահան Եսայանը, որին՝ սովորաբար, յանձնում էին զնդակահարման գործերը:

Երկար տանջելուց յետոյ, որոնց մանրամասնութիւնները զանց եմ աւանում, ինձ յայտարարեցին, որ թէև պատիժս եղել է զնդակահարութիւն, բայց դիջելուս եւ նախ տարի տաժանակիր աշխատանք Սովիկի կողմէ Սպիտակ Մոլի վրա: 1928թ. մարտին մի խումբ ուրիշ բանտարկեալներին հետ ինձ տարին Թիֆլիս: Ինձ հետ էին 75 դաշնակցականներ, 5 երիտասարդ մարքսիստներ, 4 Ներքեր և ուրիշներ:

Մեզ տեղաւորեցին Մետեխի բանտում, վրացի մենչեիկներին հետ միասին: Մեզանից առաջ արդէն բերած էին 60 երիտասարդ դաշնակցականներ, միեւնամասնութիւն Արովիան դպրոցից:

Վրացիների տեղաբնութիւնը դէպի մեզ շատ սուր էր: Ամենափոքր բաների մէջ խորութիւն էին դնում: Կերակուրը բաժանելիս նախ իրենց մարդկանց էին տալիս, յետոյ մեզ: Իրենցիններին աւելի շատ էին լեցնում: Այս բանը մերոնք նկատում էին բոլոր խուցերում: Չնայած որ մենք՝ Հայերս այդ կերակուրներից շատ քիչ էինք օգտուում, բայց նրանց վարձուքը չէինք կարողանում տանել: Քանի՞քսանի անախորժ դէպքեր են տեղի ունեցել այդ հողի վրա: Մի անգամ Լենինականցի Ռակարը վրացու պիւիւն տուց կերակուրով լեքը ամանը անարդար բաժանման համար: Մի ուրիշ անգամ ակալաբալայցի Արշալոյսը խփեց մի վրացու:

Վրացիները սկսեցին բղաւել, բայց մեղսից շատ էին քաշուում: Բոլշևիկներն էլ քաջալերում էին այս հակաապուլսիները:

Ինձ Մետեխում պահեցին տաս ամիս: Գործս վերաբնեցին, բայց պատիժս մնաց անվտոմիս: Այստեղ էլ բաղամթիւ մարդիկ անցան աշէիս առկեւով: Ամէն ամիսը երեք անգամ ուղարկում էին Հայաստանից բերած սաքորականներին:

Մի օր ճանապարհ էին դնում երիտասարդ դաշնակապաններին և վրացիներին: Այդ առթիւ ժողովներ սարքեցինք՝ հայերս առանձին, վրացիները առանձին՝ դէժ դիմաց: Հայ երիտասարդները սկսեցին ճառել. նրանց հետեւեցին վրացիները: Ապա երգեցին «Մեր Հայրենիք»-ը և ուրիշ աղայային երգեր: Պարզեցին ազգային դրօշակ: Ժողովը տեղց մօտ մի ժամ: Ձեկիստները պաշարել էին մեզ, բայց չհամարձակեցին ձեռք տալ: Սկզբում փորձեցին միջամտել, բայց չկարողացան ցրել ժողովը: Համբոյրներով և «կեցցէ՛»-ներով ճանապարհ դրինք:..

Տասն օր յետոյ ճանապարհեցին և մեզ, տասնց նախօրօք իմաց տարու: Յանկարծ, 150 հոգինոց մեր խումբը լեցրին վազոններ և քեցցին: Նստելու իսկ հնարաւորութիւն չկար. շատերը մինչև Մոսկա մնացին Խոտքի վրա և հիւանդացան:

Մոսկայում պահեցին երեք օր, Բուտիրկէ բանտում: Մնացին բակում. այնքան կայանաւոր կար, որ հազիւ կարողանում էինք կանգնել: Եարժեկու տեղ չկար: Այստեղ մեր ուղղութիւնը փոխեցին և յայտարարեցին, որ տանելու են նոր կառուցած Կոտլոս արգելարանը: Միգանից ստալ հասածները ոմանց ուղարկել էին Նոր Միքիբ, ոմանց՝ Ուրալ:

1930թ. յունւար 1-ին, երբ ամբողջ աշխարհ ստանում էր նոր տարին, մենք Հասանք Կոտլոս: Այստեղ մեզ բոլորիս խուզարկեցին, վերցրին մեր մօտի գրամը և փոխարէնը տւին Գէպէաի բռներ:

Կոտլոսում պահեցին իրաւ օր, միճակացոյց-հարցարան լեցնել տւին, պահանջած ձեականութիւնները կատարեցին, և մեր խումբը ճանապարհ ընկաւ դէպի հիւսիսի՝ սառուցեալ երկիրները: Կոտլոսից արդէն երկաթուղի չկար, և մենք 400 վերստ պիտի անցնէինք ոտքով:

Անասելի տանջալից ճամբորդութիւն էր: Ճանապարհին գիշերները պահում էին գիւղերում հանգրտանալու համար: Տեղաւորում էին դպրոցներում կամ ախոռներում: Սառած, ձիւնոտ՝ ջրում էին ներս, առանց հազուապէս չորացնելու և առանց ուտելու: Ընկնում էինք իրար կողքի կպած, ինչպէս աղը դրած ձուկը սափաւում: շարժելու ոչ մի հնար չէր լինում: Պատահում էինք դէպքեր, որ մարդիկ դուրս դալու հնարաւորութիւն անգամ չէին ունենում և կեղտոտում էին իրենց տեղը: Հոտը ընկնում էր ամբողջ բնակարանը: Ամէն մէկս աշխատում էր դուրս ընկնել. գերա՞ դատում էինք մնալ դուրսը, 45 աստիճան ցրտին, ջանալով դժոխքում: Բայց շատ անգամ դուրս դալ էլ հնարաւոր չէր. պահակը չէր թողնում: Եւ մինչև լոյս անց էինք կայանում կէս ոտքի վրա, կէս չոքած, գարշելի մթնոլորտում:

Առաւօտեան շուտ բաժանում էին մէկ-մէկ սե-

լեռովա (աղի ձուկ) և 500 գրամ հաց, այնքան սառած, որ ատամը չէր մտնում: Եարուս էինք ճանապարհին, համարում էին, և ստալ էինք շարժուում:

Մեզանից ստալ այս ճանապարհով արդէն անցել էին 150 հազար մեզ նման կայանաւորներ: Ո՛վ էր տեղ հասել, ո՞վ մնացել — Աստուած գիտէ:

Մեր խմբից շատերը հիւանդացան: Դժուարանում էին նոյնիսկ ոտի վրա կանգնել: Մանուանդ սարսափեալ լի ծանր էր քաղաքացիներին համար. չէին կարողանում բայել: Այդպիսիներին պցում էին յետեից եկող սահանակների մէջ, բերում հասցնում էին տեղ: Յրտից ու քաղցից մահացողները թիւը անհաշիւ էր: Շքր մտանք անտառի խորքը, ալցտեղ արդէն բնակարաններ չկային: Գիշերում էինք ճանապարհներին շինած տաղաւարներում: Որտեղ կարելի էր տեղաւորել 500 մարդ, լեցնում էին 1500 մարդ: Մեր անկողիները բերում էին յետեից սահնակներով: Անկողիներին մի մտալ չուտայեց: կորցրել կամ դողացել էին:

Ճանապարհին մահացողներին դնում էին սահնակի վրա, բեղում-հասցնում էին նշանակած տեղերը, ուր կային մեռածները դէղեր: Դարած էին սրանց վրա և երեսները ծածկում: Այստեղ դիակները պիտի մնային մինչև դուրսը, երբ հնարաւոր կը լինէր դետինը փորել ու թաղել: Ճանապարհին, զանազան կէտերում, հազարաւոր դիակներ տեսանք այդ դրութեան մէջ:

15 օր տեղեց մեր ճամբորդութիւնը: Մեր շարկը բարձել էին մէկ-երկու փութի հաց կամ աղի ձուկ՝ մեք ճանապարհի պաշարը: Բոլորս ջարդւած, հիւանդ հասանք տեղ: Կիրժի փայտի պատրաստութեան կայան էր կոչուում մեր հասած տեղը:

Այստեղ մեզ դիւնորի պէս կանգնեցրին շարքով ու սկսեցին լոկէլ՝ ո՞վ ինչի ընդունակ է: Մասերի բաժանեցին և տեղաւորեցին տարբեր տաղաւարներում: Տեղը խիստ նեղածք էր, անկողին կամ պայտուակ ունեցողը մնաց դուրսը, ձեռք վրա: Եւ ամբողջ մի ամիս մնացին բաց երկնքի տակ, սարսափելի ցրտին, մինչև որ նոր տաղաւարներ շինեցին:

Տաղաւարներում էլ անտանելի էր. ո՞չ մի հնարաւորութիւն չկար նստելու կամ պարկելու: Ուշաբի պէս կպանք իրար ու մնացինք կանգնած: Կանգնած էլ քնեցինք: Ընկնելու վայտ չկար. ամէն կողմից յենարան ունէինք:

Գիշերը ժամը 3-ին լսեցինք. «Ուռքի՛»: Վաշտապետը, օրապահների օգնութեամբ, տաղաւարից դուրս էր ջրում մարդկանց ու շարքով կանգնեցնում՝ հաշիւելու համար: Առաջուց եկածները, աւելի փորձած, մեկ պզուռացնում էին, որ ամմիլպպէս դուրս գանք, թէ չէ կը ծեծւենք: Եւ, իրօք, աչքովս տեսայ, որ անկիւններում մնացողներին փայտի հարածներով դուրս քշեցին:

Դուրսը բուք ու բորան էր: Կանգնեցինք շարքերով, ըստ տասնեակների: Հեռուից լսեց ճրամայական մի ձայն, «Հանապալտ»: Պահակի պետն էր, որ կայտերը ձեռքին մտանքս կենդանուն ու բարեկեց. «Բարե՛ւ, բանտրական վա՛շտ»: Պատասխանեցինք. «Բարե՛ւ»: Ապա սկսեցին համբել ու խմբերով յանձնել պահակներին: Բաժանեցին պաշարը — ամէն մարդու 500 գրամ

ստոած հայ ե մի հատ սկիւղողա: Տխի նաև գործիքներ՝ կացին, սոց, թիակ եայլն:

Հրաման տրեց՝ ջելն աշխատանքի: Առաջ ընկաւ մի պահակ՝ յաղտերը ձեռքին: Նրան հետեցելնք մենք, որ մէկ-մէկ ոչխար պէս քալում էինք անտըրտունջ դէպի աշխատանքի վայրը, որ գտնուում էր 15 վերստի վրա: Տեղ հասնելուն պէս կարգադրեցին կանգնել: Բոլորս մի մարդու պէս, կացիններն ու սոցններն մի կողմ գցած, ուստայտո՞ ընկանք ձեռն վրա, և շիշ յետոյ արդէն ջնած էինք. միայն բարձր խոմփոց էր լսուում ամէն կողմ: Հանգստացանք, մինչև որ լոյր բացուեց, այնքան, որ հնարատը լինի ծառերի հասն ու բարակը տարբերել: Ապա, յանկարծ, լսեց զյլևար տասնապետի հրամանը՝ «Անցնել գործի»: Կարգադրութիւն եղաւ նախ պատրաստել թիակներ՝ մաքրելու համար ծառի արմատի շուրջի ձիւնը, որ կարելի լինի ծուկի իջնել՝ սղոցելու համար: Նորեկներէս բաժանեցին հնարի մէջ, որոնք արդէն վարձեցել էին ծառ կտրելու արհեստին և մեզ էլ պիտի սովորեցնէին:

Մեզ բացատրեցին որայ աշխատանքի պայմանները և յայտարարեցին, որ ովքեր կարողանան պատրաստել նշանակած քանակը, երկկողման կը ստանան մի շերտի աւելի ուտելիք: Ամէն մի մարդ պէտք է պատրաստէր երեք եւ կէս խորանարդ փայտ, պիտի կտրէր, հիւղերը մաքրէր, ծառերի երկարութեամբ չորս տեղից ձեռքի հաստութեամբ կեղծ պիտի վերցնէր, պիտի կտրատէր ըստ տրւած չափի ու հաւաքէր մի տեղ: Մէկ մարդու ուժից վեր բան էր:

Ամբողջ օրն այդպէս աշխատեցինք ջրտնաթոր: Ուշ երեկոյան կարգադրեցին թողնել գործը և վերադառնալ տաղաւարները: Ի հարկէ, մեզանից ոչ ոք չկարողացաւ լրացնել նշանակած չափը, բացի առաջուց եկածներէից, որոնց մէջ կային և ատաղձագործներ:

Տաղաւարների առջևը նորից կանգնեցրին շարքով: Դուրսը, ձիան վրա, արդէն պատրաստ էր սպուրը ամաններով: Տասնեակներով անցանք ու սկսեցինք ուտել ընդհանուր ամաններից: Ո՛չ մի քաղցած չուն չէր ուտի այդ կերակուրը. հոտած ձուկը ուղղակի տակառով, առանց փորտիքը մաքրելու, լցրել էին կաթսայի մէջ ու եփել և անուճը դրել էին՝ սպուր: Ձկան վարժած ուտանքը կերան. մենք՝ կողկասցիներս զըրանքով յետ քաշեցինք:

Ընթրիքից յետոյ ջելեցին տաղաւարները: Ամէն տաղաւարի պէտ, դրանը կանգնած, փայտը ձեռքին, հաշուում էր և ներս թողնում: Այդ ձևով էր ստուգում մարդկանց:

Նորից տաղաւարում կանգնած, յենած, չոքած կամ ով ճարպիկ էր՝ վերի յարկերում պարկած, առանց չորանալու, առանց հանելու քնեցինք: Հնարաւորութիւն չկար ոչխրներից մաքրելու. դուրսը ցուրտ էր, իսկ ներսը անկարելի էր քաբուել:

Եւ այսպէս՝ ամբողջ ձմեռ: Կայանի ամբողջ վարչութիւնը կաղձում էր գողերից, ջրհակաւ յանցաւորներից ու չէկիտաններից: Ամենքը կայանաւորներ էին, բացի մէկից: Այս մէկը նշանակած էր կենտրոնից և կառավարում էր 15-20 հազարանոց կայանը:

Քաղաքական կայանաւորներս կողմից մի ջանք

անգամ գիտում արեց՝ խնդրելով առանձնացնել մեզ գողերից ու ջրհականներից առանձին տաղաւարներում: Մտացեց մերժում: Եւ այնուհետև մեզ հետ վարում էին աւելի խիստ: Վարիչների նրանք՝ ովքեր ծեծելու կամ հայհոյելու ընդունակութիւն չունէին, անմիջապէս վճարում էին: Վաշտապետ, օրապահ ու տասնապետ լինելու համար հարկաւոր էր լաւ հայհոյող, ծեծող ու գաղտնի մատնութիւններ անող լինել:

Օր չէր անցնում, որ սահմաններով ստանձներ, վերաւորներ կամ մահացածներ չբերէին աշխատանքի վայրից: Մարդիկ՝ դրւած կիսանքից՝ իրենք իրենց կախում էին անտառում: Երեկոյան, երբ ստուգում էին, ամէն ուր պակասում էր մարդկանց թիւը: Դէպքեր են եղել, որ անտառտեան, անտառում, ճանապարհից դուրս, գտնել ենք կախած մարդիկ: Փախչողների հաշիւը չկար, և համարեա թէ ամէնքն էլ բռնուում էին, երբ հասնում էին գիւղերը հայ խնդրելու: Այդ շրջանի գիւղացիները ամբողջ ձմեռ փախստականներ էին որսում ու կառավարութեան յանձնում. ամէն մի բռնած փախստականի համար ստանում էին կէս փութ ախլու:

Բռնածների մեծ մասը նեթարկւում էր զնդակահարման: Ամէն երեկոյ, ստուգման ժամին, կարգացում էին փախչողների, բռնածների ու զնդակահարածների անունները: Եւ չնայած այդ բոլոր անարհուումներին ու զժարութիւններին, փախչողների թիւը չէր պակասում. այնպէս անտանելի էր կեանքը...

Մի անգամ փախել էին երեք ընկերներ: Անտառում երկար թափառելուց յետոյ, կողմնում են ճանապարհը: Քաղցածութիւնը ստիպում է երկու աւելի մօտ ընկերներին՝ սպանել երրորդին և ուտել: Նրանք յետեից կացնով խփում սպանում են ընկերոջը և միւր խորովելով՝ ուտում են: Ո՛չ ստանալով՝ նորից սկսում են թափառել: 13 օրից յետոյ, գտնում են կողմնում ճանապարհը, որ նրանց բերում հասցնում է նորից... մեր արգելարանը: Երեք օր անցած, ստուգման ժամին յայտարարեցին, որ երկու փախստականները զնդակահարած են իրենց ընկերոջ միւր ուտելու համար...

Մեր այստեղի տանջանքները տեւեցին մինչև մայիսի կէսերը: Մայիսի կէսին դազարեցրին անտառի աշխատանքը՝ ծառ կտրելը և բոլոր առողջներին, որոնք կարող էին ոտքի դրա կանգնել, ջելեցին Կիրժ գետակի ափը, որտեղ արդէն դիպում էին տարերի բարձրութեամբ փայտեր: Այդ բոլորը մեր կտրած փայտն էր, որ բերւած էր այստեղ ձիւն սահմաններով և տրակտորներով:

Դեռը ծածկւած էր սառոյցի հաստ շերտով: Մեզ հրամայեցին կտրատել սառոյցը և հալչող ձիւնից ու սառոյցից արհեստական դէտ ստեղծել: Բոլորիս ձեռքեր տեին սառոյց կտրող բրիչներ ու սեպեր, և սկսեցինք սառոյց կտրատել ու դէտ բանալ: Մեր յետեից՝ մի ուրիշ խումբ փայտերը թափում էր Շուրքը և հրելով հասցնում մինչև Արֆուրդ մեծ գետը:

Այս ձևով տեւեց մօտ մի ամիս: Աշխատանքի ժամանակ, յանկարծ, սառոյցը ձեռքում էր և հարկաւոր մարդիկ թափուում էին Շուրք, սառոյցի տակը, որտեղից ջելերիւր իր յաղորդում դուրս դալ: Այդպիսի դէպքեր յաճախ էին պատահում: Առաւօտեան ընկերներս աշխատանքի ջելելիս՝ հրածեղտ էինք տալիս ի-



բար՝ մտածելով, որ ստույցի տակ կրկիննք և այլևս միմեանց չենք տեսնի:

Գետի ափին աշխատողներս ապրում էինք բաց երկնքի տակ: Այստեղ թէկուզ աշխատանքը աւելի դժւար էր ու վտանգաւոր, բայց գոնէ մի բանի համար ուրախ էինք. ո՞րքո՞ւն այլևս չէր կարողանում անել ու շարժուել՝ շարունակ մտալով թաց հաղորատի մէջ: Ուտելիքն էլ տարբեր էր. այլևս չէին տալիս ո՛չ սեխոռկի ապուր, ո՛չ էլ ձիու մտից բորչչ. ապրում էինք սոսնց տաք կերակրի:

Երբ հասանք Ուֆտուրգ, անտառից դուրս, մեզ փոխարինեցին նորեկ թարմ ուժերով: Մրանց աշխատանքը հետեւեալն էր. նաւահներով հաւաքում—կապում էին փայտերը, յատուկ էին կազմում և նաւերին կապելով՝ տանում Հանում էին Հիւս. Դուխա գետից դէպի Սպիտակ Մովը: Եւ այստեղից՝ արտասահման:

Յունիս ամառի վերջերին մեզ նորից յետ տարին, Կոտլոս: Այստեղ կարողացանք իմանալ, որ 20 հազարից վերադարձել ենք միայն 8 հազար. մնացածները կամ զնդակահարուել են, կամ ընկել են ստույցի տակ, մահացել են դանաղահիւսնորթիւններից կամ կորել անհետ: Մեր հարեան արգելաբանում — Կոմանդիրովկա Կուլիւկով — ասի՞րից մեռել էին 25,000 կալանաւորներ: Արգելաբանից վերադարձուածները բոլորն էլ հիւանդ էին ընդացուում. ման էին գալիս փայտով, ոտները թուշի պէս կապուել էին, շատերի ատամները թափւած էին, ընդերքը կապտած ու քաղքալած: Այստեղ նրանց բժշկում էին թթու կաղամբով...

Այդ ժամանակները ամէն օր Ռուսաստանի խորքերից զալիս էր 2-3 գնացք՝ Սարատովի, Կազանի ու Վոլոդնիսի նահանգներից, ամենքը ընտանիքով, մեծով—փոքրով, Հետները ասած տնից ինչ որ հնարաւոր էր: Վազոններից իջեցնելով զլում—բերում տեղաւորում էին մեր սաղաւարներից ոչ—հոուս գտնուող ընդարձակ օտափարակը: Եւ այդտեղ օրերով պահում էին նրանց, րաց երկնքի տակ, անմրելին ու ցեխին: Թշուառները սպասում էին նաեւ՝ փոխադրելու համար դէպի հիւսիսային ճախճախուտները: Աքորտական ոուս զիւղացիներ էին...

Յետ զալիս, ճանապարհին, շատ էինք հանդիպում նման աքորտաւորների. խեղճերը լացով պատմում էին իրենց դժբախտ կեանքի մասին, ասում էին, որ օրերով Հայ չեն կերել: Հայ տալիս են միայն նրանց, ովքեր աշխատում են, իսկ իրենք տկար են կամ հիւանդ, անկարող են աշխատել, չեն կարողանում գետափին աւազի մէջ թաղած հաստ գիւղանները հանել ու գետը նետել: Տեղական զիւղացիներն էլ ի վիճակի չեն օք-

նելու. իրենք էլ սարտափելի աղքատ են և օդնութեան կարօտ:

Մի ժամանակ մնացինք Կոտլոսում ու Հանգստացանք: Այդ մի յատուկ յանձնախումբը գրտեց առողջներին հիւանդներից: Առողջներին որոշեցին ուղարկել Սպիտակ Մով, իսկ հիւանդներին՝ կաղերին ու անատամներին, մարդկային կերպարանքը կորցրած կըմախքներին՝ Ուսու Սիտոլս:

Ես էլ առողջների մէջ էի: Մեր խումբը, 300 կալանաւորներ, Կոտլոսից Հիւս. Դուխա գետի վրայով, նաւերով, քեցին դէպի Արիսանդուլսկ և պապ՝ Սպիտակ Մովի եղերքը: Այստեղ մեզ տեղափոխեցին Էկոնոմիս կոչւած արգելաբանում: Մովի ամբողջ եղբրքին կանգնած էին եւրոպական նաւեր, որ բեռնում էին հարիւր հազարաւոր կալանաւորների մահացու տանջանքներով կտրւած ու մաքրած գերաններով: Մենք էլ պէտք է գերաններ հասցնէինք այդ նաւերին:

Սպիտակ ծովի ափին գեղեր ու ցերեկ լոյս էր: Աշխատանքը կատարում էր 24 ժամ անընդհատ: Աշխատանքի պայմանները նոյնն էին. աշխատեցնում էին անատունի պէս: Ուտելիքն էլ նոյնն էր. ձիու միս, հոտած ձուկով ապուր և օրական 500 գրամ ցեխանման հաց:

Մեր աշխատանքն էր՝ ջրի բերած գերանները հանել ափը: Այստեղից փոխադրում էին օտար նաւերը: Ի՞նչ էին մտածում այդ նաւերի վրայից մեզ զիտող եւրոպացիները, մե՛զ, որ ճորտի ու սորունկի վիճակում էինք գտնուում, բանտարկւած էինք, ցնցոտիապատ, քաղցած ու միշտ փայտի ու հայտնաբերի ենթակայ, մե՛զ, ճաշարհին առաջին սոցիալիստական հանրապետութեան քաղաքացիներա՞...

Նրանք ի՞նչ էին մտածում մեր մասին, չգիտեմ, բայց մենք նրանց մասին լաւ բան չէինք մտածում: Աւելին. մենք անծիմում էինք նրանց, հայհոյում էինք, որ մի կողմից քաղաքակրթութեան անունն են շահագործում, իսկ միւս կողմից՝ շահագործում են մեզ, ամբացնում են մեր սորունկի շղթաները: Ա՛յս է քաղաքակրթութիւնը: Ա՛յս է մարդկայնութիւնը...

Ինձ համար այլևս անտանելի էր այս կեանքը: Է՛ր օր էլ տանջեցի Սպիտակ Մովի եղբրքին: Էլ անհնար էր դիմանալ: Եւ ես որոշեցի փախչել: Փախչել ինչ և լինի, թէկուզ մահուան գնով: Փախչել, փախչել...

Եւ մի գեղեցիկ օր հասայ նպատակիս. գաղտագողի նաւով անցայ Արիսանդուլսկ ու այստեղից... արտասահման:

Փախուստս էլ մի իսկական հեքեաթ էղաւ, ինչպէս և աքորտի մզճաւանջը:

# Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Կախաղաններով սկսու քեմալպակտութեան նոր տարին:

Անցեալ դեկտեմբերին Մէնէվէնի մէջ երևան հանւած գաւապրութեան հեղինակներէն և մեղաւկիցներէն

28 հոգի յունւար 29-ին դատապարտուեցան մահուան: Մահապարտներէն Շէյխ Էսատ, մօտ 90 տարեկան, մեւաւ յունւար 31-ին, մահաւճիւր լսելէ և իբրև թէ խոստովանութիւններ գրի առնելէ յետոյ: Նոյնքան

խորհրդաւոր պարագաներու մէջ մեռաւ երկրորդ մը . 4 հոգի պիտի քաշեն ցմահ բանտարկութիւն, օգուտեւ լով իրենց տարիքն, քանի որ թրքական սահմանադրութիւնը շարտօններ կախազան բարձրացնել 60 տարեկանէն վեր կամ անչափահաս մարդիկ : Մահապարտութենէն մէջը փախաւ կախազանի տակին, իսկ մնացեալ 21 հոգին, որոնց մէկը Ղեհայ, միւսը՝ Աւրպանցի, և մեծ մասը չէյիսեր, հրապարակաւ կախեցան փետրար 3-ի առտուն կանուխ, մասնաւորապէս պարտատուած կախազաններու վրա : Չեղանորոգէն, մահապճիւրը յանձնեցաւ Ազգ. Մեծ Ժողովին քննութեան, և 23 Ժամ շանցած հաստատեցաւ :

Հակառակ թիւրք թերթերու բուրբ ազմուկին, տակաւին չէ պարզուած այս դաւադրութեան ամբողջ պատկերը : Յետախիժական կամ սուլթան-խալիֆայական, ամէն պարագայի մէջ թուող հակաքեմալական ձեռնարկ մըն էր, որ խեղդեցաւ սարմին մէջ, Մուսթաֆա Քեմալի աչքին առջև : Դէպքը երևան հանուցաւ 1930 զեկտեմբեր 26-ին, Մէնէմէնի մէջ, երբ ամբողջ ըմբոստացաւ տէրվիշներու առաջնորդութեամբ և Մուսաձեռի դրօշը պարզելով ցոյց էր կատարեց քաղաքին մէջ : Ներստաղծ պայայ մը, որ կը փորձէր միջամտել, սպաննեցաւ : Ամբողջ ոտքի տակ առաւ սպան, կտրեց դուխը և տէղի մը վրա անցընելով, պատուոց քաղաքին մէջ : Ժողովուրդին մէկ մասը անտարբեր կը դիտէր, իսկ միւս մասը ուրախութեան կանչով կարճակէր և կը ծափահարէր : Քաղաքին կառավարիչը, ոստիկանապետը և ընդհանուր դատախազը, ինչպէս և ուրիշ պաշտօնեաներ երկդիմի դերք բռնեցին : Ըմբոստեանը յաջողած էին իրենց կողմը քաշել նաեւ մէկ վաշտ զինուորներ, որոնք զինաթափ եղան և բանտարկեցան :

Այս է զէպքին համառոտ պատմութիւնը, համաձայն թիւրք թերթերու : Կառավարութիւնը անմիջապէս դիմեց արտակարգ միջոցներու : Հազարէ աւելի ձերբակալութիւններ կատարեցան Մէնէմէնի, Մաղմալի, Պալքէսիւրի, Իրզիլի և Պալասի մէջ : Սարսափը տարածեցաւ մինչև Էնկերի և Ատանայ : Պաշարման վիճակ հրատարակեցաւ ըմբոստ շրջանին մէջ, ամէն կարգի երթևեկ և հաւաքոյթ, նոյնիսկ հարսնիք և թըլ-փատութիւն արգիւտելու պայմանով : Ընհետապնդումներ, խուզարկութիւններ ու փոխադարձ մատնութիւններ՝ մինչև այսօր, ոստիկանական շրջանակներէն մինչև մամուլի էջերը :

Ինչպէս ըսինք, զէպքը չէ լուսարանուած ամբողջովին : Կառավարութիւնը կուգէ համոզել թէ ան դործն է նախշիպէտ սպանդին, որուն պետն էր չէյիս Եսատ (իսկ փոխանորդը՝ հուշակաւոր չէյիս Սայիտը, որ կախեցաւ Տիգրանակերտի մէջ, 1925-ին) : Այս աղանդը ունեցած է իր փառքի օրերը, սուլթաններու օրով, և իր հեղինակութեան ու հարստութեան ուժին տակ պահած՝ օրւան մարդիկը : Առատութեան և վախճելի վառարաններ էին այս աղանդին «թէքէ»ները, որոնք թէև խաւարեցան ախարակահանցամտ օրէնքին հետևանքով, բայց կը պահէին իրենց հմայքը, գոնէ մինչև Մէնէմէնի զէպքը, և այսուհետեւ է որ պիտի ստանան մահացու հարածը :

Արդ, իսկապէս այս սպա՞նդն էր որ սարքեց Մէնէ-

մէնի զէպքը, թէ անոր ետին անպատասխան էր այլապէս խորհրդաւոր ուժ մը, որ կը խուսափի, տակաւին, Մուսթաֆայ Քեմալի հաստատութիւնն :

Դէպքին հետ գուրկիթաց, անդի ունեցաւ զէպի Սիւրիա փախուտը յանդուպն՝ դործիչի մը, Ալպաիւլ Գաստիը Քեմալի պէյի, իր չորս ընկերներուն հետ : Երբ Ֆէթհի պէյ անփաստուեակ հաշուեյարարի մը ենթարկեց իր կուսակցութիւնը, Սէրպէսթ Ճիւմհուրիէթը, Քեմալի պէյ կազմեց «Ահալին», իբրև ընդդիմադիր ուժ : Վարած է բարձր պաշտօններ : Մտնի ծանոթ՝ Մուսթաֆա Քեմալի, յաճախ ստպարէզ կարդացած է անոր : Իսկ վերջին անգամ, տակաւին քանի մը ամիս առաջ, իր թերթին մէջ կազարարեցր անոր թէ պիտի ճգուի ժողովուրդին ոտքերուն տակ : «Փաշա՛, մենք խելացի մարդու տեղ դրինք քեզ, բայց դուն...» :

Միւս կողմէ, կառավարութիւնը ինք խոստովանեցաւ թէ՛ զէպքը ունի ծաւալուն հանդամանք : Աւելի ծանր քան կենթադրուէր : Մէնէմէնի պոսթիւումը մէկ օրակն է ընդարձակ ցանցի մը, որ հետզհետէ պիտի բացուի :

Ու վերջապէս, փաստ է որ ձերբակալուած կամ կասկածի ենթակայ հարիւրաւոր թիւրքերու մէջ, աչքի կը զարնեն Ֆէթհի պէյի լուծեալ կուսակցութեան անդամները : Քեմալական մամուլը չի վարաներ հրապարակաւ ամբաստանել ընդդիմադիրները՝ իբրև ներշնչող կամ զրդիչ պատահած զէպքերուն : Համէթ փաշայի նոր օրկանը, «Նիզըլապ», քրքե օրը ցերեկով :

— «Անկախութիւն է մաքագործոյ հայրենադաւնը, Ամերիկացի միսիոնարներէն վարած» : «Գիւպէշ»-ները, «Քոր Օզլու»-ն կեցծ յամենայաւաւաւանց հեղինակները : Արիփ Օրաւները, Զէքերիաները, Պիւրիան շահիտները ի՞նչ տարբերութիւն ունին Մէնէմէնի տէրվիշ Մեհմետէն (որ կտրեց երիտասարդ սպայ Գուպայ պէյի գլուխը և ինճի սպայանեցաւ) : Ունին միայն ապիստի և բազմամի տարբերութիւն : Այլապէս ոգին նոյնն է : Երբ խոսվարարին գլուխը կը ճգնեմք, պետք չէ ներքեմք նաև այդ գլուխը ներշնչողներուն :

Այս տեսակէտն ուշագրաւ է նաեւ վարչապետ Լամէթ փաշայի զեկուցումը՝ Ազգ. Մեծ Ժողովին մէջ :

— «Առաջին տեղեկագրին վրա սա տպաւորութիւնը կրեցիմք, — երեք-չորս հոգի, պետական օրէմքին դէմ շարժած ըլլալով, անմիջապէս իրենց պատիժը կրած են : Յաջորդ տեղեկագիրները յայտնեցին թէ փուլայ պէյը վիրաւորել յետոյ, աւազակները յարձակած են անոր վրա և գայլ սպաննած են վայրագ մեղով մը : Միևնոյն ատեն մեր օւշալուրիւնը գրաւեց այն պարագան որ ներկայ ժողովուրդը անգգայ և անարարք մնացած է դէպքին առջև... դարձաւ ստեսմի գործածում : Բնակահարաբ, կրօնական այս վարա՞քորին ետին ուրիշ նպատակներ ալ կային» :

Այս թուրքն յետոյ, իբրև ծանրակշիւ պարագայ, աւելցնենք թէ՛ բանակն ալ խառնեցաւ դատումի դործողութեանց, և մինչև այսօր խոստութեամբ կը հակամբողջ Իրզիլի շրջանին մէջ : Իսկ, Մէնէմէնի զէպքին բուն թւականն անգամ դատանի պահեցաւ, մինչև որ լուրերը մաս-մաս իրենց ճամբան գտան զէպի Եւրոպա : Անկասկած, Ֆէթհի պէյի ետամսայ ուղիմաս-

ղը — ընդգրկմաղիր կուսակցութեան մը փորձը — ունեցած է մեծ դեր՝ այս ղեկավարի խմբումն մէջ: Փարիզի նախորդ դեպքանիկ զրդողի մուտքը Իդմիրի մէջ, անհամար բազմութիւնն ուր զարհուրելի գոտուած-գոչումներով, որոնք տեղի տւին արինալի ընդհարումներու, և սարսեցնի Պալլէ՛ր՝ Մուսմաֆա Քեմալի կուսակցութեան հիմնը, խոր հետքեր ձգած են այդ վերաւոր շրջանին մէջ:

Ճէթհի յուզումէն կուլար ծով բազմութեան առջև, որ կարծես սգոտարար մը կողովումէր, «անօթի՛ կնք» պոտալով: Բերանները լայն բացած էին և կոզնային, մինչև այդ օրը չլուած բառեր դուրս տալով: Ընդդիմաղիր թիւթները սուկիկ պէս կը բուռնէին: «Պալլէ»-ի անդամներ, վարչիներ, խմբագիրներ, թերթեր կը միանային ամբողջին, յանկարծ դարձի դալով: Հասած էր ժամը՝ և րոտակալութեան լուծը թօթելու, ազատութիւնն առնուած վիսիւրու: Ամէն համեմատութիւն պահելով, ինչպէս Իթթիհաւը սմբցաւ 1909 մարտ 31-ի առաջին պոռթկումին, Մուստաֆա Քեմալի կուսակիցներն ալ պահ մը խաւարեցան, և սկսան չըքմեղանքի խօսքեր արտասանել: «Ալ՛ հերիք է, քաշէ՛»,- կիցողակները ժողովուրդը, ամենակարող Լամէթի երեսին, գանալան թերթերու բերնով: Ոչ ոք կը հասկնար թէ թէ՛ս դիւալին խաղ մը սարքած էր Մուստաֆա Քեմալը ինք, յանկարծ «ընդդիմաղիր» կուսակցութիւնն մը կազմելու պաշտօն յանձնելով իր վաղեմի բարեկամին, Ճէթհի պէյի, և մէկ հրամանի վրա երեսփոխան ընտրել տալով զայն:

Ճէթհի նժարին մէջ դրաւ իր բովանդակ իմաստութիւնն ու ազդեցութիւնը, բեր բարիքներ խոստացաւ ժողովուրդին, յուսաց դրած գտնել Եւրոպայէն, չափուելով Լամէթի հետ, որ կրճիւած է Մուսկալի, իր կուսակցութեան ուժը փորձեց քաղաքացիտական ընտրութեանց մէջ, և չարաչար պարտուելով, բռնեց անփառունակ նահանջի ճամբան: Լուծեց ապսպրանքի վրա կազմած, սարքովի կուսակցութիւնը և դարձաւ սոսկական անճար մը: Կարելի է ըսել թէ վախցաւ, որովհետև արեան հոտ կուզար նոյնիսկ Ազգ. Մեծ ժողովի շրջանակէն:

Ճէթհի պէյին չարիւր օրւան փառքը, հակառակ իր խաւարման, ունեցաւ իւր ազդեցութիւն: Բացաւ լայն ճեղքեր, յոյս և կորով ներշնչեց շատերուն, և աճաւանիկ ունեցանք Իզմիրի երկրորդ ղեկը մը, զոնէ իբրև անուղղակի հետեանք: Իր անկումէն յետոյ, պակսեցան կամ իման պոռոցող ձայները, բայց չզարքեցան, և մինչև այսօր ալ չեն դադարած: Անշուշտ, Մէնէմէնի 22 կախաղանները և տակալին աճ ու սարսափի ուրիշ միջոցներ աճաբեկած են բողոքողներն ու տրտընջացողները: Բայց կայ գետին մը ուր կրնան բաւական ազատ նստակիւն: Կանխարկեց տնտեսական տազնապին: Մանաւանդ որ, «Կապին» ալ ճիշտ այդ ինդիքը սուսմանասիրելու, «ժողովուրդին ճեսըը իմանալու» նպատակով ճամբորդութիւններ կը կատարէ այս միջոցին: Երբ օրինակը վերէն կը տրւի, կարելի է խօսելու ձեւեր գտնել:

\*\*\*

Ինչ խօսք որ, անցեալ տարւան վրա, աւելի ծան-

րացած է քեմալայտութեան կլմտական և տնտեսական ճշմարտութիւնը:

Հանքային Պարտքի տոկոսներուն վճարումը կը մնայ միշտ սոսկալ: Բամեստերերուն կողմէ պատերազմները ճարարակի պէս բանեցան Փարիզէն և Լոնտոնէն դէպի Պոլիս և Ինկիլտի: Քննիչներ զացնի ու եկան, մանրամասն տեղեկագիր ներկայացնելով: Քննադատելով Թիւրքիոյ տնտեսական քաղաքականութիւնը, հաստատելով հանդերձ անոր քրոնիկ տազնապը, պատերազմները կը փոխառին թէ կնկիւրի կրնայ վճարել պարտքերը: 1930-ի վերջերը, սպառնալիքներ ալ տեղացին, բայց Թիւրքիա ունէր մէկ պատասխան — Չեմ կրնար: Բարեփոխեց 1928-ի պայմանագրութիւնը: Իսկ օտար պահանջատէրները, գործը գիտցող սեղանաւորներու պէս, վար դրին աւանդ գումար մը, հինգ միլիոն ոսկի, իբր՞՞ թերհաշի... Եւ հիմա ապաւինած են իրենց պետութեան ուժին (մասնաւորապէս Փրանսացիները), Թիւրքիոյ յարգել տալու համար իր ստորագրութիւնը:

Տազնապին ծանրութեան վերջին ապացոյցը, — 1929 — 1930-ի 226 միլիոն ոսկի կլմտացոյցը այս տարի իշխեցուած են 185 միլիոնի, ինչ որ արտակարգ բան է: Քեմալական իշխանութեան յարաճուն վերելքին մէջ, պետական նախաձեռնելն ալ կը բարձրանար քանի մը տարիէ ի վեր, և աճա յանկարծ կը զեղչի 41 միլիոն ոսկի: Մասնագէտներ անընդունելի կը գտնեն նոյնիսկ այդ 185 միլիոնը, քանի որ Թիւրքիոյ շրջաբերութեան հանած թղթադրամին դոււարն է ընդամենը 150 միլիոն ոսկի:

«Կրամական տազնապը, որ հետզհետ կաւելուայ, այսօր իր գագաթնակէտին հասած է: Միւս կողմէ, դրամատունները աճին տեսակ վարկ դարպեցուցած ըլլալով, երկրին տնտեսական և առևտրական շարժումը ջլատուած կը մնայ: Ելմտացոյցի մուտքի բաժնին մէջ արձանագրած գումարները կարենալ իրականացնելու համար, ի գին աճին բանի պէտք է օտար դրամ մտցնենք երկրի մէջ և աշխատինք շահատուններ գտնել մեր արտածումներուն համար»: («La Turquie Libérale», Պոլիս):

Թւենք, շարք մը փաստեր՝ բուն տնտեսական կեանքի մասին: Բուրյուն ալ թրքական աղբիւրէ:

— Սև Մովու շրջանը, ուր այցելեց Կազի փաշան, ժամանակին ամենէն բարեբեր հողամասն էր: Հայրենակիցներ, որոնք ժամանակին 100.000 ոսկիներու ձեռք կը զարնէին, այսօր օտարներ ձեռք երկարելու վիճակին հասած են: Շատեր սնանկացած են, շատեր փճացած: Սեւ Մովու շրջանը երբեք այսքան գէշ կացութիւն ունեցած չէր: Արտադրողներուն սպրանքները կը փոխ մթերանոցներու մէջ: Անասուրի հարաւային և հարաւ-արեւմտեան շրջաններն ալ աննախընթաց տազնապներ մատուած են: Եւ այս ընթացքով, այս շրջանները որոնք ամբողջ Թիւրքիան կը կերակրէին, պիտի հասնին անպիտի վիճակի մը ուր արագիւններ և բուրբ պիտի թափին անոց գործարաններուն վրա, իսկ այրեպանները և բամպակի դաշտերը սարդի սոսայի պիտի կապեն: (Եարքին խմբագիր Արիֆ Օրուն պէ, որ այժմ Իզմիրի քանտին մէջ կը բաւ իր մեղքերը):

— «Տարրինակ սովորութիւն մը ունիւք, — երկ-

բին մէջ պատահած ազէաները կարևորութեամբ նկատի չենք առնել: Օրինակ, «Նեղոս թիւն» լուրով անցանք այն սովին վրայէն, որ անցեալ տարիներուն այրեցմբ կեց ցանքը և հեղորոնակով Անաստուրի 8-10 նահանգները, նոս հոն ցրելով 100,000 հոգի:

«Այս անպա՛մ ալ նոյն բանը: Ներկայիս ահաւոր պահարարստ մը կը տիրէ Արևելեան Անաստուրի մէջ: Հարիւր հարարուտը անասուններ ստուկած են կամ պիտի ստուկին: Մարդ յուր ունի՛ր: Այդ հիւանդութիւնը յաճախ մեր երկիրը կանցնի Կովկասէն կամ Իրանէն: 1922-23-ին, պահարարստը էրզրումէն անցաւ մինչև Արբելիկապոս և վարակեց բոլոր նահանգները: Ձրոյցի մը համաձայն՝ կէս միլիոն է կտորուած անասուններուն թիւը: ուրիշ գրոյցի մը համաձայն՝ մէկ միլիոն: Եթէ մէկ անասունը 50 ոսկի հաշուենք, ահաւոր թիւի մը կը հասնի միասը: (Հիւր Ատամ = ձկնառ Մարդ», Պոլիս):

— «... Պոլիսը, երկրին մտաւորական այս գեղեցիկ կեդրոնը, այսօր կը դալարի աննախընթաց թշուարութեան մը մէջ: Անօթութիւնը և դրամի չգոյութիւնը ամպի նման սեղցուցած են Պոլսոյ հորիզոնը... Իրամատրները ձեռնածալ կը սպասեն, վարկը և վստահութիւնը պատմութեան անցած անհաստալի բաներ են: Բնո՛հ. պատերազմի ամենէն սև օրերուն անգամ, ժողովուրդը տնտեսական այսքան ահաւոր տագնապի մ' տուած չէր:

«... Վաճառականը անօթի, պատօնեան անօթի,

Հանգստեան կոշածը անօթի, որբերը և այրիները անօթի, երկիր մը ուր մէկ ծալքէն միւսը մարդիկ անօթի և ժերկ են»: (Հիւր Կապէթը = ձկնառ Լրագիր», Պոլիս):

\*\*\*

Ինչպէս ըսինք, ույս բոլոր արտայայտութիւնները ուժ կանեն Մուսթաֆա Քեմալի ճամբորդութիւնէն: Ճեթ-Էմալթ աքրորմարտի ընթացքին, Թիւրքիոյ նորօրինակ սուլթանը համոզուեցաւ թէ իսկապէս խոր գոգո՛ւթիւն կը տիրէ ժողովուրդին մէջ, և ուղեց անձնապէս պրպոտել: Եւ հիմա անոր աչքերուն մէջ կը նային ընդդիմադիրները, աղերսելով:

— Փաշա՛, զնա տես և զարման գտիր...

Դարձանք — մեծագումար փոխառութիւնն է, որմէ և՛ կողեւորին և՛ կը վախնան քեմալականները: Տակաւին ուրիշ խնդիր թէ՛ այսօր չկայ սեռ պետութիւն մը որ տրամադիր ըլլայ դրամ փոխառութիւններէն, ստանց փոխարէն ստանալու թանկագին արաւականներ:

Արտասահման ապաստանած թիւրքերն ալ, որոնք ո՛րեք իրական կամակերպութիւն չունին, այս միջոցին կոչը և զբոյժները կը հրատարակեն ո՛րեք փոխառութեան դէմ, գրուչացնելով եւրոպացիները: Կը յայտարարեն թէ Թիւրքիոյ սահմանադրական կողմավարութիւնները չպիտի ճանչնան նոր փոխառութիւնները և պիտի համարեն պարզապէս քեմալականներուն տրած գումար:

# Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ո Ւ Մ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒՄ

Հայ բոլշիւիները պարծենում են Հայաստանի տնտեսութեան անօրինակ և «ապշեցուցիչ արդիւնքներով»: «Քորհոր՞ Հայաստան»-ը գրում է: «Մեր երկիր էկոնոմիկան այնպիսի աննախընթաց վերելք է ապրում, որպիսին չէր տեսել մարդիկ թիւնը պատմական և ո՛չ մի ժամանակաշրջանում»: Հայկովկուսը իր 28 նոյեմբ. «Ճանիթեստով» յայտարարում է, որ «խորհրդային իշխանութեան տարւ տարին Հայաստանում նշուած են խոշորագոյն յաջողութիւններով սոցիալիստական շինարարութեան բոլոր ասպարէզներում»: Հայ գործկուհի նախագահ Կասանը, ժողովուրդի նախագահ Տէր-Գարբէղեանը, Հայկովկուսի քարտուղար Խաննիանը, բոլոր մեծ ու պատիկ կոմկուսականները, բոլոր հաստատափոխ Լէօնին ու Երվանդագեղները միարեան փաստարանում են «շինարարական Փրոնտի» գոյանաւած յաջողութիւնները: Լուս է միայն ինքը ժողովուրդը՝ Հայ գիւղացին, Հայ բանուորը, արհեստաւորն ու ազատ մտաւորակները, մինչդեռ Եթէ սրանք յօսեալու հնարաւորութիւն ունենային, ինչե՛ր-ինչեր պիտի չպրտէին այդ անպատկառ ստախոսների երեսին...

Հայաստանում կատարւած «սոցիալիստական շինարարութեան» «ապշեցուցիչ արդիւնքները» մասին փաստեր շատ կան, բայց մենք կը սահմանափակենք միայն բոլշիւիկեան պաշտօնական աղբիւրներով և ցոյց կը

տանք, թէ, իսկապէս, ի՞նչ «ապշեցուցիչ» բաներ են սեպի ունենում «խորհրդային էկոնոմիկայի» ասպարէզում:

Յայտնի է, որ այսօրայ Հայաստանի տնտեսական շինարարութեան գլխաւոր մտահոգութիւնը ոռոսական արդիւնաբերութեան հում նիւթեր մատակարարելն է: Հայաստանը դադութի վիճակ ունի Մոսկուայի հանդէպ: Ընչտ այնպէս, ինչպէս Հնդկաստանի կամ Մոլդուանի գիւղացին բամբակ կամ բուրդ է հայթայթում Անգլիայի գործարաններին, Հայ գիւղացին ու բանուորն էլ Ռուսաստանի գործարաններին համար բամբակ, պղինձ, տուֆ, պեմզա և այլ կարգի նիւթեր է հասցնում: Եւ ինչպէս Հնդկին ու Ֆիլիպին շահագործման են ենթարկւում անգլիական գրամատերերի կողմից, այնպէս, և աւելի՛ Հայաստանի բանուորի ու գիւղացու քրտինքը պտուղներ փայտուած է Մոսկուան: Եւ Հայ բանուորն ու գիւղացին, հնդիկ աշխատուորի պէս, անհարին ճիղ է գործադրում պաշտպանին համար իր իրաւունքները Մոսկուայի սանձարձակ հարստահարութեան դէմ: Իշխանութիւնը ոստիկանական միջոցներ է դիմում՝ բտարիպելու համար, որ գիւղացին ու բանուորը աշխատեն յօդու Մոսկուայի, շափած մէջ են դնում Չեկա ու Կոմկուս, բայց հետևանքը լինում են «ապշեցուցիչ արդիւնքներ»: Իմաստութիւնը աւելի ուժեղ է:

Առնենք, օրինակ համար, պղինձը: Ցարերի օրով

էլ, հիմա էլ Հայաստանի պղնձահանքերի ծառայում են Խուսարայի օգտին: Արտադրւած պղինձը գրուելու է Մոսկուայի հրամանի տակ և, գրեթէ մինչև վերջին մոխայր, տարւում է կենտրոն՝ կառավարութեան որոշած աժան գներով: Հայ բանուրն ու դիւղացին ո՛չ մի իրաւունք չունեն այդ պղինձի վրա և անմիջապէս շահագրգռւած չեն նրա դարձացումով: Այդ պատճառով մինչև այժմս էլ պղինձի մշակութիւնը չէ հասել նոյնիսկ նախապատերազմական վիճակին և պղինձի ճակատում» անպակաս են «ճեղքւած քները»:

Այսպէս, 1913 թ.ին Ալլանգի պղինձի 683,394 տոն պղնձահանք և արտադրւել է 3,917 տոն սև ու 3,793 տոն կարմիր պղինձ, մինչդեռ 1929-30 տնտեսական տարում հանւել է միայն 46,556 տոն պղնձահանք և 2,259 տոն սև ու 2,164 տոն կարմիր պղինձ: 1931-ի համար նախատեսուած է 65,000 տոն պղնձահանք և 2,927 տոն սև ու 2,800 տոն կարմիր պղինձ: Ղափանի պղնձահանքերի վիճակը աւելի անմխիթար է: Ասել է ո՛չ միայն 10րդ, այլ և 11րդ տարւան ընթացքում, խորհրդային իշխանութիւնը Հայաստանի պղնձի արտադրութիւնը չի կարողանալու հասցնել նախապատերազմական աստիճանին: Եւ այս՝ որովորդի՞ն հակառակ այն խիտ հրատաններն ու պահանջներն, որոնք զայիս են կենտրոնից՝ պղնձի արտահանութիւնը արդարութեամբ աւելացնելու մասին:

Այս կարգութեան հանդէպ խորհրդային իշխանութիւնը ճանաչապէ՞ք տալիս: «Նոյեմբեր ամսւայ առաջին երկու տասնամեակում (1-ից մինչև 20-ը) Ալլանգի պղնձահանքերում պղնձահանք արտահանւած է 3,373 տոն, կառարւած է մասնական պայիի 59.4 տոկոսը, իսկ կարմիր պղինձ 99 տոն — 52.1%: Ղափանի պղնձահանքերում ամբողջ նոյեմբեր ամսւայ պլանի կատարումը ունի հետեւեալ պատկերը — նախատեսւած 1370 տոն պղնձահանքի դիմաց արտահանւել է 750 տոն — 50.6% ը, իսկ 138 տոն նախատեսւած պղնձի դիմաց արտադրւել է 64 տոն — 41 % ր: Այս թւերը մեզ ասում են, որ տակալ վճռական ետամնակի արդիւնն պլանները վտանգւած են»: (Ձեւ. 2. «) 4 դիկտ.):

Ահապազն էլ չի օգնում: Մոսկուայից ու Թիֆլիսից հասնող սպանդակներն էլ, ուղարկուող «քնիշ» ու «դոտիշ» յանձնաժողովներն էլ չեն օգնում: «Ճեղքւած քները լայնանում ու խորանում են: Որովհետև Հայ բանուրներն ու մասնակիները ոչ անձամբ, ոչ էլ արդողին շահագրգռւած չեն պղնձի արտադրութեան անումով: Պայտարը պղնձի համար» չի ուղեորում Հայաստանի աշխատարդին: Դրանով է բացատրւում, որ «տեխնիկական պերտնայի մասնակցութիւնն արտադրութեան մէջ թողւ է. ոմանք իրենց պատասխանատու չեն համարում աշխատանքների համար: Գործը մի կերպ ճօրա տանելու տրամադրութիւնները շատ ուժեղ են տեխնիկական պերտնայի մէջ»: Դրանով է բացատրւում նաև, որ, օրինակ, մի հանգրձ «հանքանիւթ արտահանող մեքենան փաշտաւ և երկու օր շաշխատեց: Հանգրձոր շափազանց անտարբեր վերաբրուեց և մի-րոցներ շճտնակից մեքենան գործի դնելու» (Ձեւ. 2. «) 4 դիկտ.): Տէր չունեցող գործը այդպէս կը լինի: Դրութիւնը աւելի փայլուն չէ և բամբակի «ճակատում»:

Թէ ինչպէս է անցել բամբակացանը, այստեղ աւելորդ ենք համարում խօսել և կը անձամնափակենք միայն սառջ բերելով այս շափազանց հիւթեղ փաստը 18 դեկտ. «Նոյեմբեր. Հայաստան»-ից: «Վէդիի շրջանում այս տարի չորացրել են 475 հեկտար բամբակ: Չոնոնայր բացատրւում է նրանով, որ ջրելու ժամանակ ամբողջ ջուր տուել են Լուրվային, իսկ բամբակի վրա նշաչարութիւն դարձնող չի եղել: Ըստ սաճմանած ծրուագրի, Վէդիի շրջանը պետութեանը պիտի յանձնէր 85,000 փութ բամբակ, սակայն, այսօր նա յանձնել է միայն 40,000 փութ»:

Այսպիսի շքեղ տնտեսավարութեան օրինակներ

շատ կան բուլղերի կիսանութեան տակ, բայց մեր այսօրայն ճիւղը այդ չէ, այլ բամբակահաւաքը:

1930-ին որոշւած էր ցանել 19,000 հեկտար բամբակ, բայց իրական ցանւել է 16,000 հեկտար: Այս 16 հազար հեկտարից որոշւած է հաւաքել մէկ միլիոն փութ բամբակ, փութը հինգ բուրբի գնով: Արժէքը ուրուշի է կենտրոնական կառավարութիւնը: Բամբակահաւաքութեան ներկայ պայմաններին ծանօթ ամէն ոք կարող է վկայել, որ դիւղացուց բամբակի փութը հինգ բուրբով ասնել՝ նշանակում է պարզապէս կոտորտել նրան:

Բնական է, որ դիւղացուցները յօժար կամքով չհամաձայնի թալանելու, և աճա, Մոսկուայի ու Թիֆլիսի հրամանով, Հայաստանում սկսում է կատարել պայքար «բամբակահաւաքման ճակատում»: Այս պայքարի համար ստեղծւել են կենտրոնական ու տեղական շտաբներ արտադրող լիազորներով ու բացառիկ լիազորութիւններով, յայտարարւում են արտակարգ օրէնքներ խիտ պատիժներով, նշանակւել են գրուած մրցանակներ, հռչակւել է պարտկոյճ՝ կազմակերպւել են «բերքարչացի գրուներ», ամբողջ կոմկուսը շարժման մէջ է դրւել, բայց հետեւե՞ր ողբարի է. հայ դիւղացին շարժանկում է ցոյց տալ կրաւորական դիմադրութիւն: Եւ գերադասում է, որ բամբակի փութ արտերում չհասաքած, քան թէ անարժէք դներով տայ կառավարութեան: Եւ, իրօք, բամբակը փառնում է անձրեկի և միւրի տակ:

«Նոյեմբեր ամիսը, դրում է «Նոյեմբեր. Հայաստան»ը (25 նոյ.)», յայտարարւած է բամբակի շահաքերու աւարի ամիս: Այս ամսւայ ընթացքում ոտքի պէտք է հանւեր խորհրդային ողջ հասարակայնութիւնը թէ՛ հոկտեմբերի պլանի ճեղքւած քները ծածկելու և թէ՛ նոյեմբերի մթնամսն պլանն արդողապէս կատարելու համար... Մինչև նոյեմբեր 20ր քաղաքից բամբակացում շրջաններն է ուղարկւիլ մօտ 40 հազար բամբակացում 21-ը, բացի տեղական կազմակերպութիւնների, դպրոցների անկացութիւնների... Այնու ամենայնիւ, բամբակի հաւաքման և մթնիման տնմպիրը դեռ մնում են թայլ: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բամբակի բերքը հասաքած-յանձնում պէտք է լինէր 80-90 տոկոսով, մինչդու յանձնւած է միայն 45 տոկոսով»:

Նոյն «Նոյեմբեր. Հայաստան»-ը գրիգորը բերանին գրում է նոյեմբ. 28-ի իր փոքրապահանում: «Ճամբակի բերքահաւաքելի թիկունքից խնցիկ (և շարժանկում են խիկել) ո՛չ միայն դասակարգային թշնամին, ո՛չ միայն նրա ազնունները՝ աջ օրակախները տեղերում. այդ գործին հարւած հասցրեց նաև երկերեսանի Լոմինձնէի դաւաճանական գործունէութիւնը: Ի՞նչ ո՞՞ Հայաստանի բամբակ, Լոմինձնէի ո՛ւր, դո՞ւ ուր...»

«Կուլակի, շարժանկում է «Նոյեմբեր. Հայաստան»ը, պրոփոկացիոն նպատակներով բամբակի հաւաքը և ցանքը նոր պլանները վիճենքեր նպատակով մի քանի տեղեր արդէն բամբակը դաշտումն է թողնում և խրուրդային աշխատանքով համոզում է բամբակացան աշխատաւորներին հետեւել իրեն: Եւ Վաղարշապատի, Ղամարուի շրջանների մի շարք դիւղերում արածանցնում, փաշտնում է բամբակի ցանքերը, բամբակի հողերը վեր է ածում ցորենի ցանքերի (Ղամարու.), բամբակը յանձնում է շաւուրների միջոցով՝ արդիւնաբերական ապրանքներ ստանալու համար (Վաղարշապատ, Ղամարու.), իսկ շատ տեղերում նա բացարձակապէս տնտեսական քոչկոտ է յայտարարում և հրաժարւում է պրոլետարական պիտուքեանք բամբակ յանձնելուց... Փայաքաբում, Վաղարշապատի և Ղամարուի մի շարք դիւղերում կուլակի ոչ մի կիսո բամբակ չի յանձնել: Թէև Հայկոմկուսը 4հետեւում մէկ ամիս սառջ տեղերին կորուզ գրիկախու կը սւել մինչև նոյեմբ. 10-ը լլիւ մթերել կուլակի բամբակը, սակայն, մինչև այժմ

կուլակի ողջ բամբակի միայն 20 տակում է (մօտ 7 տն) վերցնած»:

Նոյնը պէտք է սակ և հաւարական տնտեսութիւնների մասին. «մինչև այժմ կորստնտեսութիւններն իրենց բամբակի հազիւ մէկ երրորդն են յանձնել»:

Այդ պատճառով «կուսակցութեան Կենտկոմն այսօր մտքիկացադի կարգով 35 պատասխանատու աշխատակիցներ է ուղարկում բամբակաշրտական շրջանները» և քաղաքի բանուորական, կոմերտական և հասարակական կազմակերպութիւններէ առաջ խնդիր է դրւում մօտ օրերս տաս հազար բանուորական ձեռք դուրս հանել բամբակի դաշտերը: Այս հաղթարար գործակալները քաղաքէջ պիտի թափեն գիւղերը՝ հայ գիւղացուն թայանքի համար և չա՛հ Մոսկուայի շրջանի ճարտարաբանութիւնը:

Այս կազմակերպւած թալանի հողէջ հայ գիւղացին շարեւեակում է պաշտպանել ինչպէ՛ս որ կարող է. դաշտը՛ջ չի հաւաքում բամբակը, քրտածայրում է արտուրը, թրջում ու խոնաւացնում է հաւաքած բամբակը, թալան է գնանքի տակ, բամբակի նոր արտեր չի ներկում և ամէն կերպ դիմադրում է կոտորակութեան: Այսպէ՛ս, դեկտ. 4-ին Վաղարշապատից հեռագրում են, որ «չբրնիի դաշտերում մնացել է մօտաւոր հաշիւներով 1.780 տոն (մօտ 110.000 փոթ) բամբակ, որն ամէն րոպէ անձրեկի ու ձիւնի վառարկն է ենթակայ: Բամբակի փոխադրութեան գործն էլ վատ է կազմակերպւած, որի պատճառով էլ այսօր 200 հազար կիւր ընտանի թափւած է ընդունական կայաններում և գործարան չի սեղադրուած... 3րդ խորհրդային տնտեսութիւնը խաբէլ է թէ 380 հեկտար բամբակ է ցանել, սակայն, այսօր պարզուում է, որ ցանել է միայն 103 հեկտար»: Մարտի և է ճնոր-Կենտրոն կոմսոտետութիւնը, որ ցոյց տւած 520 հեկտարի փոխարէն ցանել է 300 հեկտար, և՛ «Անաստուած» կողեկախը, որ ցոյց տւածի հազիւ կէսն է ցանել: Սրանց վարչութիւնները «կոտորակաբարութիւնից, որքան հարաւոր է շատ աւանաներ, արդիւնարեական սպրտանքներ պոկելու նպատակով խաբէլ են բամբակ Միութիւններին»: Յետոյ, «Փարաբարի ու Գէրգիւմէթի շրջակայքի գիւղերում գրեթէ ոչինչ չեն տնտմ բամբակի հաւաքման և մթերման ստպարգում»:

Առ 2 դեկտեմբերի Ղամբարուի, Դաւալուի, Վաղարշապատի և Դուրգուղբուի շրջաններում «ամբողջ բերքը կէսը դեռ է մթերուած, իսկ բերքի մի գրգալի մասը դաշտում փչանում է... Որտե՛ր. տնտեսութիւնները բամբակի ֆորտում ուղղակի յանցագործ վերաբերմունք են ցոյց տալիս: Նրանք մինչև դեկտ. 2-ը յանձնել են մի ողորմելի քանակութիւն, ընդամենը 720 տոն կամ պայնի 13,1 տոկոսը... Եթէ՛ք բամբակադործական շրջաններում ուժերի մերկացուցիչ կշատարի, եթէ՛ք վերջնականապէս չհախճարեն օպորտունիստական ինքնահոսի արամադրութիւնները, հազարաւոր փթէրով բամբակ ձիւնի տակ կ'մնայ» («Ն» չ. 4 դեկտ.):

Յետոյ, «Փարաբարի կուլակային տնտեսութիւնները դիտատրուել կերպով մինչև օրս չեն հաւաքել իրենց բամբակի բերքը և ոչ մի փոթ բամբակ չեն յանձնել պետական մթերող մարմիններին»: «Վերջերս բամբակադարի վերաբանները «հազանդ են տալիս բամբակի որակի գործարմարը: Արդէ՛ս մի շարք շրջաններից ըստացւում է արտուր, խոնաւ և խոտն տեսակի բամբակ: Եթէ՛ք այդպէս շարունակել, ժամանակին չկարողանաք միջոցներ ձեռք առնել, տեկտուր արդիւնարեութեանը բարտակ, միատեսակ բամբակ մատակարարելու գործը վտանգւելու է. միաժամանակ գրեկելու ենք սերմացու Եւռոյ պատրաստելու հնարարութիւնից, որովհետեւ բամբակացանները հասած, առողջ բամբակի հետ խառնում են չհասած, խտրը հեղուար բամբակ» («Ն» չ. 2, 26 նոյ.):

Առ 5 դեկտ. Դաւալուի շրջանի «դաշտերից բամբակի ցանքերն արդէն հնձել և տուն են տարել: Հնձում

են, որովհետեւ համատարած բնոյթ է ստացել բամբակի արածացնելը, որովհետեւ կուլակն իր գործը ժամանակին վերջացրել է և անասունները իրողած կորտնտեսութեան և աշխատարը գիւղացիութեան բամբակն է փչացնում»:

Հասկանալի է, որ խորհրդային իշխանութիւնը սագրիկ դաշտացել է Պաշտօնաթերթը խօսք չի գտնում զատակետելու համար կացութիւնը. «Մենք կանգնած ենք բամբակի բերքահաւաքի և մթերման պայանների ձախողման վտանգի տակ: Բամբակի մթերման թափը ո՛չ միայն չի ուժեղանում, այլ և վերջին տասնօրեակում նոյնիսկ թուլացել է: Վերջին և երկարաձեւած ժամկետին պայնը կատարելը պահանջում էր օրական հաւաքել բամբակի տարեկան պայնի առնւադն 3-5 տուկոսը: Այդ է կուսակցութեան Անդրեկոմի գրեկախուրը: Սակայն, մեզ մօտ՝ շրջկոմները, շրջկազմերը և Հողփողկոմատի թոյլ դեկալարութեան, կուսակցութեան կերպութիւնները մի քանի օգակետում տիրող ինքնահոսի արամադրութիւնների հետեւնուով, մինչև նոյ. 20-ը օրական մթերում էր բամբակ տարեկան պայնի միջին հաշուով մէկ տուկոս, սպա՛ տեմպի թուլացմանը դուզընթաց այդ տուկոս հասաւ 0,75% (մինչև նոյ. 25), վերջին ուժ օրում իջաւ օրական կէս տուկոս»:

«Այդ խայտառակ անկումը՝ առանձնապէս ցայտուն կերպով աչքի է ցարնում Դաւալուի շրջանում, ուր «օպորտունիստ դեկալարներն մինչև այսօր կուլակի ունեցած բամբակի միայն 25 տոկոսն են վերցրել, մթերման տարեկան պայնը թերակատարել են 56 տուկոսով և ո՛չ միայն չեն պայջարում բամբակ մթերման պայնների համար, այլ և վիժեցնում են նաև բամբակի պնան վարը՝ յանցագործ կերպով արակտորները աշխատանքը կանգնեցնելով»:

«Ժողովուրդի նշանակած ժամկէտից հինգ օր անցել է, սակայն, ոչ մի շրջան դեռ են լրիւ չափով չի վերցրել կուլակի բամբակը: Կարելի է որոշակի սակել, որ տեղեկում չի կիրաւուում կատակարութեան որոշումը բամբակը հաւաքող և շանձող կուլակի ողջ բերքը ընձագրաւելու և դատական պատասխանատուութեան ենթարկելու մասին»:

«Այսօր, մտնումուտին, դեռ ևս Դաւալուի, Գոյգումբէթի, Փարաբարի, Սաղմունարի մի շարք գիւղերում նոյնիսկ առաջին շանքը չի աւարուած և կոպիտ հաշիւներով այսօր ոչ պակաս, քան 2-300 հազար փոթ բամբակ փչանում է դաշտերում» («Ն» չ. 5, դեկտ.):

Այս «խայտառակ» դրուժիւնը դեկտ. 2-ին «հարւածային» կարգով ընդունեան է տնտմ Հայկոմկոմի Կենտկոմի բերածն, որ մշակում է մի շարք արտակարգ միջոցներ մինչև դեկտ. 15-ը վերջացնելու համար բամբակահաւաքը և անհմանում է ծանր պատիժներ, «նոյնիսկ վտարելով կուսակցութիւնից» «սոցիալիստական շինարարութեան մարտական ճակատը դատալիքներին»:

Առ 1 դեկտեմբերի մթերում մթերել էր տարեկան ծրագրի 51 տուկոսը, հետեւաբար երկու շաբաթայ մէջ մնացած 49 տուկոսը մթերելը անկարելիութեան հաւասար որոշում է: Եւ, յիշուել, պայտօնապէս հաղորդում է, որ առ 14 դեկտ. ամբողջ Հայաստանում մթերւած է ընդամենը 10,236 տոն բամբակ, այնինքն՝ տարեկան ծրագրի 55,6 տուկոսը («Ն» չ. 2, 16 դեկտ.): Անկէ է, «բամբակի կամպանիան» պէտք է համարել վիժած. գիւղացին յաղկեց:

Ճիշտ է, Հայկոմկոմի Կենտկոմը դեկտ. 19-ին նոր որոշումներ է տուել բամբակահաւաքման համար. մի շարք յանցաւորներին պատժ է ենթարկել, նոր ծրագրի է կայմել, նոր կոչ ուղղել ուր որ անկ է, շոյր փտար չէ հասկանալ, որ այդ բոլորը անյոյս ճիղեր են. դեկտեմբեր 20-ից յետո՛ւ ի՛նչ բամբակ կարելի է հաւաքել Արարատան ուղայի անձրահաւ կամ ձիւնով ծածկւած դաշտերում: Պարզ է, որ որոշւած մէկ միլիոն փթից 30-40 տուկոս պիտի փչանայ չհաւաքւած:

Կենտրոնը վտանգւած է տեսնում և յայտարարում արւելայ քաղաքակազման ընդ մասին տւել է հետեւեալ որոշումը. «Յնպատակ ունենայով անկարգին ապահովել կեղծ տարւայ քաղաքի ցանցերի հաստատում պլանի լրիւ կատարումը (25 000 հեկտար), անհրաժեշտ համարել 1930թ. դեկտ. 20-էջ մինչև 1931թ. յունւար 20-ը կիրառելու մասնաբաժնի աշխատանքի միասնակ 1931թ. քաղաքակի ցանցերի պլանը մինչև գրեզ, կոր-անտեսութիւն, և գրեզայնական տնտեսութիւն հասցնելու համար»:

1930թ. օրինակը աչքի առաջ ունենալով՝ դժուար չէ գուշակել, որ 1931-ին էլ քաղաքակազմութիւնը Հայաստանում կենթարկուի անյարդողութեան, թէ՛ հիմնական փոփոխութիւն չմտցնեն, այնպէ՛ս, որ քաղաքակ ցանցը գրեզայնի ապահովելի, թէ ինքն է լինելու իր աշխատանքի աչքը:

Արթիկի տուֆը Հայաստանի այն շինւածանիւթերից է, որ նոյնպէս ծառայում է գլխաւորապէս ինուսաստանի և ոչ Հայ թողորդի կարիքներին: Համաձայն ձեռնարկ. Հայաստան—ի (23 նոյ.) հաղորդած տեղեկութիւնների, 1929—30 տնտեսական տարւում պիտի արտադրուէր 150 հազար խորանարդ մետր տուֆ, բայց իրականում ստացւել է միայն 40 հազար խոր. մետր, կամ ծրարից 30 տոկոսը: Այս տուֆը բաժանւել է հետեւեալ ձևով. 22% ուղարկւել է Ինդոպորտոյին, 8,5%՝ Ստամբուլի, 22%՝ Գրեզի, 22,5%՝ բաժնի է հանւել Երևանին, Երիւզկին ու Դարաքերիսին: Մինչ Հայաստանում շինւածանիւթի պակասի հետեւանով կատարուող չէնքերը մնում են կիսատ, Արթիկի տուֆը ուղարկւում է ինուսաստան, և դեռ տրւում են, որ Հայաստանը ինուսաստանի գազուֆը չէ:

Արթիկի տուֆում էլ անպակաս են «միակամայն անհաղորդելի դրոթիւնները»: Այսպէս, հոկտեմբեր-դեկտեմբեր յատուկ եռամսեակի ծրարները — 15 հազար խորանարդ մետր — առաջին ամսում կատարւել է 64%ով, իսկ ամբողջ եռամսեակինը՝ 21%ով. պատճառ՝ «հանքահանների քայքայութիւնը», եղանակների վատութիւնը և «վազոնների քայքայութիւնը»: «Փոխանակ 30—40 վազոնի՝ օրական տրւում է միայն 10—15 վազոն:

«Տուֆի արդիւնաբերական հատոյթի առաջին տարին մինչ փակում ենք մեծ ճեղքանքներով», գրում է մեկամսագործին «Պորհրդ. Հայաստան»ը: «1931թ. համար ուղարկւած է վիթխարի ծրարները արտադրել 140 հազար խոր. մետր կտոր տուֆ և 40 հազար խոր. մետր բուտի տուֆ», բայց «կարելի է ասել, որ դեռ չի ձեռնարկւել այդ գերեկտիւի կատարմանը:

Այսինքն՝ տուֆի գործն էլ քաղաքակի օրումն է:

Ճեղքւած մետրի տեսակէտից քաղաքայն հարուստ են և Հայաստանի՝ խորհրդային, տնտեսութեան միւս ճիւղերը: Ահա, օրինակի համար, Լեւոնտիտիլը. «գործարանը նոյնպէս մէկին կիսամեակի արտադրանք թեքախտարել է 18,4 տոկոսով», «15 օրու ընթացքում արձանագրւել է գործարանների միւս 40 դէպք: իսկ աշխատանքից մասնաբաժնի ուղարկումների թիւը մեծ չափերի է հասել. ամէն օր միջին թւով 7—8 յուշակ 20—30 ռուպէ ուղարկւում են աշխատանքին»: «Աշխատակիցներին յանձնել են մեքենաներ, որոնք չեն կարողանում ղեկավարել այդ մեքենաները, և 7 ժամայ ընթացքում 5 ժամ մեքենաները մասնւում են անդործութեան: Ինտ աւելին. միջին թւով օրական 10—15 մեքենայ գաղարում են. աշխատուելով»: «Աւելի խայտառակ գործարան մէկ է գտնւում զործարանի մտարձակ բաժինը. այստեղ կուտակւել է մօտ 150 հազար մետր բեպ, մինչև արդէն մի քանի կապ բեպ կըծոտել, փչացրել են»: «Ինտարները օրական արտադրանքի հաշւառումը քառասայն յիմնակում է. տեղի են ունենում երկար ձգձուգումներ, սխալ գրանցումներ, որոնք խոշոր

դժգոհութիւն են առաջացնում ջուշակների շրջանում» («Ն. Հ.», 5 դեկտ.):

Մարդիկ շոքայնիված են կառուցում... մկների մասնակցութեամբ: Հապա դոնրի ճեղքւածքը, «վարչութեան անպլան և անկազմաները աշխատանքների պատճառով դոնրի շինարարութեան մէջ ստեղծւել են հետեւեալ ճեղքւածքները»:

1930—31 տնտեսական տարւայ համար դոնրի ուղղման գործին յատկացւել են խոշոր գումարներ, «որ պէտք է հնարաւոր լինի 1931 թւին Հարաւային Դոնրից ուղղել քաղաքակի համար նոր Նոդամսեր, ամենաքիչը 6000 հեկտար, բայց անհրաժեշտ պատուարի կառուցումը, որ պէտք է սկսւած լինէր սկզբից, միայն վերջերս է սկսւել և աշխատանքների միայն 4 տոկոսն է կատարւած: Ըստ պլանի կըզուտ պատուարի կառուցման աշխատանքները պէտք է վերջացւած լինէին, մինչդեռ այդ աշխատանքները դեռ չեն սկսւել... 60 միւս ուղղուող երկրորդինստով աշխատանքները ուժ ամօով ձգձգւել են»: Գծի համար պէտք է մի քանի փոսեր քանդէին, բայց մինչև այսօր այդ չի արւած... Աղբաւ չի 900 խոր. մետր բետոնի աշխատանքները դեռ չեն սկսւել, որոնք պէտք է սկսւած լինէին մի տարի առաջ»: «Ճեղքանուր աշխատանքներում բացակային է համապատասխան հաշւարկումը, հաշւապահութիւնը ծախսում գումարների մասին ներկայացրել է իրականութեանը համապատասխան անհիթթ թէքը»: «Արտադրական բաժնի պետը, որ ամսուայ մէջ 20 օր պէտք է իր աշխատանքի վալրում լինի, ամիսը երկու կամ երեք անգամ հաջիւ է լինում. նոյն կերպ է իր պարտականութիւնները կատարում նաև մեքանիկական բաժնի պետը» («Ն. Հ.», 5 դեկտեմբեր):

Հապ երկաթուղին. «Նոյեմբ. 1-ին, գիւնըրը, Արաք կայարանում խորտակւում է զնայք թիւ 842ը կայարանի հերթապահ Տիխարիովի անփոյթ ու անբարեխիղճ լինելու պատճառով: Զարուում են 6 վազոն, 2 շոգեմեքենայ և փշանում է ապրանքը: Վնաս է հասնում երկաթուղին 30—35 հազար ռուբ... Նոյեմբ. 2-ին, գիւնըրը, Երևանի կայարանում անփոյթ աշխատակիցների կողմից սաջը սխալ փոխելու պատճառով 2 վազոն զոքից դուրս են ընկնում: Վնասները հասնում են անպէս գումարների... Նոյեմբ. 2-ին թիւ 954 զնայքը Երևանի կայարանից դուրս է գալիս Երևան, ճանապարհին յարգւում է վազոնի անիւր և զնայք խորտակւում է: Զարուում են վեց արարեալների վազոն. 150 մետր տարածութեան վրա փշանում է գիծը և կանգ են առնում բոլոր զնայքները մօտ 20—22 ժամ: Վնասը հասնում է 10—12 հազար ռուբ... Նոյեմբեր 7-ին, ցերեկայ ժամը 4ին, Երևանի կայարանից զնայքը մեկնում է Ուրուսիանյու. դեռ կայարանից 2 կիլոմետր չհեռացած՝ էլի շարուում է վազոնի անիւր և զնայքը խորտակւում է: Զարուում են վազոններ, 5-6 ժամ զարարում է երթեկութիւնը, փշանում է գիծը և այլն: Վնասն այստեղ էլ հասնում է 30—33 հազար ռուբ...» («Ն. Հ.», 14 նոյեմբ.):

Եւ նման ճեղքւածքները անաշիւ են ամէն կողմ. ճնախատեալում էր կատարել 124 հազար ռուբուր կապիտալ շինարարութիւն՝ ձկնորսութեան զարգացման կապիւն ուժեղացնելու համար, սակայն, յարողչեն իտարւել միայն պլանի 55 տոկոսը»: «Հայալիտղարաֆը ըստ պլանի պիտի արտադրէր 122.319 ռուբուր ապրանք, արտադրել է 100,921ը»: «Երևան կայարանում 2007 կիլոգրամ երկաթ են ստանում. նոր կառուցւող չէնքերի համար, բայց. պարզւում է, որ երկաթի փոխադէն պողպատ ան ուղարկւում: Այսպիսով կանգ առան կայարանի նորակառույց չէնքերի աշխատանքները, իսկ մի ուրիշ տեղ, երեկ, խիստ կարեք են վերել և սպասում են այդ պողպատին»: «Միայն գիւնըրը Ալագեաղի խորհտնտեսութիւններում ըսն դրած վնասարարները կատարել են 300 ոչխար, Դարապալայում փչացրել են

տնտեսութեան Տորթերի 65 տոկոսը, Վարանցովկայում փաշարը են 290 Տորթ, 15 կոփ: Եման վերաբերում է հետևանքով Հայաստանի անասունները արագորէն փոքրում են. այս գարնան ունէինք խոշորի վերածած 896,000 անասուն՝ նախապատերազմէան 850,000ի փոխարէն... սակայն, այդ թիւը մինչև գարնանը կատարւած սխալների լիակատար շտիւմը կրճատել է բուսականաչափ և, բացի գրանից, հասած լինելով նախապատերազմէան մակարդակին\*) անասունների թւի տեսակէտից, մենք զգայի կերպով յետ ենք մնում ասպարհարարութեան ասպարէզում» ( «Ե» Հ», 27 յետ. ):

Եւ այսպէս անկերջ է Բագմաթիւ ծրագիրները և աւելի շատ «Թերագնահատումներ» ու «ճեղքւածքներ»: Փողովորդից խլւած միջոցները չուայլում են անարդէլ և առանց պատասխանատուութեան, տնտեսական շինարարութեան բոլոր ասպարէզներում՝ քառս ու վաստում, բայց Գոմիւտի մարդիկ առանց կարծրելու պարծենում են:

«Մեր երկրի էկոնոմիկան այնպիսի աննախընթաց վերելք է սպրում, որպիսին չէր տեսել մարդկութիւնը պատմական և ո՛չ մի ժամանակաշրջանում»: Իրօք որ, չէր տեսել...

Ս.

## ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՍՈՑԻԱԼԻՉՄ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ներկայ գրութեան հեղինակը մի քանի ամիս առաջ է գլորս եկել Հայաստանից: Նա եղի է կուսակցութեան և կուսակցութեան անդամ, վարել է գաւառում պատասխանատու պարտօններ, ապա անցել է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, երկար ամիսներ է գերում և մօտից ծանօթ է Հայաստանի գիւղացիութեան ապրելակիցի ու տրամադրութիւններին: Արտասահման մի յինուց յետոյ, նա ուղարկել է մեզ մի ընդարձակ, փաստելով հարուստ և վերին աստիճանի հետաքրքրական գիկուցում, որից քաղում ենք հետագայ մասերը, յսմի՛ք քէն վերաբերում են գլխաւորապէս Վայոց Ձորի գաւառին. բայց կարող են ընդհանրացուել և ամբողջ Հայաստանի համար:

### ԻՈՐԸՐԿ. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

« ... Երբ (Վայոց Ձոր) գաւառը ընկաւ բուրձիկների ձեռքը, ամբողջ շրջանում բուրձիկների և համակիրների թիւը հազու 20-25 հոգի կը լինէր: Յետոյ, շնորհիւ տրւած խարուտիկ խոտատների և սոււնիկի նման բուսածոլ դանազան հիմնարկութիւններում ընդունւած պաշտօնանների, մինչև 1925թ. նրանց թիւը 400-ից աւելի կը լինէր, իսկ 1925 թիւը, երբ պարզեց նրանց դիմակը, և ազգաբնակչութիւնը տեսաւ, որ խոտատների աննշան տոկոսն անգամ չի իրազորւում, և րբ զգացուցին շլւած ու շտենւած քունութիւններ ու հալածանքներ, հեղձհետէ նրանց թիւը պակասեց և այժմ (Պ) հազու հասնի, այն էլ մեծ մասամբ պաշտօնաններ: »

Առաջին տարիներում, գիւղացիութեան համակրանքը ու վատահոլութիւնը ձեռք բերելու նպատակով, բուրձիկները բերին ու մեծ մասամբ քրիստոս բաժանեցին ճակոխի անհրաժէշտ միջոցներ, որ պատերազմի ու զարգացիական կոիւնքի շնորհիւ վաղուց չէին երևում: Օրինակ, հէնց առաջին տարին մեծ քանակութեամբ մանուֆախուրայի ապրանքներ բերին և իւրաքանչիւր շնչին ձրի բաշխեցին 15 մետր՝ խոտանալով հեղձհետէ նորից բերել: Կենսամթերքներից առատորէն բերին շաքար, թէյ, սպիտակ ալիւր, սապոն,

նաթ և այլն ու ձրի բաժանեցին գիւղացիներին: Գիւղացիութեան սիրաշահելու համար ոչ մի բանի ստալ կանց չէին առնում. մինչև անգամ թոյլ տւին անարդէլ օդի քաշել և վաճառքի հանել: Ինչոր տեսակի հարկերն ու տուրքերը վերացուցին, այնպէս որ 1923-ին մեր գաւառում ո՛չ մի տուրք գոյութիւն չուէր: Ազգաքանակութիւնը՝ այսքան բարիքներից ու խոտատներից շլացած՝ կարծում էր, որ բուրձիկը երկնքից իջած մի իշխանութիւն է: Փողովորդական յարգանքն ու համակրանքը գէպի խորհրդային իշխանութիւնը մինչև 1924 թիւը, հասաւ ծայր աստիճանի: Բայց այս գրութիւնը երկար չտեսեց. բուրձիկները շուտով ցոյց քրին իրենց զայլի ծանիքները: Եւ ամենից ստալ, նրանց իսկական զէմը երեւաց հարկային քաղաքականութեան մէջ:

### Հ Ա Ր Կ Ե Ր

Ինչպէս յիշեցի, մինչև 1924թ. հարկ ու տուրք գոյութիւն չուէր: Այդ թիւականից սկսած հիմք դրեց միասնական պարիստուրբի կամ պարեն-հարկի: Այս տուրքով իւրաքանչիւր տուն պարտաւոր էր կտալաւորութեան յանձնել իր անտնտեսութեան 10 տոկոսը, այսինքն՝ տարւալ ընթացքում ստացւած բոլոր հաշգահատիկների, իւրի, պարի, բրդի, մեղրի, հաւի ու հաւկիթի և ամէն տեսակ մթերքների մէջ տասներորդ մասը: Այս հարկի սամանումը գիւղացիութիւնը, սկզբում, ընդունեց անտրտունը: Յետոյ, զգաց հարկի ծանրութիւնը, պաշտօնանների գործած գեղձուներն ու կասկանութիւնները, բողոքեց ու խնդրեց կենտրոնական կառավարութիւնից, որ մթերքների փոխարէն տուրքը առնի դրամով: Կառավարութիւնը համաձայնեց, և 1925-ից միասնական պարենտուրքը փոխարինեց եկամտային տուրքով:

Այս նոր տուրքը թուց բաւականին պարզ ու հասկանալի, բայց գործադրութեան ժամանակ այնքան բարդացրին ու տեսակների բաժանեցին, որ ազգաքանակութիւնը մինչև այսօր էլ տնքում է նրա ծանրութեան տակ: Եկամտային տուրքը սամանելիս ստեղծեց նոր պաշտօնանների մի հակալ ջանակութիւն, որոնք, կարծես, իւրաքանչիւր տան անբաժան սոււերը լինէին. հետևում էին ամէն ինչի, ցուցակազրում էին ամենաշնչին եկամտուն անգամ և կազմում ամէն մի տան տարեկան եկամտային տարտակը:

\*) Ասել է. բուրձիկների իսկ խոտալանութեամբ կոլտոգական «Քնայագեղութեան» հետևանքով Հայաստանում վիչացել է 46,000 խոշոր անասուն: ԽՄԲ.



Եկամտային տուրքը հետզհետէ ճիւղաւորեց, ձեւաւորեց և ունեցաւ հետեւել ստորաբաժանումները.

Ա. Երևարարութեան տուրք. — Գիւղերում, չըբլաններում, քաղաքներում տուն, փողոց, առուներ, լճեր, ճանապարհներ չինելու և նորոգելու համար սահմանաւած է շինարարութեան տուրք, որի համար իւրքանչիւր տուն պարտաւոր է իր եկամուտի 35-40 տոկոսը վճարել:

Բ. Ապահովագրական տուրք. — Ցանած արտերը կարկուտից ապահովագրելու համար բոլոր արտերը արձանագրուում են. կարկուտ եղած դէպքում իւրքանչիւր դեմատրինը հաշուում են 47 բուրջի և վնասը վճարում են: Ցուցակազրուում և արձանագրուում են բոլոր կենդանիները ապահովագրելու համար ժանտախտով դէմ. եթէ դատարանով հաստատել, որ կենդանիներ ժանտախտից և ստտիկը, կառավարութիւնը վճարում է վնասը: Ահա այս նպատակներին է ծառայում ապահովագրական տուրքը, որի համար իւրքանչիւր տուն պարտաւոր է վճարել կառավարութեան իր ստացած եկամտի 6 տոկոսը:

Գ. Զրային տուրք. — Զրովի արտերին ջուր տալու, գոյութիւն ունեցող առուները նորոգելու համար սահմանաւած է ջրային տուրք — եկամտի 4 տոկոսը:

Դ. Անհատական տուրք. — Ունեւորների, առևտրականների և ձայնագուրկների թէ շարժական և թէ անշարժ ունեցածքը ցուցակազրուում և գնահատուում է: Որքան որ այս մարդիկ վճարում են տարեկան եկամտի սահմանաւած բոլոր տեսակի տուրքերը, սրա կէսի չափ դուժար էլ պարտաւոր են վճարել իբրև անհատական տուրք:

Ե. Զինարանի տուրք. — Հարուստներից և ձայնագուրկներից զինուոր չեն առնում. փոխարէնը երկու տարի շարունակ ամսական առնում են 50 բուրջի:

Զ. Արտիստի տուրք. — Բարձրական սաւառանկների, դագերի և այլ ռազմական պէտքերի համար տուրք է առնուում եկամտի 2 տոկոսը:

Է. Փայտառքեան տուրք. — Պետական ներքին փոխտուրքիները կամարո չեն. իւրքանչիւր տուն վճարում է իր հասոյթի 5 տոկոսը:

Ը. Օղանախի տուրք. — Օղային հաղորդակցութիւնը ուժեղացնելու համար վճարում է եկամտի 1,5 տոկոսը:

Թ. Արտատեղիքի տուրք. — Գիւղացիութիւնը սեփական արտատեղիքներ չունի: Բոլոր արտատեղիքները բռնագրաւած են կառավարութեան կողմից: Բոլոր արտատեղիքները ցուցակազրուած են: Ցուցակազրուում են նաև թէ ով որքան ոչխար ու տաւար ունի և քանի՞ դեմատրին արտամեղի է հարկաւոր: Գիւղացիութիւնը բաժանուած է երեք կարգի — հարուստ ու ձայնագուրկ, միջակ և չքաւոր: Հարուստն ու ձայնագուրկը արտատեղիքի համար տուրք է վճարում մէկ դեմատրինի 1ր. 80 կոպ., միջակը՝ 1ր. 20 կոպ., չքաւորը՝ 80 կոպէկ:

Պ. Կրթութեան տուրք. — Երկրի ներսում խնուրիներ չինելու համար վճարում է եկամտի 3 տոկոսը:

Պ. Ա. Պարտադիր կամ ինքնաւարկ. — Իւրքանչիւր տան վրա տարեկան որքան որ ընկնում է տուրք, սրա

կէսի չափ դուժար էլ պարտաւոր է վճարել պարտադիր կամ ինքնահարկ անկան տակ:

ՃԲ. Փօկի տուրք. — Գիւղերում կան Փօկեր (փոխադարձ օգնութեան կոմիտէներ), որի համար սահմանաւած է յատուկ տուրք: Այս տուրքը վճարելու համար գիւղացիութիւնը նոյնպէս բաժանուած է երեք կարգի կամ կատեգորիայի: Իւրքանչիւր շուրջ՝ 16 տարեկանից սկսած մինչև 60 տարեկանը, կին թէ տղամարդ, ենթակայ է տուրքի: Ունեւոր ու ձայնագուրկը ընտանիքի ամէն մի անդամ վճարում է 1ր. 80 կոպէկ, միջակի՝ 1ր. 20կ., չքաւորի՝ 60 կոպէկ:

ՃԳ. Չայնագորիկի տուրք. — Այս տուրքը վճարում են միայն ձայնագուրկները, այսինքն նրանք, ովքեր գրկուած են ընտրելու և ընտրուելու իրաւունքից: 16 տարեկանից սկսած մինչև 60 տարեկան ամէն մի կին կամ տղամարդ պարտաւոր է վճարել տարեկան 20 բուրջի:

Այս 13 տեսակ տուրքերից զատ կան բազմապիսուրիչ տուրքեր, տեղական կամ ընդհանուր բնոյթ կրող, որոնք նոյնպէս պարտաւորեցուցիչ են: Այնպէս որ գիւղացիութիւնը դարւած է դարձուրելի ճնշման տակ: Հնար չկայ այդ բոլոր տուրքերը վճարելու: Արդու համարիչը բեժիմը տեսած թիւրքանայերը երանի են տալիս համիտեան տուրքերին:

Այս ծանր տուրքերից ազատուելու համար գիւղացիութիւնը սկսեց մորթել կամ ծախել կենդանիները և հողերը թողնել անձակ: Պատահել են շատ դէպքեր, որ բռնութեամբ գիւղացիներին արտ են տարել և ըստիպել են ցանել, բայց վերջիններս սերմը շաղ են տռել հողի երեսին, որպէսզի թռչուններին կեր դառնան:

Եւ այսպէս, գիւղացիութիւնը դաշտրեց պարապել խոտարուծութեամբ: Զարդեց ու փչացրեց երկրագործական շատ գործիքներ, այնպէ՛ս, որ այժմ մի քանի տուն միացած կարել կարողանում են մի սարք դուրս բերել: Այս նպատակով էլ դիւղացու տնտեսութիւնը երթալով ընկաւ ու հողին հաւատարեց, և այժմս մեր նախկին չէն ու ուրախ գիւղերի տեղը մնացել են միայն աղքատութիւն ու թշուառութիւն:

Տուրքերը գանձուում են օգոստոսին և սեպտեմբերին: Իւրքանչիւր տան բերում-յանձնում են հարկաթիւրքեր, որոնք վրա գրւած է տուրքերի քանակը և վճարման ժամանակը: Տուրքեր գանձելու համար էլ ազգաբնակչութիւնը բաժանուած է 3 կարգի. ունեւորներն ու ձայնագուրկները պարտաւոր են ամբողջ տուրքը վճարել մէկ ամսայ ընթացքում, միջակները՝ 2 նսազով, 3 ամիսը մէկ անգամ, չքաւորներ՝ 3 նսազով, 3 ամիսը մէկ անգամ: Ովքեր որոշուած տուրքը ժամանակին չեն կարողանում վճարել, պարտաւոր են վճարել պատժատուրք (պենիտեն) — ունեւորներն ու ձայնագուրկները 100-ին 35 տոկոս, միջակները՝ 25%, իսկ չքաւորները ազատ են պատժատուրքից:

Այս պատժատուրքը, շատ անգամ, կարւած է զբմահանուցից: 5-10 օր տուրքը ուշացնում են, ահա նոր յաւելում: Ապա՛ նորից: Այնպէս որ գիւղացիութիւնը, յաճախ, աւելի պատժատուրք է տալիս, քան իսկական տուրք: Եւ այս աւելի ևս սաստկացնում է գայրոյթն ու դժգոհութիւնը:

Եթէ մէկը չի կարողանում վճարել նշանակուած

տուրքն ու նրա վրա բարդած տողանները, կազմում են ունեցած գոչքի ցուցակը և անճուրդի հանում յօգուտ կառավարութեան: Աճուրդի սահման չկայ. ծախում են ամէն ինչ՝ տաւարը, տան մէջինը, մինչև վերջին կապերտը: Գիւղացու համար այս անճուրդը խնայական աղէտ է. ամբողջ տունը սուգ ու շիւան է պատում, երբ կառավարական պաշտօնեաները գալիս արձանագրում են ունեցած-չունեցածը և չնչին գնով վաճառում հարկի պարտը գանձելու համար:

**ԿՕՕՊԵՐԱՑԻԱ**

Տուրքի մի տեսակն էլ կօօպերացիան է: Մանր հարկերի ու խիստ Հայրամանքների հետեւանքով այժմ մասնաւոր առևտուր չկայ: Աղգարանկութեան կարիքների բաւարարման համար գիւղերում բացած են կօօպերատիւ խանութներ: Սկզբում յայտարարեցին, որ իւրքանչիւր գուած գիւղացի կարող է անդամագրել կօօպերատիւի՝ տարեկան վճարելով 5 րուբլի և ստանալ ամէն տեսակ ապրանքներ: 1924-ին պահանջեցին, որ բոլոր գիւղացիներն անխտր պէտք է աճում գրեն կօօպերատիւների՝ վճարելով տարեկան Հորուտ կոչւածները 40 րուբլի, միջակները՝ 25ր. և շքաւորները՝ 10ր.: Գանի որ կօօպերատիւ խանութներում շատ մթերք չկար, գիւղացիութիւնը պատասխանեց, թէ կանդամագրի մէկ պայմանով, որ կառավարութիւնը մատակարարի պահանջած ապրանքները: Կառավարութիւնը խոստացաւ յաջորդ տարւանից լրի բաւարարութիւն տալ:

Յանորդ տարի կառավարութիւնը կօօպերատիւ խանութների անդամավճարը նորից բարձրացրեց. ունեորի համար 80ր., միջակի՝ 50, շքաւորի՝ 30ր.: Գիւղացիութիւնը դրան էլ համապայակեց:

1927-ին յայտարարեց, որ այլևս կօօպերատիւ խանութներից դրամով ապրանք չի տրելու, այլ՝ մթերքների փոխարէն: Գիւղացին պարտաւոր էր բերիլ իւշ, պանիր, ցորեն, բուրգ, գետնախնձոր և այլն և փոխարէնը ստանալ շաքար, թէյ, նաւթ, սապոն, հիւսածեղէն և այլն: Գիւղացու բերած մթերքի գինը իրենք էին որոշում. օրինակ, եթէ որևէ մթերք չուկայում արժէր 20 րուբլի, իրենք գնահատում էին 8-10 րուբլի:

Փոխարէնը տրւած ապրանքի գինն էլ իրենք էին նշանակում: Ճար չկար. գիւղացիութիւնը ատամները սեղմած՝ հանդուրժում էր:

Այսպէս շարունակեց մինչև 1928 թ.ի վերջերը, երբ կօօպերատիւներից միանգամայն վերացեցին բոլոր տեսակի ապրանքները, և խանութները փաստորէն փակեցին:

Հետաքրքրական է այն, թէ գիւղացիութիւնը ինչքան էր օգուտում կօօպերատիւ խանութներից: Իւրքանչիւր շնչին տրւում էր ամսական 50 գրամ շաքար, օրական 1.50 Փունտ հաց. վերջը աւելի պակասեցրին և տալիս էին այնպիսի հաց, որ ուտել չէր կարելի: Մէկ տան համար ամսական տրւում էր 1 կտոր սապոն, 2 սուգի լուցիկի, 2 Փունտ նաւթ, 1 կոճ թել, 4-5 մետր կտաւ կամ չէթ: Սկզբում, այս մթերքների հետ գիւղացիները պարտաւոր էին ստնել և Ռուսաստանից մնացած ով գիտէ քանի տարւայ հնութիւն կազմող հօշիկներ, կրկնակօշիկ, շորացած սապոն, կօշիկի իւշ, կոմունիստ գործիչների հազար ու մի անասնակ նկարներ, իսկ 1927-ից, երբ սպառուեց «խլամ» կոչւած ապրանքը, սկսեցին ծախել սոսմակներ և քանապան մարկաներ: Այսպէս, եթէ մէկը խանութից առնում էր իր և իր տան հասանելիք ապրանքը, պարտաւոր էր գնել նաև սոսմակներ Աւիօքիմի, սաւառանակի, Մոպրի կամ արտասահմանի այս այն երկրում գործազուրկ արած բանորրների օգտին: Իւրքանչիւր տուն ունի իր զբքոյիլը, որի մէջ արձանագրւած է անդամների թիւը և տարիքը: Առանց այդ զբքոյիկի մթերք չի տրւում: Ի հարկէ, մթերք յաճախ չէր լինում. երբ ստացւում էր, խանութների առջև կազմւում էին պատմական պոչերը. մարդիկ երկար ժամերով, երբեմն ամբողջ օր, հերթի են կանգնում մի կոճ թել կամ մի քանի հատ սանդ, մի շիշ նաւթ, 2 սուգի լուցիկ կամ 4-5 մետր չէթ ստանալու համար: Եւ քիչ չի պատահում, երբ ժամերով հերթի կանգնելու համար: Եւ քիչ չի պատահում, երբ կառավարչի յայտարարութիւնը, թէ՛ «ապրանքը վերջացաւ»:

Երբ հանդէս եկան կոլիտգները, դրութիւնը աւելի ևս վատացաւ. կօօպերատիւ խանութներից ապրանք էր տրւում միայն կոլիտգի անդամներին, մնացածները զրկւում էին: (Շարունակելի)

**Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ**  
**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՒ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ**

Ընկերվարական Միջազգայինը և Արիստակերտական Միութիւններու Դաշնակցութեան Միջազգայինը կազմած էին խառն յանձնախումբ մը բնեին հասնաշխարհային տնտեսական ճգնաժամի և գործազրկութեան խնդիրները: Յիշեալ յանձնախումբը գումարեցաւ յունուար 21-ին և 22-ին, Յիւրիխի մէջ: Ներկայ էին՝ Նաֆթալի և Սփիւրի (Գերմանիա), Օտտո Բաւար և Բէնէտիտա Կաուցիլի (Աւստրիա), Ժակոպարս (Դանն-

մարք), Ժուհո (Ֆրանսա), Բոլթըն, Սիբրեն, Կոմբըն և ձիլիս (Անգլիա), Գրիմ (Ջուպերիա), Ալլեր՝ Ընկերվարական Միջազգայինի Հարտաւարը, Շէվրետի՝ Արիստակերտական Միջազգայինի Հարտաւարը և, իբրև մասնագետ՝ Հ. Ֆիւս: Սիբրեն կը նախագահէր: Իր աշխատանքներու մասին խառն յանձնախումբը հետեւեալ յայտարարութիւնը զրկեց մամուլին.

«Յանձնախումբը ընձած է 15 տեղեկագրեր, որոնք

պատրաստւած էին իր ենթախնամախոսութեամբ երկրի և կը վերաբերէին համաշխարհային տնտեսական ճրգնածածկէն բխող խնդիրներուն. այդ քննութեան արդիւնքները խտացուցած է շարք մը բանաձևերու մէջ: Ասոնք Արհեստ. Դպն. Միջազգայինի հոգածութեամբ դրժոյկներով պիտի հրատարակին և ներկայացուին բոլոր երկիրներու բանւորական կազմակերպութիւններուն:

Այս բանաձևերով ձևակերպուած հաւաստումներն ու պահանջները կարելի է ներկայացնել հետևեալ համառոտութեամբ.

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԳՆԱԺԱՄԻ ՆՍԱՐԱՅԻՐԸ

Պատերազմէն ի վեր համաշխարհային արտադրութեան միջոցները շատ մեծ չափերով զարգացան թէ՛ ճարտարաբանութիւն թէ՛ երկրագործութեան մէջ: Սակայն, կարելի չեղաւ սպառել արտադրութիւնները: Շահերու կուտակումը թոյլ տուաւ, զիչ տարիներու ընթացքին, զահալվծ ձևով մը տարածել և զարգացնել արտադրութեան միջոցները: Ասոր հակառակ, օրակարճերու յաւելումը, նոյն ժամանակակաշխարհին, բաւական չեղաւ աւելցնելու զանգաւածներու սպառողական կարողութիւնը՝ արտադրութեան համընթաց: Այս անհամաչափութիւնը արտադրութեան և սպառման միջև, — ճգնաժամի հիմնական տարրը, — հետևանք է աճեալն առաջ այն իրողութեան, որ օգտագործւած կուտակւած շահերը, որոնք մեծ մասով յատկացւած են արտադրութեան միջոցներու ծաւալման և զարգացման, կաճեն աւելի արագ, քան օրակարճերը, իսկ օրակարճերը դրեթէ մտրոյղութեամբ կը յատկացնեն սրնունդի ծախքերուն: Օրակարճերու նազեցումը ոչ միայն հեռու է մեղմացնելու այս անհամաչափութիւնը, այլ և կը ծանրացնէ զայն: Եթէ իւրաքանչիւր երկրի գործատէրերը փորձեն աւելի ոյծ տալու իրենց ըրցման միւս երկիրներու գործատէրերու հանդէպ՝ նազեցնելով օրակարճերը, այս ճիգերը պիտի ունենան այն արդիւնքը, որ ամբողջ աշխարհի մէջ զանգաւածներու գնելու կարողութիւնը պիտի նազի, այսինքն պիտի ծանրանայ այս միջակազային ճգնաժամը, որ կը յայնուի տկար սպառումով: Ան աթէ ինչու համար յանձնախումբը ներկայիս բանւորական շարժման հիմնական պարտականութիւններէն մէկը կը նկատէ իր բոլոր ուժով և միջոցներով բոլոր երկիրներու մէջ ընդգիծմանով օրակարճերու կրճատման:

2. ԳՈՐԾԱԶԳՎՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՏՆԻՈՂՈՒԹԻՒՆԸ

Քիչ տարիներու ընթացքին ռուսիանալիզաիսմը՝ արտադրութեան ձևերու կատարելագործումը՝ հակառակն չափով բարձրացուցած է աշխատանքի արտադրութիւնը: Բայց աշխատող ձեռքերը, որ տրամադրելի դարձան զարգիւ աշխատանքի ներուժութեան և մասնագիտական զարգացման, չգործածուեցան արտադրութեան այլ ճիւղերուն մէջ: Այս բարդկները կը մնան անօգտագործելի: Ուրեմն, անհրաժեշտ է համաչափ դարձնել աշխատանքի տեղութիւնը արտադրա-

կանութեան համեմատութեամբ, որ մեծապէս աճած է:

Նկատի առնելով համաշխարհային գործադրութեան մեծութիւնը, յանձնախումբը բարեպատեհ և անհրաժեշտ կը նկատէ ձևանարկել միջազգային պայքարի՝ ի նպաստ հնգօրեայ շաբաթի (և քառասուն ժամայ):

Ասկէ զատ, տեղի է ցրելու աշխատանքի շուկան՝ հաստատելով անգործութեան ժամանակի վճարման դրութիւն. հոն, ուր տակաւին չկայ, հաստատել զըրոցական պարտադիր տարիքի սահմանը և այսպիսով կազմակերպել աշխատանքի շուկան:

Յանձնախումբը կընդգծէ, որ ծախսերու կրճատումը չէ, որ տնտեսական ճգնաժամի առնել կարող է մեղմիկ արտադրութեան և սպառման միջև գոյութիւն ունեցող անհամաչափութիւնը, այլ, ընդհակառակը, այն լայն և մեծ վարկերը, որոնք յատկացւած պիտի ըլլան հանրային արտադրական աշխատանքին:

3. ԱՆԳՈՐԾՆԵՐՈՒ ՕԳՏԻՆ ԱՌՆԻԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Անհրաժեշտ է հաստատել իւրաքանչիւր երկրի մէջ ազգային կազմակերպութիւն մը, որ կոչոււմ պիտի ունենայ կենտրոնացնելու ապարանքներն ու հանրային աշխատանքները գործադրութեան շրջանին, անշուշտ, նախօրօք կազմւած պարտադիր ծրագրի մը հիման վրա: Գործող ձեռքերու կայունացման այս եղանակը այնքան ազդեցիկ պիտի ըլլայ, որքան մեծ ըլլայ հանրային իշխանութեան մասնակցութիւնը ընդհանուր տնտեսութեան մէջ:

Յանձնախումբը կը պահանջէ, որ գործադրելիները, ամբողջովին կամ մասամբ հատուցում ստանան գործադրութեան տեղութեան ընթացքին: Կը հրաւիրէ բանւորական շարժումը պաշտպանել գործադրութեան ապահովագրութիւնը ընդգծմ գործատէրերու ընդհանուր գրոհին, և պահանջել, որ բոլոր երկիրներուն մէջ ստեղծեն ապահովագրական հաստատութիւններ ընդգծմ գործադրութեան: Ազգային և միջազգային համաձայնութիւններն ու մենաշնորհները աներկրային կը նպաստեն երկարելու ճգնաժամը՝ արհեստական կերպով բարձր պահելով գիները ճգնաժամի ժամանակ և դըմիիցիի կազմակերպութեամբ կազմալուծելով համաշխարհային շուկան: Ան ա ինչու համար յանձնախումբը կը հրաւիրէ բանւորական կուսակցութիւնները պահանջելու հանրային վերհակողութիւն բոլոր մենաշնորհներու վրա, ինչպէս նաև հակա-կիւր գներու նշանակման վրա, որ այս մենաշնորհեալ հաստատութիւնները պիտի գնեն, մասնակցութեամբ բանւորական միութիւններու և սպառողական ընկերութիւններու: Միջազգային քարտէշները նոյնպէս պէտք է ենթարկել Ազգերու Դաշնակցութեանէն բխած տընտեսական կազմակերպութեան մը հսկողութեան:

4. ՄԻՋԱԶԳՎԱՏԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՈՎ ՎԻՃԱԿԸ

Մաքսապաշտպան քաղաքականութեան բարդութիւնը պատերազմէն ի վեր նպաստած է միջազգային շուկայի քայքայման: Յանձնախումբի բանաձևերը պարտք կը դնեն աշխարհի բանւորական շարժման վրա՝ ճնշում գործադրելու, որպէսզի իրենց կառավա-

րութիւնները համաձայնին միանալ այն յանձնառութեան, որ մաքսային գինազուլ մը նախատեսել, և մասնակցելու Անգլիոյ աշխատաւորական կառավարութեան ջատագոված այն բանակցութիւններուն, որոնք կը նախատեսեն միջազգային մաքսային գնիւրու նւարումը, ըստ ապրանքներու տեսակներու:

Գրամաթուղթերու նւարեցման քաղաքականութիւնը, գործադրուած գանազան երկիրներու մէջ, նոյնպէս ծանրացուցած է տնտեսական ճգնաժամը: Ոսկիի անհամաչափ բաշխումը աշխարհքի մէջ, միջազգային տնտեսութիւնը խոլովող տարր մը կը հանդիսանայ: Յանձնախումբը կը պահանջէ իրիստ հակալիտո մը թղթադրամ տպող դրամատուններուն վրա. այս հակադրութեան պէտք է մասնակցէին բանւորական կազմակերպութիւնները:

5. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՐՏՔԵՐԸ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Այն հսկայ վճարումները, որ Գերմանիա պարտաւոր է ընել իր պահանջատէրերուն, որպէս հատուցում, և այս վերջիններն իրենց կարգին պարտաւոր են վճարել Ամերիկային, որպէս պատերազմական պարտք, համաշխարհային տնտեսութիւնը խառնակող տարրեր են: Ապրանքներու գններու անկումը մեծապէս աւելցուցած է իրական արժէքը այս վճարումներու, որոնք միայն ապրանքով կրնան տեղի ունենայ: Արդ՝ պահանջատէր երկիրներու մաքսապաշտպանութիւնը մեծ արգելք կը հանդիսանայ: Այս դժարութիւնները կը քաջաբերեն տըմփիիկի ձգտումը: Պատերազմի այս պարտքերու ջնջումը կամ մասամբ կրճատումը, կասկածէ դուրս է, որ մեծ շարժով պիտի հարթէին միջազգային տնտեսական դժարութիւնները: Սակայն, տարակոյս չկայ, որ Ամերիկայի հանրային կարծիքը թոյլ չպիտի տայ պատերազմական պարտքերու կրճատումը, մինչև որ եւրոպական երկիրները չձեռնարկեն միջազգային գինաթափուլութեան:

6. ՍՊԱՌԱԶԻՆՄԱՆ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Բացայայտ է, որ քաղաքական վտանգները կը ծանրացնեն տնտեսական ճգնաժամը, և միայն խաղաղութեան հաստատումը կրնայ Հնարաւոր դարձնել համաշխարհային տնտեսութեան բարգաւաճումը: Այս տեսակէտէն, միջազգային գինաթափուլութիւնը յանձնախումբին կը թւի ամենէն ասիպողական անհրաժեշտութիւնը: Բոլոր երկիրներու հաւասարութիւնը խաղաղութեան մէջ՝ պէտք է առաջնայ ոչ թէ գինաթափ-

ւած երկիրներու գինումով, այլ միւս երկիրներու սպառազինման կարեւոր շափի կրճատումով:

7. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Յանձնախումբը կրնոյնի, որ եւրոպական պետութիւններու համայնքը, ինչպէս ամէն մէկ պետութիւն, պէտք ունի մեքենակառնութեան մը, որ թոյլ տայ խաղաղ քննութիւնը իր կազմակերպութեան: Միևնոյն ժամանակ, յանձնախումբը հանրային կարծիքը կը դրուշացնէ ընդդէմ Իտալիոյ Փաշիտական կայսերապաշտութեան, որ իր շուրջը կը հաւաքէ կարգ մը պետութիւններ, որոնք դաշնագրերու վերաքննութեան նշանաբանի տակ, վտանգաւոր դաշնակցութիւն մը կը կազմեն խաղաղութեան համար: Մերժելով այս վտանգաւոր ընթացքը, մերժելով նոյնպէս Իտալիոյ տնտեսական խաբարիստները, ինչպէս նաև. Գերմանիոյ 1930-ի ընտրութիւններու տնտեսական վատ հետևանքները, յանձնախումբը կը յաշտարարէ թէ Փաշիտական բռնակարութիւններու վերացումը անհրաժեշտ պայմաններէն մէկն է Եւրոպայի քաղաքական հանդարտութեան, առանց որու համաշխարհային տնտեսութիւնը չպիտի կրնայ բուժուիլ:

Յանձնախումբի աչքին Խորհրդ. Ռուսաստանի, Չինաստանի և Հնդկաստանի հետ եղած առևտրական յարաբերութիւններու խառնակ վիճակը նոյնպէս պատճառներէն մէկն է համաշխարհային տնտեսական ճգնաժամին: Յանձնախումբը նորէն կը պահանջէ, որ կանոնաւոր դիւանագիտական յարաբերութիւններ և տընտեսական սերտ համագործակցութիւն մշակուի Խորհրդ. Ռուսաստանի հետ: Կը պահանջէ ուժեղ աջակցութիւն յօդուտ Հնդկաստանի և Չինաստանի և զանազան դադուիներու աշխատաւորներուն, որպէսզի անոնք իրենց՝ թշուառ կացութենէն կրնան վեր կանգնիլ: Եւ որովհետև ազգային ազատագրութիւնն անհրաժեշտ պայմանն է տնտեսական և ընկերային զարգացման, յանձնախումբը կը պահանջէ աջակցութիւն շնորհել այս ժողովուրդներուն, որոնք կը պայքարեն ազգային ազատութիւն ձեռք բերելու համար:

Յանձնախումբը համոզած է, որ անդործութիւնը վերջնականապէս չպիտի անհետանայ, քանի չեն ջընջւած դրամատիրական կարգերն և քանի անոնց տեղ հիմնած չեն ընկերովարական կարգեր, ու կը հրաւիրէ քաղաքական և աշխատաւորական բոլոր կազմակերպութիւնները կուեւրու՝ յօդուտ միջազգային բանւորական շարժման ծրագրի իրականացման»:

ՉԵԿԻՍՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գ. Ս. ԱՂԱԲԵՂՈՎ. ԳՊՈՒ. Չեկիստի յուշերը, Կրասն. «Ստրիվ», Բեռլին, 1930թ.

Չեկայի գործունէութեան մասին շատ մերկացումներ են գրել, բայց Աղաբեղովի գիրքը բացարիկ հետաքրքրութիւն է ներկայացնում: Նախ՝ նրա հեղինակ-

կը իրիստ աչքառու դէմք է, որ տաս տարի անընդհատ ամենապատասխանատու պաշտօններ է վարել և կարեւոր գործեր կատարել խորհրդային գաղտնի ոստիկանութեան շարքերում: Աղաբեղովը աշխատել է թուրքեստանում, Բուխարայում, Պարսկաստանում, Թիւրքիստանում, Մոսկուայում: Եղել է Համաժողովեանական

Գեպտու\*) արտասահմանեան բաժնի Արևելեան Հատուծի պետ (1928-29թ.) և նոյն հիմնարկութեան լիազօր ներկայացուցիչ Մերձավոր Արևելքում (1929-30) : Առանձնապէս ջանք Ծանօթ է արևելեան գործերին՝ Պուլսի մինչև Հնդկաստան :

Միւս կողմից, Աղաբեգովի գիրքը գրեթէ զուրկ է ընդհանուր տեղեկից, զատողութիւններէն ու խորհրդաձեռնութիւններէն և ծայրէ ծայր յազեպտէ և փաստաբանութիւն, անուններով, թւական տեղեկութիւններով, դէպքերի նկարագրութիւններով և նա անուս է սպանել մերկացումներ ո՛ր միայն Ձեկայի ու Գեպտուի գործունեութեան, այլ և գանազան պեթութիւնների պատճենատեղի, պաշտօնական և անպաշտօն անձանց արարքների : Լրտեսութիւն, մատուցութիւն, հրահանգութիւն, կաշառք, հաստատփութիւն, ամէն տեսակ զազրիչ գործողութիւններ... Աղաբեգովի գրքի բովանդակութիւնը կարելի չէ սխալ մտղղութեամբ պէտք է կարգաւ առաջին էջից մինչև վերջինը :

Մեզ համար, մասնաւոր, խիստ շահեկան նրիթ է պարունակում Աղաբեգովի գիրքը : Այսպէս, օրինակ, մի աւելորդ անգամ առիթ ենք ունենում լսելու բուլշեւիկ-իթիթիկանական գործակցութեան մասին : Թուրքեստանում ծագած բասմաշական շարժման առթիւ Աղաբեգովը գրում է . «Բասմաշակների փաստական ղեկավարները թիւրքերն էին, որոնք լաւ պատրաստուած էին դիմադրական ու մշակութային տեսակէտով :

«Էնվեր փաշան՝ որը Լենինի հետ պայմանաւորելով, հազուադ ղուժարած Արևելեան Ժողովուրդների առաջին համագումարից յետոյ պէտք է մեկնէր Թուրքեստան, որպէսզի խաղաղացնէր այդ (բասմաշական) հրոսխմբերը, միացնէր նրանք և արևելեան Ժողովուրդների ապստամբութեան նշանաբանի տակ Աղաբեգովի պատրաստի շարժեր դէպի Հնդկաստան — լուսինից էր խօսը :

«Երիտասարդ-թիւրք նախկին նախարարները Մուսկալում պայմանաւորել էին խորհրդային կառավարութեան հետ, որ մասնատական աշխարհք ասպատակութեան ցերտայի դէմ : Թիւրքիայի նախկին զինուորական նախարար Էնվեր փաշան ընդունեց կրեմլում անձամբ Լենինի կողմից : Յենուլով էր ունեցած Ներկապետութեան վրա Արևելքի Ժողովուրդները մէջ՝ նա խնդրեց Լենինից՝ հնարաւորութեան տալ իրեն Թիւրքեստանի Թիւրքերի ցեղակից Ժողովուրդները ոտքի հանել և Աղաբեգովի վրայով առաջնորդել ընդդէմ Հնդկաստանի : Լենինը համաձայնեց : Ամէն մէկը էր նպատակու էր հետամուտ լինում : Էնվերը լոյս ունէր շարժման կազմակերպումովը կանխել զանախիցներին և արգելք հանդիսանլ Թիւրքիայի բաժանման : Իսկ Լենինը կարծում էր, որ արևելեան Ժողովուրդների պատաստմութիւնը կրողային բուլշեւիկան սպեցեութեան շրջանակը և կը թուլացնէ Անգլիայի հօգուտութիւնը, որով կարագացնէ յեղափոխական շարժումը Եւրոպայում :

«Էնվեր փաշան մեկնեց Բուխարա : Բուխարայի ընկալիչները նրան ընդունեցին հրացումով : Երբ նա անցնում էր Բուխարայի փողոցներով, տանիքների վրա կանգնած կանաչ բերանից ցած էին գցւած ծածկները ի նշան գերագոյն պատիւի : Բուխարայում Էնվերը գտաւ շատ կուսակից թիւրք սպանից :

Գիշ յետոյ, Աղաբեգովը հաղորդում է չեկիտու Ռէյսի պատմութիւնը Էնվերի մասին . «Նա (Ռէյսի) պատգամաւոր էր ուղարկւած Բաքի Արևելեան Ժողովուրդների Համագումարին և առգաւորել էր հանրակացարանում թուրք արևելեան կոմունիստների հետ միասին : Էնվեր փաշան, դալով Բաքու, այցելեց հանրակացարանը : Հէնց որ Էնվերը մտաւ ներս, բոլոր

կոմունիստ արևելցիները ծունկի իջան, սողալով մօտեցան նրան ու սկսեցին համորելի նրան ձեռքերն ու հագուստը : Տեսարանը այնպիսի զարդէ պատրուկութիւն է թողել Ռէյսիի վրա, որ նա չէր կարողանալ և ուղեցնել և սպանել Էնվեր : Սակայն, չեկիստները անմիջապէս ձերբազան արեցին փաշան :

Ինչպէս յայտնի է, Էնվերը, ճաննեց, անցաւ ասպատակ բասմաշակների գլուխը, պատրաստ յայտարարեց բուլշեւիկներին և սպանեց ուսանների ձեռքով : Աղաբեգովը պատմում է Էնվերի սպանութեան մանրամասնութիւնները :

Աղաբեգովը խօսում է իթիթիկանական մի ուրիշ նախարարի՝ ձեմալ փաշայի մասին, որ խորհրդային իշխանութեան յանձնարարութեամբ համախալ զանաւորումներ էր կազմակերպում Անգլիայի դէմ : Ձեմալ փաշայի վախճանն էլ ծանօթ է նա սպանեց Թիթիկանում, ինչպէս պնդում են բուլշեւիկները, զաշահցակալի դիպակով :

Առաջուս են Աղաբեգովի հաղորդած տեղեկութիւնները և ջրգական շարժումների մասին : Մեզ խիստ հետաքրքրում էր ջրգական խնդիրը : Մուսկալում, Գեպտուի Արտասահմանեան Բաժնում, մենք երկանք հետեւալ կորակացութեան . ջրգական շարժումը բաժանուած են յորս պետութիւնների մէջ . Թիւրքիայի, Իրաքի, Պարսկաստանի և Սորհրդային Ռուսաստանի : Նրանք ամենը գտնուում են Իրաքից կուկկաս տանող ճանապարհների վրա, և Անգլիայի ու Ռուսաստանի պաշտպան թախման մէջ նրանց մարտագիծը ահապէս նշանակութիւն կունենայ այս ցզմող կողմերի համար : Պէտք է աւելացնել, որ Ժողովուրդը ինքնին հիասուլի զինուորակաւ միթ է հանդիսանում : Այսպիսով, մեր առջև խնդիր էր արած նախօրք պատրաստել ջրգից ցեղերը ընդդէմ Իրաքի, ուր, Գեպտուի տեղեկութիւններով, կենտրոնացում էին անգլիական օդային ուժերը : Այդ խնդիրը բաժնու համար խորհրդային կառավարութիւնը ենթադրում էր 1927-ին «Ինքնուրոյն հանրապետութիւն» յայտարարել Բիւրգիստանի փոքրիկ մէկ կտորը, որ գտնուում է խորհրդային հողի վրա, որպէսզի գրանցվ մնացած ջրգից ցեղերի համակրանքը գրաւել խորհուրդների կողմը : Սակայն, այս ջրաղբը հանդիպեց արմատեան գործավարութեան հակապետութեան . նա վախճանում էր սրել յարաբերութիւնները Թիւրք և պարսիկ կառավարութիւնների հետ : Պէտք էրաւ ուրիշ ջրաղբը ընդունել . կազմակերպել ջրգից ցեղերը գաղտնի կերպով :

Գրգական հարցի կապակցութեամբ Աղաբեգովը արձանադրում է Թիւրք-խորհրդային գրաբեկական տեղեկատուութեան հետեւալ զարգրի փաստը . «Պարսկաստանում, 1927թ. ջրգական ասպատակութեան միջոցին, Թուրքիոյ զաշահցականները և նրանց Բիւրգիստանի ներկայացուցիչ Մուսաբեկանի նամակների պատճեններից մենք իմացանք, որ զաշահցիկ կուսակցութիւնը սերտ կապ է պահում ասպատակների հետ՝ օգնելով նրանց գէնջով ու մարդկանցով : Բացի այդ, նամակներում Թուրքիի տեղեկութիւնները, որոնք վարկարեղում էին Բաքուից հայոց առաջնորդ Ներսէս արքեպիսկոսի, որի տակ Գեպտուի մարտը տկաններ էր փորում . Թեհրանի խորհրդային ներկայացուցիչ Դաւիթեանը, կամենալով վատացնել պարսիկ կառավարութեան և զաշահցականների յարաբերութիւնները և, Ի մասնաւորի, Ներսէս արքեպիսկոսի հետացումը յալոցնելու նպատակով, այդ նիւթերը յանձնեց պայտաղանի նախարար Թէյմուր Թաշին և միտամանակ հաղորդեց Թիւրք դեսպանութեան : Թիւրքերը ետաղծով արձակեցին Դաւիթեանին՝ շտաւ նա հասկանալով, որ ստանց զաշահցականների օգնութեան ջրգիցները հազիւ թէ կարող են լուրջ դիմադրութիւն ցոյց տալ Թիւրք կաստանաւոր ջրգիցին :

Իրրև հետեւանք այս դիմումների, պարսիկ կառավարութիւնը կարագրեց Թուրքիոյում կատարել խուզարկութիւնները...

\*) Գեպտու — Պետական Բազաբկան վարչապետ կրճատ ձևն է ռուսերէն : հայերէն Պետապարչապետ :

Կարելի է երեւակայել աւելի զազրելի տեսարան, քան Հայ բրէնկի Դասիւթեան և թիւրք դեսպանի եղբայրական համագործակցութիւնը: . . . Հայոց թեմի մի ստանյոզը տակաւինը նպատակով:

Սակայն, ի՞նչ ենք պահանջում մենք բոլշևիկներէջ ինչի՞նք ու մեծանք փաշաների գործակիցը ինչո՞ւն չի կարող ձեռք տայ և քեմալի գործակալին, մանաւանդ այժմ, երբ խորհրդային իշխանութիւնը դարձել է պաշտպան բոնութեան ու յետադիմութեան համաշխարհային մասշտաբով: Մի կողմից դաշնակից Ֆաշիզմը, միւս կողմից նեցուկ ու բարեկամ արեւելեան օտարապետները ու չէլիերի, խորհրդային իշխանութիւնը վաղուց քրեմ արատ է համարում ամէն տեսակ բարոյական «նախապաշարութիւնները»: Այն երկէ կը, որ համարում էր պարտաւորեցուցէ՞ք, զէ՞ք Խօսքով, ցուցադրել զազափարական դէմք, Ստոլինի մականի տակ ալք պերճանքն էլ վերացւեց: Ազարէզովը գրում է.

«1917 թին, Ռուսաստանում խորհրդային իշխանութիւնը հռչակելուց յետոյ, բոլշևիկները յայտարարեցին արժեքներն ճշուած ժողովուրդներ արատութեան նշանաբանը, ցարական կառավարութեան կնքած անհասարար դաշնագրերի վերացումը և վերադարձ արեւելեան պետութիւններին իր սմենի, որ նրանցից թալանել էր ցարական Ռուսաստանը: Ռուսաստանի կապիտալիստին իրաւունքները Արեւելքում ջնջւեցին, Պարսկաստանին ու Չինաստանի պարսքերը ցարական Ռուսաստանին հախիւներից հանուցին: Յեղափոխական քաղաքականութիւնը գործնականում էլ կիրառւում էր:

Իսկ 1925-ից ի վեր ալք անհասխիտիբ քաղաքականութեան մէջ սկսւեց շրջապտումը: 1925-ին խորհրդային իշխանութիւնը ուժով գրաւեց արաքական հողի մէկ մասը (Ռուսա-Տուրքայ կղզին): 1927ին խորհրդային իշխանութիւնը մերժեց յանձնել պարսիկներին Պէլքի եւսահանգիստը՝ յայտնա պարսիկների անվիճելի իրաւունքին: Վէճը վերջացաւ նրանով, որ ճանաչելով պարսիկների օրինական իրաւունքը նաւահանգստի վրա՝ խորհրդային իշխանութիւնը փաստում էր գրաւած պահեց: 1928-ին խորհրդային իշխանութիւնը հագուտը փոխած կարծի բանակալիները միջոցով աշխատեց գրաւել Հիւսիսային Ալաշխիստանը: Վերապէս, 1929-ին, Չինաստանում ունեցած արտօնութիւնների պահպանելու նպատակով, որոնցից հէնց ինքը հանդիսանորակաւ հրատարակել էր, խորհրդային իշխանութիւնը Չինաստանի դէմ ուղղեց կարմիր բանակը և հիմնադրական կործանեց նւաած շրջանները: Եւ Ազարէզովը արձանագրում է բացմաթիւ օրինակներ, որոնք խորհրդային կառավարութիւնը ներկայացնում են որպէս աշխարհակալ ու շահագործող, միջոցներ մէջ ոչ մի խորհրդային շնորհ իշխանութիւն: Խորհրդային պետութեան զաղտոնի ու յայտնի գործակալներ շահատակութիւնների համեմատութեամբ բուրձուտական պետութեանց ներկայացուցիչները արարքները ստժօրն ու անմեղ բաներ են:

Անենք, թէ՛ կուզ, խորհրդային իշխանութեան վարմունքը յուսադրական եկեղեցու սպասաւորների հետ: Ազարէզովը տալիս է անաւելի փաստեր, որոնք մի կողմից պատկերացնում են բոլշևիկների բարոյական անկուր, միւս կողմից՝ յուսադրական հոգեւորականութեան ալլանդակ ալլանդակում: Ազարէզովը պատմում է, որ հայ հոգեւորականներին օտարագործելու զաղափարը յղացել է Գեպուր Արեւելեան Հատասիի նախկին զեկավար յոյն Տրիսիդոֆիլը: Սրա ստանդարտութեամբ Գեպուրն, 1929թ. քաղաքին, որոշում է Հայ կղերականներին ծառայեցնել լրտեսական նպատակներ ճամար արտասանահամում, և մէկից աւելի վեղարտարներ վաճառուած են Չեկային: Ահա ալք աւթիւ ինչքը ենք կարդում Ազարէզովի գրքում:

«Գեպուրի Պոյի լիարօրը ունէր Թիւրքերու հայոց

եկեղեցու պատրիարք Նարոյանի ամբողջ դրագրութիւնը: Այդ նմարութիւնը էր տալիս մեզ իմաստուր եկեղեցուներին և բոլոր երկրների Հայ ազգայնականութեան տրամադրութիւնները: Նամակների մէջ նկատուով համակիր տրամադրութիւններ խորհուրդների վերարարմամբ՝ մենք ձեռք գարկինք որոշած անձնաց գրաման:

Ինչհանրապէս պետք է ասեմ, որ 1929թ. սկզբից Գեպուրի Արտասանահանան Բաժնիք վճարական միջոցների ձեռք առաւ օդտագործելու համար Հայ հոգեւորականութիւնը հետախուզական նպատակներով արտասանահանում: Հայաստանի Գեպուրի նախազգած Մարդարեանին յանձնարարեց պարզել, թէ Երեւանի եպիսկոպոսներից ովքեր պետքին են գործի համար, և գրաւելով նրանց Գեպուրի ծառայութեան՝ ջանալ սեղաւորել արտասանահանում:»

Այս որոշման հետեւանով մի շարք Հայ եպիսկոպոսներ գտնում են բոլշևիկեան լրտեսներ: Գեպուրի ուշադրութիւնը, ամենից առաջ, բնականաբար, ազգուում է դէպի Ատրպաականների թեմը: Ազարէզովը պատմում է.

«Պարսկական Արաքսասականում աւելի և աւելի ամրանում էր Հայ Դաշնակցութիւնը կուսակցութեան դիրքը, հակառակ Գեպուրի և Թարբիի խորհրդային հիւպատոսի ուժեղ հակադաշնակցական գործունէութեան: Խորհրդային իշխանութիւնն աւ Գեպուրն յատուկ թշնամութիւն էին անուցանում զէպօ Թարբիի Հայ արքեպիսկոպոս ներսէսը, որ գործն առաջակցութիւն է ցոյց տալիս դաշնակներին: Արքեպիսկոպոսը փանդաւոր էր նրանով, որ մեծ համակրանք վայելելով Հայ ազգայնականութեան և հոգեւորականութեան մէջ, կարող էր, ամենայն հայոց կախիղկոսով մահահանից յետոյ, սեղը բնաւել կաթողուր: Այդ դէպքում, կաթողուրական աթոռը Խորհրդային Հայաստանից կը փոխադրէ ուրիշ երկիր, և խորհրդային իշխանութիւնը կը զրկէր Հայ հոգեւորականութեան և նրա միջոցով Հայ ժողովրդի վրա ազդելու հնարաորութիւնից: Այդ պատճառով որոշեց ինչ զնով էլ լինի քել ներսէս արքեպոսին և սեղը դնել խորհրդային իշխանութեան համար ընդունելի մէկ անձնաորութիւն:

«Քննելով այս ծրագիրը՝ Գեպուրն ունէր և ուրիշ նպատակներ: Սպասանի Հայ արքեպիսկոպոսը պարսկահոգեւորական թեմի ստանյոզն էր: Այդ աթոռը գրաւում էր Մեսրոպ արքեպոսը, շատ ծեր, չափապանց զարգացած ու կրթւած և թուրք ազգայնական մի մարդ: Առանց պարզակամութեամբ գրաղելու, նա անյոզնում աշխատում էր Հայ ժողովրդի կարիքների համար: 1928-ին նա այցելութիւն տեւց իր հօտին Հնդկաստանում և մեծաքանակ նէլները հաւաքեց յօդուր Խորհրդ: Հայաստանի: Որովհետեւ նա դրամ էր հաւաքում խորհրդային Հայաստանի համար, շատերը նրան համարում էին և տակալին համարում են խորհրդային գործակալ: Սակայն, կրկնում եմ, ալք մարդը բոլորովին հեռու էր որեւէ քաղաքականութիւնից: Նրա միակ մտաւոգութիւնը Հայ ազգի պահպանութիւնն էր: Հակառակ նրա բարեմիտ վերաբերումին դէպի խորհրդային իշխանութիւնը, Գեպուրն մտադիր էր փոխել նրան մի ուրիշ անձով, որ կարողանար շարունակել նրա գործը, բայց, որին կարելի լինէր օդտագործել որպէս վարագոր շնդկաստանում կառարելուց հետախուզական աշխատանքի կայմակերպման համար:

«Գեպուրի Արտասանահանան Բաժնում երկար մշտամում էին Թարբիի ու Հնդկաստանի խնդրի լուծման մասին, և ելքը, վերջապէս, գտնեց: Փրանստարի ապրում էր Ղլտիան վարդապետը, որ երկու տարի շարունակ Գեպուրի գործակալ էր № 1/58 անունով: Ստանալով ճանապարհանոսիս՝ Ղլտիանը 1928-ի վերջին եկաւ Մոսկու և ընդունեց իմ կողմից: Ես բացատրեցի նրան, թէ ինչումն է բանը: Ի պատաս-

խան Լլոյշեանը առաջարկեց չնտեւել ծրագիրը: նա կերթայ Երևան կաթնուղիկուսի մօտ, և կաթնուղիկուսը, Գեղեղաի ճնշման տակ, ճրտն եպիսկոպոս կը ձեռնադրէ և կը նշանակէ կաթնուղիկուսին ներքին Պարսկաստանում, ուր նա ապրել է առջ և ուր ունի բազմաթիւ կապեր: Բայց Թրանսասում մնացել է Լլոյշեանի կենակիցը: Գեղեղան կը տայ նրան, որպէս քարտուղար, իր լիազօրեանքը մէկին, որ միաժամանակ կը հաշտի նրա կենակցի նշանակը և դրանով կը ծածկէ իր կապը եպիսկոպոսի հետ: Լլոյշեանը երաշխատում էր, որ եթէ Պարսկաստանում պաշտօն ստանայ, կը կարողանայ հետացնել Ներքին արքայ-ին Թուրքիոյ: Ներսէսի տեղը կարելի է Սպահանից քերէ լսող Մեսրոպ եպ-ին, իսկ ինքը, Լլոյշեանը, կը ստանան Ննդկա-պարսկական թիմի առաջնորդի պաշտօնը, և այն ժամանակ Գեղեղաի գործակալութեան կազմակերպումը Հնդկաստանում կարելի կը լինի համարել ապահովում:

«Բանակցութեան ժամանակ և յետագային, երբ մենք անցանք վարձատրութեան հարցին, ես Լլոյշեանի մասին այն տպաւորութիւնը կազդեցի, որ մի լաւ սրիկայ է: Մովորական սրիկաներից նա տարբերում էր միայն նրանով, որ հոգեւոր կոչում ունէր և իր աշխատանքը աւելի էր գնահատում, քան ուրիշները: Լլոյշեանը Գեղեղաից ստանում էր ամսական 200 դոլար: Գերջին տեղեկութիւնների համաձայն, Լլոյշեանը իրաւորներ է ծրագրի առաջին մասը: նա ստացել է եպիսկոպոսութեան աստիճան և այժմ կաթնուղիկուսական ներքին և Պարսկաստանում»<sup>\*)</sup>:

Ահա և մի ուրիշ շլու սրիկայ» — Յունաստանի առաջնորդ Մազլումեան եպիսկոպոսը: Սրա մասին Աղաբէգովը պատմում է: Գեղեղաին յանձնարարել է երկտանոց գոհարավաճառ Գիւրջեղեանին, որպէս քաղաքական գործակալ: «Մենք որոշեցինք Գիւրջեղեանի վաճառատունը, որ բաժանմունքներ ունի Եգիպտոսի բոլոր քաղաքներում, օգտագործելով Նեոսիտուլութեան և քարոզչութեան համար»:

Մազլումեանի մասին Աղաբէգովը գրում է. «Երկտունքը վերջերին (1920թ.) Մոսկուայից եկաւ (Պոլիս) Գեղեղաի նախկին յունական լիազոր Մուրտուկովին: նրա պատմելով յունական ցանցը վատ էր կազմակերպում: Ու 2/23 թիւ տակ հաշուում էր Յունաստանի հայ առաջնորդ Մազլումեանը: Արքի խորը դործակալ էր Գեղեղաի դրամներով հրատարակուող հարկին լրացող խմբագիրը, Բայց Մուրտուկովին իտոր հուրով էր առիթ կապելու նրանց հետ, որովհետեւ նրանք արդէն որոշ չափով վարկաբեկել էին իրենց խորհրդատիրական քայլերով»:

Մի այլ շլու սրիկայ» էլ Պարտուկ կա — Պատմական վարպետը: Լսե՛ք Աղաբէգովին.

«Էջմիածնի հայոց կաթնուղիկուսը 1920-ին որոշել էր եպիսկոպոս ձեռնադրել Պատմականին և կանչել էր Երևան: Գեղեղաի Պոլիս լիազոր Եպիսկոպոսը, աչքի առել ունենալով Պատմականի օգտակարութիւնը Գեղեղաի աշխատանքի համար, առաջարկեց խորհրդային հիւպատոսի մեթոդով միկալ արք: Միաժամանակ Գեղեղաի գործակալները սեպեցին յօշոփել գետինը՝ խոստանալով Պատմականին առել վիզա, եթէ նա համաձայնի եպիսկոպոս ձեռնադրելուց և Պոլիս վերադառնալուց յետոյ՝ տեղեկութիւններ հաղորդել Գեղեղաին: Պատ-

մանեանը, որ բուն տեղյակը ունէր եպիսկոպոս դատարար, համաձայնեց: Նրանից ստորագրութիւն առնեց, որ յօժար կամքով պարտաւորել է Գեղեղաի գործակալին, և այդ վարկենապէս տւին միկալ: Երևան համեմուց յետոյ, Պատմականին մանրամասնար մշակեց յայտատուի Գեղեղաի նախագահ Մարգարեանը: Նոր թիւսում եպիսկոպոս վերադարձաւ Պոլիս և այժմ գործում է իրեն Գեղեղաի գաղանկ աշխատակից»:

Վերջապէս, մի շլու սրիկայ» էլ. «1920թ. կէտեբին Խորբիւց Հայաստան եկաւ այնտեղի հայ եպիսկոպոսը: Խորբիւում նա իրեն վարկաբեկել էր նրանով, որ յայտնագործել էր մի հիւրանացում կանանց հասարակութեան մէջ և հարբած վիճակում: Խայտատուութիւնից խուսափելու համար նրան խնդրել էին, որ մէկին միանաստեղ: Երևան հանելով՝ նա նշանակեց Իրաքի թեմի առաջնորդ: Նախ քան Իրաք մեկնելը՝ նրա հետ մանրամասն խօսակցութիւն ունեցաւ Հայաստանի Գեղեղաի նախագահ Մարգարեանը, որ վերջնականապէս զբաւեց և ստորագրութիւն առաւ նրանից, որ հետախուզութիւն է կատարելու Իրաքում Գեղեղաի հետահանելով: Եպիսկոպոսի ստորագրութիւնը Մոսկուա ուղարկելով՝ Մարգարեանը խնդրում էր Գեղեղաի Արտասահմանեան Բաժնից մեկնելու մեր նպատակները Իրաքում: Ես անմիջապէս ուղարկեցի Երասնանցին: Եպիսկոպոսը, ստանալով Գեղեղաի դրամարկից մի քանի հազար դոլար իրեն կազմակերպչական ծախս, մեկնեց Իրաք կառավարելու համար իր հօտը: Այս բարի պատուը Խուրեհն եպիսկոպոս Մանասեանն է:

Այս քան մէջբերումներն էլ բաւական են ցոյց տալու համար, թէ անկման ինչ ստակիլ աստիճանի են հասել հայ կղերականներից շատերը, ինչ բարբեր են տիրում լուսատուրչական եկեղեցու պայտօնէութեան շարքերում: Եւ բնորոշ այն էլ, որ մինչև այժմ հայ կղերականութիւնը լուռ հանդիսատես է հանդէպ մերկացող խայտատուութիւնների: Ո՛չ մի բողոք, դատապարտութեան ո՛չ մի խօսք — թէ՛ Լլոյշեաններն ու Մազլումեանները բացառիկ ու հիւանդոտ երևոյթներ չեն համարում այլևս...

Հայ կղերը կարող է միեկնարակել: շլու սրիկաները միայն իրենց շարքերում չեն: Այնպահանջների մէջ էլ կան: Ահա Թե՛հրանի «Գրապարտ» թերթի զգալուփարական խմբագիր Բ. Արչալի Լազարեանը, նախկին դաշնակցական: Մարդը գրքեր հրատարակեց, ուրպաւ իր անցեալը, պաշքար մղեց Դաշնակցութեան ջիմ՝ ջանալով հաւատացնել, որ սկզբունքային ու գաղափարական պատճառներ են դրոյում նրան պայքարի: Եւ ահա սապարից էլ գալիս Աղաբէգովը և վճռական ձեռով յայտնում. «Ո՛չ, զգալուփար չկայ մշտեղը, կայ միայն կեղտոտ դրամ: Բ.Մ. Ա. Լազարեանն էլ ծախել է Լլոյշեանների ու Մազլումեանների պէս:

Աղաբէգովը գրում է. «Մոսկուա շատ մեծ կարեւորութիւն էր առիթ հայ Դաշնակցութեան կուսակցութեան... Մոսկուայի կարծիքով, այդ կուսակցութեան անդամները շախախտեցին հետեւին մարդիկ են և կարող են ո՛չ միայն անհասական անարեկում կատարել խորհրդային պարագլուխների գէժ, այլ և Խորհրդային Միութեան և ուրիշ պետութեանների բախտան դէպքում, կարող են, շնորհիւ իրենց քանակի, լաւ կազմակերպութեան և լաւ կապերի հատու գէժը դառնալ հակառակորդի ձեռքին կողմանեան ճակատի վրա: Արպէսզի նման կարեւորութեան առաջն պահու, Գեղեղաի հրատարակեց էր ստացել կազմարձե՛կ Դաշնակցութիւն կուսակցութիւնը, անկասել շարքերը ղեկավարներից և զբաւել խորհուրդների կողմը: Այդ ծրագրին իրագործելու նպատակով մենք Թե՛հրանում մեր կողմը գրասեղից կուսակցութեան հին անդամներից մեկին, Բ.Մ. Աղաբեանին, որ երկու ժամանակ եղել էր Կ.Վ. կողմը, և համոզեցին նրան հայերէն լեզուով մի թերթ հրատարակել: Բ.Մ. Աղաբեանը արձագանքում էր Խոր-

\*) Լլոյշեանը, ինչպէս յայտնի է, արտաբնած է Պարսկաստանից, իրրկ քոյշիկիկամ գործակալ: Այս գրքերից: աղաբէգովը, ապառաջիկաներն ենք միաժամանակ, առէ՛ք քանի բարեխն դաշնակցականներին միջոցով հասնել եպիսկոպոսութեան ու Պարսկաստանի առաջնորդութեան՝ միաժամանակ առաջարկելով իր լրանալուամ ժառանգութիւնները, բայց դաշնակցականները երես չուրին՝ յետ շարունակ մի առաջարկութիւնները: Մոսկուայի մարդիկ այլ կերպ են վարւել. նման գնմանմ սիրէ...

հրրդ . Հայաստանին աջակցելու գաղափարը, իր յօդուածներով կազմալուծում էր դաշնակնքի կուսակցութիւնը և պիտում էր նրանից շարքային անդամներին: Նրա նախկին դիրքն կուսակցութեան մէջ և անձնական հեղինակութիւնը նպաստում էին այն բանին, որ Գաշնակցութեան կուսակցութեան շատ շարքային անդամներ հետեւեցին նրա օրինակին և սկսեցին անցնել խորհրդային իշխանութեան կողմը:

«Ղազարեանը իր «Գաղափար» թերթը հրատարակեց երկու տարւայ ընթացքում: Այդ աշխատանքի համար նա բռնկի պաշտօնի կոչւեց խորհրդային հիւանդանոց, իսկ նրա աղջիկը տեղադրուեց խորհրդային տնտեսական հիմնարկութիւններից մէկի մէջ: Բացի այդ, թերթը խմբագրելու համար նրան վճարում էին ամսական հարիւր դրար:

«Թերթը տարածուում էր ձրի քարոզչական նպատակներով և ամսական 300 դրար վնաս էր հասցնում, ուստի որոշւեց 1927թ. վերջին փակել, մանաւանդ, որ այդ օրերին Ղազարեանի հեղինակութիւնը կուսակցութեան մէջ արդէն ընկել զրօի էր հասել»:

«Հայ հասարակական կարծիքը մշակելուն ծառայում էր Հայաստանի Օղնութեան կոմիտէն («Չօ»), որի ձեպատակին էր նիւթական օժանդակութիւն հասցնելը, բայց աստիճանաբար նրա գործունէութիւնը ստացաւ քաղաքական բնատրուութիւն»:

\*) Պետք է ասել, որ բժ. Ղազարեանը ելլաքէ կուսակցութեան կ.կ.-ի (Բիւրօի) անդամ չի եղել, կազմակերպական պատասխանատու պաշտօններ չի վարել և առանձնապէս մեծ հեղինակութիւն չի վայելել: Դեռ բոլշևիկների մօտ ծառայութեան չմտած և «Գաղափար» յիթը հրատարակել չսկսած նա արդէն հեռացած էր Գաշնակցութեան շարքերից: Ոչ իր յօդուածներով, ոչ էլ «Գաղափար»-ով նա չնպատեց Գաշնակցութեան կազմալուծման և անդամներ չպոկեց կուսակցութիւնից. ամենքը գիտէին, որ նա դրամի համար է աշխատում...

Մենք միայն շնչին մասը առավ բերինք Ազարեանի գրքից, այն, որ անմիջապէս կապ ունի հայ իրականութեան հետ, իսկ ինչքան դեռ հետաքրքրական նիւթեր կան, մանաւանդ Արեւելքի գործերով գրադող մարդու համար: Սուտի, խաբէութեան, կեղծիքի, աղտեղութեան, ոճրագործ արարքների մի ամբողջ աշխարհ է բացւում ընթերցողի առջև:

Այս գիրքը յանձնարարելի է, մանաւանդ, նրանց, ովքեր անկեղծօրէն հաւատում են դեռ, որ խորհրդային իշխանութիւնը մաքուր գաղափարական գործ է կատարում աշխարհում: Այդպիսիներին Ազարեանով պատասխանում է.

«Գեպէտն, որ ստեղծեց 1918-ին, որպէս դասակարգային մարմին բանտրութեան նաճուճները պաշտպանելու համար, այժմ դարձել է վատագոյն տիպի ոստիկանական պահուորդական բաժանումը, որ պաշտպանում է բացառապէս Ստալինի և իր ջիւղի շահերը:

«... Բանտերի և կենտրոնացման վայրերի քանակը յորհրդ. Միութեան մէջ աճում է երկրաչափական համեմատութեամբ ազգաբնակչութեան անձան թւի հետ համեմատած: Արտասահմանեան երկրներում Գեպէտն աշխատում է տարածել լրտեսութեան նոյնպիսի լայն ցանց, որպիսին կայ Ռուսաստանում:

«... Ամէն տարի խորհրդային կառավարութիւնը Գեպէտնին տալիս է արտասահմանեան երկրներում լրտեսութիւն անելու համար ծոտ երեք միլիոն դոլար, որ ձեռք է բերում սոված բանտրի և գիւղացու բերանից խլած և արտասահմանեան շուկաներում ծախած ուտելիքից:

«... Իր նպատակներին հասնելու համար Գեպէտն միլիոնների մէջ խտրութիւն չի դնում:

«... Բանտրական դիկտատորութեան փոխարէն նա այժմ բանտրութիւն խնդող մի մարմին է»:

Հարկ կա՞յ որեւէ բան աւելցնել այս բնորոշման վրա:

Ս. Վր.

**ԲՈՎԱՆԳԱՅՈՒՄ ԻՆ**

Երկու տասնամեակ (Նմադրական) . . . . .	1
Փետրուարեան ապստամբութեան պատճառները . . . . .	4
Ելմտական միջազգ. տագնապը (Մ.Տէրպէտէրեան) . . . . .	8
Վրդական շարումը (Կ. Սասունի) . . . . .	11
Իռլանդիկեան աքաղաղվարում . . . . .	14
Թիւրքիոյ շարք . . . . .	17
Տնտեսական նախաում (Ս.) . . . . .	20
Այնտեղ, ուր սոցիալիզմ են կառուցում . . . . .	24
Ինտերնապիոնալ . . . . .	26
Չեկոսլի խոստովանութիւնները (Ս. Վր.) . . . . .	28

**Վ Տ Ա Ր Ո Ւ Մ**

Աքէնֆի կազմէն Սարգիս Գըլընեան, Միֆայլէլ Բարթիկեան եւ Առաքել Կիրիւնկեան իսպառ վտարւած են Հ. Յ. Գաշնակցութեան շարքերէն, իրենց հակակարգապահական եւ հակակուսակցական արարքներուն պատճառով:

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M S AGOPIAN

5, rue des Gobelins PARIS (13<sup>e</sup>)